Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի

«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՌԿԱ ԲԱԺԻՆ

(ՄԱՍՆԱԳԻՐ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐ)

ԳԱՎԱՌ - 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը.....5
Մասնագիտական կրթական ծրագրի նկարագիրը 6
ՄԱՍ Ի. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 26
ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ 48
1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կառուցվածք49
1.1. Պարտադիր դասընթացներ 49
1.2. Կամընտրական դասընթացներ 64
2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կառուցվածք.....68
2.1. Պարտադիր դասընթացներ 68
2.2. Կամընտրական դասընթացներ 72
3. Ընդհանուր մասնագիտական դասընթացների կառուցվածք.....76
3.1. Պարտադիր դասընթացներ 76
3.2. Կամընտրական դաընթացներ 134
4. Կրթական այլ մոդուլներ.....138
5. Դասընթացների քարտեզագրում.. 143

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սիրելի՛ ուսանողներ,

բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը ձեր կարևոր սահմանադրական իրավունքն է, որի արդյունավետ իրականացումը վճռորոշ նշանակություն ունի յուրաքանչյուրիդ համար:

Ձեր կյանքում անգնահատելի դերակատարություն ունի համալսարանը, որտեղ դուք ձեռք եք բերում անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ, բացահայտում ձեր ներուժը, զինվում արժեքային ճիշտ կողմնորոշումներով, կայանում որպես մասնագետ: Ուստի, դուք պետք է գիտակցաբար ստանձնեք ձեր ուսման պատասխանատվությունը և անվարան քայլեք տեսական ու գործնական խորը գիտելիքներ, օգտակար սոցիալական փորձ, հմտություններ կուտակելու ճանապարհով:

Գավառի պետական համալսարանում գործում է երկաստիճան կրթական համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Ուսումնական գործընթացը թե՛ բակալավրիատում, թե՛ մագիստրատուրայում կազմակերպվում է կրեդիտային չափումներով, կիրառվում են ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու բազմագործոն գնահատման կառուցակարգեր:

2007 թվականից Գավառի պետական համալսարանում ներդրված կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական (ECTS) համակարգի համաձայն՝ ‹‹Իրավագիտություն›› մասնագիտության գծով բակալավրի որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի՝ 240 կրեդիտի կուտակման արդյունքում:

Մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների, իրավագիտության զարգացման արդի միտումների, մասնագիտական միջազգային ասոցիացիաների չափորոշիչների և Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում գործող՝ «Իրավագիտություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի պահանջներին համապատասխան: Ուսումնառության տարիներին ուսանողների աշխարհայացքի ընդլայնումը, ընդհանուր և մասնագիտական պատրաստվածությունն ապահովվում է ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և բնագիտական, ինչպես նաև մասնագիտական դասընթացների շնորհիվ: «Իրավագիտություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները խորացնում են իրենց գիտելիքները ընդհանուր հումանիտար ոլորտներում, զարգացնում օտար լեզուների (անգլերեն, ռուսերեն) իմացությունը, տիրապետում են արդյունավետ հաղորդակցման հմտություններին, արդի թվային տեխնոլոգիաներին, արհեստական բանականության գործիքներին, ձեռք են բերում իրավական գիտելիքներ, ազգային և միջազգային իրավական համակարգերի սկզբունքների ու

առանձնահատկությունների, նորմատիվ իրավական ակտերի, դրանց դրույթների մեկնաբանման, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգերի իմացություն:
Ուսուցումը կազմակերպվում է ժամանակակից կրթական տեխնոլոգիաներով ու մեթոդներով, կարևորվում են կրթության ելքային արդյունքների ձեռքբերումը, այդ նպատակով սովորողների ինքնուրույն հետազոտական աշխատանքների իրականացումը, գործնական, սեմինար պարապմունքների ընթացքում ցուցաբերած ակտիվությունը: Լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների պրակտիկաների կազմակերպմանը, ավարտական աշխատանքների պաշտպանությանը:
«Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի շրջանավարտը կարող է աշխատել ՀՀ իրավապահ մարմիններում, դատական համակարգում, պետական և համայնքային մարմիններում, իրավապաշտպան կառույցներում, ինչպես նաև ուսումը շարունակել հաջորդ կրթական աստիճանում:
Գավառի պետական համալսարանում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ մրցունակ մասնագետներ պատրաստելու համար: Ուստի, սիրելի՛ ուսանողներ, եղե՛ք նպատակասլաց ու աշխատասեր և միշտ հիշե՛ք, որ հաջողության երաշխիքը որակյալ կրթությունն է:

ԳՊՀ ռեկտոր՝ Ռուզաննա Հակոբյան

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագիրը ներառում է դասընթացների նկարագիր, որը նախատեսված է «Իրավագիտություն» մասնագիտությամբ սովորող բակալավրի կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես մասնագիտության ուսումնական ծրագրի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Մասնագիրը ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված կրթական ելքային արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ամփոփիչ ատեստավորման ձևը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի, դասընթացի խնդիրները՝ արտահայտված կրթական ելքային արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նկարագիրը

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Իրավագիտություն / 042101.01.6
2. Բուհը	‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամ
3. Ծրագիրը հավատարմագրված է	-
4. Շնորհվող որակավորումը	Իրավագիտության բակալավր
5. Կրթական աստիճանը	Բակալավր
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա / Հեռակա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա.

- միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն,
- ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ հայոց լեզու կամ օտար լեզու, հայոց պատմություն առարկաներից գրավոր քննությունների արդյունքների հիման վրա:

9. Ավարտելու պահանջները.

Ծրագրի շրջանավարտը պետք է ունենա.

- **240 կրեդիտ, ինչպես նաև հաջողությամբ պաշտպանի ավարտական աշխատանքը:**

Ծրագրի ելքային կրթական արդյունքները ներառում են հետևյալ մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները.

(Գիտելիք) *ունի հիմնարար մասնագիտական գիտելիքներ, պետաիրավական ինստիտուտների, իրավական համակարգի, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգի, պետության իրավական քաղաքականության հիմնական ուղղությունների և սկզբունքների իմացություն,*

(Կարողություն) *կարող է բնութագրել իրավական ինստիտուտները, կազմել իրավական բնույթի փաստաթղթեր, տեսական գիտելիքները կիրառել գործնականում,*

(Հմտություն) *տիրապետում է հասարակական հարաբերությունների տարբեր*

ոլորտներում իրավական կարգավորման ձևերին ու մեթոդներին, իրավական տարբեր խնդիրներ լուծելու, ճիշտ որոշումներ կայացնելու, իրավապահ ոլորտում աշխատելու հմտություններին:

Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում՝ մագիստրատուրայում, ուսումը շարունակելու համար:

10. Ծրագրի նպատակները և խնդիրները

«Իրավագիտություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի նպատակն է պատրաստել իրավագիտության ոլորտում հիմնարար պատրաստվածություն և վերլուծական մտածողություն ունեցող իրավաբաններ, որոնց գործունեությունն ուղղված կլինի իրավական նորմերի պահանջների կատարմանը և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում իրավակարգի ապահովմանը:

Ելնելով բուհի առաքելությունից՝ կրթական ծրագիրն իրականացնում է հետևյալ խնդիրները՝

Կրթություն

1. Ստեղծել համագործակցային միջավայր՝ իրականացնելու իրավաբանի պատրաստման կրթական ծրագրի որակի ապահովման ազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն:
2. Տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ իրավագիտության ոլորտում հիմնարար պատրաստվածություն ձեռք բերելու համար:
3. Ձևավորել իրավաբանին անհրաժեշտ ընդհանրական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:
4. Նպաստել շրջանավարտների մրցունակությանը աշխատաշուկայում և նրա՝ որպես վերլուծական մտածողություն ունեցող հասարակության անդամի ձևավորմանը:
5. Զարգացնել ուսանողների մոտ սովորելու, նորն ընդունելու և անընդհատ կատարելագործվելու հմտություններ:

Հանրային ծառայություն

Նպաստել ուսանողների մասնագիտական որակավորման բարձրացմանը՝ ներգրավելով նրանց իրավաբանական կլինիկայի միջոցով արտաքին

շահակիցներին մատուցվող մասնագիտական ծառայությունների տրամադրման գործընթացին:	
11. Կրթական ծրագրի մասնագիտական իրազեկությունների /կոմպետենցիաների/ շրջանակը	**Ուսումնառության վերջնարդյունքները**
Ա . **Մասնագիտական գիտելիք և իմացություն** Ա 1. Հիմնարար մասնագիտական գիտելիքներ. 1) Իրավագիտության տեսության և պրակտիկայի հիմնադրույթների, իրավական հիմնարար սկզբունքների և արժեքների, 2) Հայաստանի և այլ երկրների պետության և իրավունքի պատմության, իրավական համակարգի կառուցվածքի և գործառույթների, դրա և քաղաքական ու տնտեսական համակարգերի փոխազդեցության, և մարդու իրավունքների վերաբերյալ հասկացությունների, ներառյալ՝ եվրոպական և միջազգային իրավական չափանիշների (այդ թվում՝ ինստիտուտների և ընթացակարգերի) իմացություն:	1. Ունի հիմնարար գիտելիքներ ընդհանուր տեսական-պատմական, ճյուղային, հատուկ իրավաբանական գիտությունների և այլ անհրաժեշտ ոլորտներին առնչվող տեսությունների ու սկզբունքների, ինչպես նաև առկա իրավական դպրոցների և ուսմունքների, իրավական համակարգի, դատական և վարչական պրակտիկայի, համապատասխան (ներպետական և միջազգային) իրավական ակտերի՝ ներառյալ մասնագիտացման ոլորտի վերաբերյալ: 2. **Կարող է** կիրառել մասնագիտական գիտելիքներն առավել հաճախ հանդիպող իրավական խնդիրների լուծման համար:
Ա 2. Իրավաբանական տերմինաբանության և տեխնիկայի տիրապետում:	3. **Գիտի** իրավաբանական հիմնական եզրույթներն ու կատեգորիաները: **Կարող է** օգտագործել իրավաբանական եզրույթները և իրավաբանական տեխնիկայի կանոնները բանավոր և գրավոր խոսքում: **Տիրապետում է** իրավաբանական տերմինաբանությանը:
Ա 3. Իրավունքի հիմնական ճյուղերի, դրանց սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության և էության, այդ ինստիտուտների և նորմերի օրենսդրական ամրագրման և կիրառման գործընթացի իմացություն: Իրավաստեղծ գործունեություն. մասնակցություն	4. **Գիտի** ՀՀ օրենսդրության համակարգը, իրավունքի հիմնական ճյուղերը, միջազգային և եվրոպական իրավունքի առանցքային ինստիտուները, հիմնարար սկզբունքներն ու արժեքները, իրավաստեղծության հասկացությունը և փուլերը: **Կարող է** ընկալել իրավաստեղծ գործունեության

մասնագիտական գործունեության ոլորտին համապատասխան նորմատիվ և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին:	օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, մասնակցել նորմատիվ և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը: **Տիրապետում է** իրավական փաստաթղթերը ճիշտ կազմելու և իրավանորմեր ձևակերպելու հմտություններին:
Ա 4. Իրավակիրառ գործունեություն ա. Մասնագիտական գործունեության ընթացքում նորմատիվ իրավական ակտեր կիրառել, նյութական և ընթացակարգային իրավունքի նորմեր իրացնել, ինքնուրույն մշակել իրավական փաստաթղթեր:	**4.ա. Գիտի** իրավական նորմերի համակարգը, կառուցվածքը և տեսակները, իրավունքի աղբյուրների տեսակները, իրավունքի կիրառման փուլերը: **Կարող է** իրականացնել նորմատիվ իրավական ակտերի իրավական փորձաքննություն, ստեղծել իրավակիրառ ակտերի նախագծեր:
բ. Փաստերն ու հանգամանքները վերլուծել, իրավաբանորեն ճիշտ որակել, իրավական նորմերն ու պայմանագրերը մեկնաբանել:	**բ. Գիտի** իրավաբանական փաստերի հասկացությունը և տեսակները: **Կարող է** բացահայտել իրավաբանորեն էական նշանակություն ունեցող փաստացի տվյալներն ու հանգամանքները, բացահայտված փաստերին ու հանգամանքներին տալ իրավական որակում: **Տիրապետում է** մասնագիտական գործունեության օբյեկտ հանդիսացող տարբեր իրավական երևույթների, իրավաբանական փաստերի, իրավական նորմերի և իրավահարաբերությունների վերլուծության հմտություններին:
գ. Հիմնավորված իրավական որոշումներ ընդունել և գործող օրենսդրության պահանջներին համապատասխան իրավական գործողություններ կատարել:	գ. **Գիտի** իրավական նորմերի իրացման հասկացությունն ու միջոցները, իրավական կարգավորման կառուցակարգը (մեխանիզմը): **Կարող է** բացահայտել լուծում պահանջող իրավական գործի փաստացի հանգամանքները, ընտրել այն իրավական նորմերը, որոնք ենթակա են կիրառման իրավական հիմնավորված որոշում կայացնելու համար: **Տիրապետում է** իրավակիրառ և իրավապաշտպան պրակտիկայի վերլուծության, իրավական խնդիրների

դ. Օրենսդրության և նախադեպերի կիրառում:	լուծման, նյութական և դատավարական նորմերի իրացման հմտություններին: դ. **Տիրապետում է** համապատասխան ոլորտի օրենսդրության համակարգը կազմող իրավական ակտերի, միջազգային փաստաթղթերի և նախադեպերի հետ աշխատելու, դրանք ՀՀ օրենսդրության հետ համադրելու, վերլուծելու, մեկնաբանելու և կիրառելու հմտություններին:
Ա 5. *Իրավապաշտպան գործունեություն* ա. Օրինականության և իրավակարգի, անձի, հասարակության, պետության անվտանգության ապահովմանն ուղղված մասնագիտական գործառույթների և պաշտոնական պարտականությունների պատշաճ կատարում: Մասնագիտական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ոլորտների, ինչպես նաև՝ մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոնների իմացություն: բ. Ապահովել իրավունքի գերակայությունը, հարգել անձի պատիվն ու արժանապատվությունը, պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները:	**5.** ա. Գիտի • իրավապահ մարմինների հասկացությունը և տեսակները, մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոնների և կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմները, օրինականության հասկացությունը և հիմնական սկզբունքները, օրինականության և իրավակարգի ապահովման նպատակով իրացվող դատավարական նորմերը: **Կարող է** • բացահայտել օրինականության և իրավակարգի խախտման դեպքերը, դրանց պահպանման նպատակով կիրառել դատավարական իրավունքի նորմեր: բ. **Գիտի** • իրավունքի և օրենքի գերակայության սկզբունքի հասկացությունն ու էությունը, դերն ու նշանակությունը, մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային իրավական միջոցները: **Կարող է** • դրսևորել անհանդուրժողական վերաբերմունք մարդու իրավունքների խախտման, խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ

գ. Կանխարգելել հանցագործությունները և այլ իրավախախտումները, բացահայտել և բնութագրել դրանց իրականացմանը նպաստող պատճառներն ու պայմանները:	նվաստացնող վերաբերմունքի նկատմամբ: Տիրապետում է մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ միջոցների կիրառման հմտություններին: գ. **Գիտի** • իրավախախտումների հասկացությունը, հատկանիշներն ու տեսակները, • իրավաբանական պատասխանատվության հասկացությունն ու տեսակները, • անձի իրավական կարգավիճակը, • հանցագործությունների բացահայտման և քննության կազմակերպման ձևերն ու մեթոդները, • հանցագործությունների առանձին տեսակների բացահայտման մեթոդիկաները, • կրիմինալիստիկական տեխնիկայի միջոցներն ու մեթոդները, քննչական գործողությունների իրականացման տակտիկան: **Կարող է** • մշակել իրավախախտումների կանխարգելման միջոցառումներ՝ հաշվի առնելով իրավախախտների առանձնահատկությունները, իրականացնել արդյունավետ միջոցառումներ իրավախախտումների կանխարգելման նպատակով, • կիրառել կրիմինալիստիկական տեխնիկայի միջոցներն ու մեթոդները, դատական փորձաքննություն նշանակելիս և նախնական ուսումնասիրություններ իրականացնելիս առաջադրել լուծման ենթակա ճիշտ հարցեր, գնահատել փորձագետի եզրակացության բովանդակությունը: Տիրապետում է • տարբեր իրավախախտումների որակման

	և դրանց տարանջատման հիմունքներին ու մեթոդաբանությանը, հետքեր և իրեղեն ապացույցներ հայտնաբերելու, ամրագրելու և վերցնելու նպատակով տեխնիկական միջոցների և մեթոդների կիրառման հմտություններին:
Ա 6. Փորձագիտական-խորհրդատվական գործունեություն ա. վերլուծել և մեկնաբանել ներպետական օրենսդրությունը, ինչպես նաև միջազգային իրավական սկզբունքներն ու նորմերը, լուծել իրավական տարբեր բնույթի վեճեր: բ. Կազմել որակյալ իրավաբանական եզրակացություն և տրամադրել խորհրդատվություն իրավաբանական գործունեության կոնկրետ բնագավառներում	**6. ա.Գիտի** • նյութական և դատավարական իրավունքի տարբեր ճյուղերով կարգավորվող առկա իրավահարաբերությունների առանձնահատկությունները, • իրավունքի նորմերի մեկնաբանման միջոցներն ու տեսակները: **Կարող է** • մասնագիտորեն ճիշտ և գրագետ մեկնաբանել իրավունքի նորմերը: **բ. Կարող է.** տալ որակյալ իրավաբանական եզրակացություններ և իրավական խորհրդատվություն:
Ա 7. Մասնագիտական գործունեության ընթացքում ուսումնասիրման (ընդհանուր և հատուկ) մեթոդների կիրառում	**Գիտի** • հումանիտար գիտությունների հիմնական հասկացությունները, նրանց կապը իրավագիտության հետ: **Տիրապետում է** • տարբեր աշխարհայացքների տիպերի փիլիսոփայական վերլուծության, արդի հասարակության զարգացման միտումների, իրավական վերլուծությունների համար տարբեր փիլիսոփայական մեթոդների օգտագործման հմտություններին:

Բ. ***Կրթական ծրագրի գործնական մասնագիտական կոմպետենցիաների շրջանակը***	***Ուսումնառության վերջնարդյունքները***
Բ 1. Գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն	**1. Գիտի** մասնագիտական գործունեության բնագավառում առաջացող գործնական իրավիճակների տեսակները և դրանց առանձնահատկությունները: **Կարող է** կիրառել ունեցած տեսական գիտելիքները գործնական իրավիճակներում առաջացած խնդիրները լուծելու համար:
Բ 2. Վերլուծական (քննադատական) մտածողություն և խնդիրների լուծում. իրավական խնդիրները (կոնֆլիկտները) բացահայտելու և ձևակերպելու, վերլուծելու և սինթեզելու, փաստարկներ առաջադրելու և գնահատելու, լուծումներ առաջարկելու կարողություն:	**2. Գիտի** իրավական խնդիրների (կոնֆլիկտների) ծագման պատճառները և դրանց լուծման միջոցները:
Բ 3. Իրավաբանական թեմաներով ինքնուրույն հետազոտական, անհատական, կուրսային աշխատանքների պատրաստում:	**3. Կարող է** ուսումնառության, պրակտիկայի, ինքնուրույն հետազոտական, անհատական աշխատանքների, համապատասխան իրավական փաստաթղթերի ու նորմատիվ-իրավական ակտերի ուսումնասիրման ընթացքում ստացված գիտելիքների հիման վրա լուծել կոնկրետ գործնական իրավական խնդիրներ, անել հիմնավորված և տրամաբանված եզրակացություններ, առաջարկել խնդրի (կոնֆլիկտի) լուծման մեխանիզմներ՝ ելնելով կողմերի շահերից: **Տիրապետում է** իրավաբանական թեմաներով վերլուծություն կատարելու մեթոդներին, վերացական մտածողության հնարքները և միջոցները գործնականում կիրառելու, անարբեր իրավական աղբյուրներից ստացված տեղեկատվությունը օգտագործելու

	հմտություններին:
Գ. ***Կրթական ծրագրի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակը*** Գ 1. Գրագետ ու փաստարկված գրավոր և բանավոր խոսք հայերեն և օտար լեզուներով. իրավական եզրույթների և համապատասխան իրավական նորմերի օգտագործում՝ մտքերը սահուն ձևով արտահայտելու, հիմնավորված եզրակացություններ, դատողություններ անելու և դրանք բանավոր ոը գրավոր ձևերով պատշաճ ներկայացնելու կարողություն: Գ 2. Առաջնորդություն, թիմային աշխատանք և	***Ուսումնառության վերջնարդյունքները*** **1. Կարող է** • գրավոր և բանավոր ներկայացնել հասարակ տեքստեր և ցուցադրություններ, ինչպես նաև առավել բարդ և գիտական տեքստեր՝ օգտագործելով հաղորդակցման տարբեր հմտություններ: • ամփոփել և իրավունքի համապատասխան խնդրահարույց հարցերի վերաբերյալ ներկայացնել գրավոր և բանավոր դիրքորոշումներ, պարզ և հստակ խորհրդատվություն տրամադրել իրավական գիտելիքներ չունեցող շահագրգիռ կողմերին՝ համապատասխան իրավունքի ճյուղի, նրա կարգավորման բնագավառի և իրավական վիճակի վերաբերյալ, • հաղորդակցվել առնվազն մեկ մասնագիտական օտար լեզվով, • կազմել և թարգմանել տեքստեր մասնագիտական թեմայի շուրջ, ունենալ հաղորդակցվելու ունակություն: **Տիրապետում է** • մասնագիտության համապատասխան ոլորտում կիրառվող եզրույթներին և հասկացություններին:

պատասխանատվություն. թիմում ներդրում ունենալու և աշխատելու, միջառարկայական համագործակցություն իրականացնելու և այլ մասնագիտական բնագավառների ներկայացուցիչների հետ որպես փորձագետ աշխատելու, աշխատանքի համար պատասխանատվություն ստանձնելու կարողություն:	**2. Գիտի** թիմում աշխատելու հիմնական սկզբունքները: **Կարող է** • արդյունավետորեն կատարել որոշակի գործառույթներ թիմում, հանդես գալ նախաձեռնություններով, մասնակցել ընդհանուր թիմային որոշման կայացմանը, ստանձնել և կատարել առաջադրանքներ: • տրամադրել խորհրդատվական-իրավական օգնություն թիմի անդամներին:
Գ 3. Համակարգչային հմտություններ և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում. մասնագիտական ոլորտում աշխատանքները դյուրացնելու, արագացնելու և խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու, տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվություն որոնելու, մշակելու և վերլուծելու կարողություն, մտածողության մաթեմատիկական-տրամաբանական մեթոդներով իրավական խնդիրներ լուծելու կարողություն:	**3.Գիտի** • տեղեկատվության ստացման, պահպանման և վերամշակման հիմնական մեթոդները, միջոցներն ու եղանակները. • իրավական տեղեկատվության որոնման հնարքները: **Կարող է** • հավաքել, մշակել և մեկնաբանել իրավական նորմերի իրացման համար նշանակություն ունեցող նորմատիվ և փաստական տեղեկատվություն, իրավական հիմնախնդիրներին վերաբերող քանակական և որակական տվյալներ՝ հիմնավորված դատողություններ անելու համար, • իր գործունեության ընթացքում կիրառել ՏՀՏ-ներ և այլ մասնագիտական գործիքներ՝ իրավական խնդիրների լուծումն ապահովելու համար՝ կիրառելով մտածողության մաթեմատիկական-տրամաբանական մեթոդներ: **Տիրապետում է** • համակարգչից ազատորեն օգտվելու, հայտնի ծրագրային փաթեթներ (Word, Excel, PPT, Internet, էլեկտրոնային որոնման և վերլուծման գործիքներ) օգտագործելու, էլեկտրոնային գրադարանային համակարգերից և տվյալների բազաներից, իրավական հիմնական

	տեղեկատվական համակարգերից օգտվելու հմտություններին:
4. Ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական դասընթաների հիմնական դրույթները՝ օգտագործելով հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսել և բանավիճել:	**4.Գիտի** հումանիտար, բնագիտական և տնտեսագիտական գիտությունների ոլորտներում կիրառվող ընդհանուր հասկացությունները, սահմանումները, Կարող է • դրսևորել քննական և փաստարկված վերլուծական մոտեցում՝ իրավական խնդիրները բացահայտելու և դրանց լուծման ուղիները մշակելու ու ներկայացնելու համար, • մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս՝ ցուցաբերել նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում: **Տիրապետում է** դրանց ուսումնասիրության մեթոդներին ու մոտեցումներին:
Գ 5. Արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն և անհրաժեշտության դեպքում 1-ին բուժօգնության ցուցաբերում, ֆիզիկական կուլտուրայի նորմերին տիրապետում:	• **Գիտի** արտակարգ իրավիճակներում անվտանգ վարվելակերպը և բնակչության պաշտպանության հիմունքները, **Տիրապետում է** անհատական պաշտպանության միջոցների կիրառման սկզբունքներին, կոլեկտիվ պաշտպանության հիմունքներին և արտակարգ իրավիճակներում շտապ բժշկական օգնության կազմակերպման ձևերին ու եղանակներին: **6.Կարող է** ինքնուրույն պլանավորել և կազմակերպել աշխատանքը, նպատակաուղղված շարունակել ուսումնառությունը, պարբերաբար բարձրացնել

Գ 6. Շարունակական կրթություն. ինքնուրույն սովորելու կազմակերպական կարողություն	մասնագիտական որակավորումը, ուսումնասիրել օրենսդրությունը, դրա փոփոխությունները և կիրառման պրակտիկան, մասնագիտական գրականությունը, բարելավել մասնագիտական գործունեությունը և ինտեգրվել աշխատանքային միջավայրի փոփոխվող պահանջներին, • անձնական օրինակով նպաստելու իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Տիրապետում է՝ • բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում՝ մագիստրատուրայում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

12. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԳՊՀ-ում իրականացվում է ուսանողակենտրոն ուսուցում, ուսումնական ծրագրի իրականացման ընթացքում կիրառվում են դասավանդման ինտերակտիվ՝ փոխներգործուն մեթոդներ, որոնք օգնում են հասնել ուսումնական ծրագրի նպատակներին: Դասախոսներն առաջնորդվում են հետևյալ մեթոդներով՝

Բովանդակային ուսուցում/դասախոսություն (ուսանողներին ներկայացվում են հիմնարար գիտելիքներ ընդհանուր տեսական-պատմական, ճյուղային, հատուկ իրավաբանական գիտությունների և այլ անհրաժեշտ ոլորտներին առնչվող տեսությունների ու սկզբունքների, իրավագիտական դպրոցների և ուսմունքների, դատական, իրավակիրառ պրակտիկայի և համապատասխան իրավական ակտերի վերաբերյալ):

Մասնագիտական գրականության ընթերցում և քննարկում (գիտաճյուղերի և ուղղությունների, ինչպես նաև ներկայացված նյութերի համեմատական ուսումնասիրություն, քննադատական գնահատում, դրա հիման վրա համեմատական վերլուծություն, քննարկում և ամփոփում):

Աշխատանքային խմբերի սեմինարներ (դասավանդման ակտիվ մեթոդներ, որոնք ներառում են՝ աշխատանք խմբերում, քննարկումներ, բանավեճեր՝ դիրքորոշումների և փաստարկների ձևակերպում

և ներկայացում):

Համագործակցային ուսումնառություն (նորարարական մանկավարժական մեթոդ, որը խրախուսում է ուսանողին ակտիվ սովորել և կառուցողական համագործակցություն իրականացնել փոքր և մեծ խմբերում, նպաստում է վերլուծական և քննադատական մտածելակերպի ձևավորմանը, զարգացնում է թիմում աշխատելու, ժամանակը կառավարելու հմտություններ):

Դեպքերի ուսումնասիրման մեթոդ (ուսանողներին ներկայացվում են կարևոր իրադարձությունների/դեպքերի նկարագրություններ, մասնագիտական աշխատանքային իրավիճակներ: Նյութը ներկայացվում է չեզոք տեսանկյունից, առանց մեկնաբանությունների և գնահատման: Ուսանողներին առաջարկվում է վերլուծել իրավիճակը/գործը անհատապես կամ խմբով գրավոր կամ բանավոր ձևով: Կազմակերպվում է իրավիճակի/գործի համատեղ քննարկում: Սույն մեթոդը թույլ է տալիս զարգացնել խնդիրների/պրոբլեմների լուծման և որոշումների կայացման կարողություններ):

Դատախաղի մեթոդ (ուսանողներին առաջարկվում է համապատասխան առարկայի շրջանակներում կոնկրետ դատական գործով պատրաստել փաստարկներ/հակափաստարկներ և իրականացնել դատաքննության նմանակում, որի ընթացքում ուսանողները ներկայացնում են իրենց դիրքորոշումները):

Քննարկումներ համապատասխան ոլորտի իրավունքի առաջատար մասնագետների հետ, հրավիրելով վերջիններիս՝ դասախոսություններից ստացած տեսական գիտելիքները շաղկապելու պրակտիկայի հետ և մղելու ուսանողներին՝ ընտրել համապատասխան ոլորտում աշխատանք և ունենալ ծառայողական առաջխաղացում (կարիերա)՝ հաջողված պատմությունների/օրինակների միջոցով:

Տեսական գիտելիքների կիրառում համալսարանի իրավաբանական կլինիկայում, ինչպես նաև իրավապահ մարմիններում, համապատասխան կառույցներում և կազմակերպություններում պրակտիկա անցնելու միջոցով: Դասերի ընթացքում նախատեսված թեմաների շրջանակներում նյութա-իրավական, դատավարական փաստաթղթերի, իրավական ակտերի նախագծերի կազմում:

Վերլուծական աշխատանք/քննադատական մտածողություն (դատական և վարչական նախադեպերի ուսումնասիրություն, իրավակիրառ, դատական պրակտիկայի, վիճակագրական նյութերի վերլուծություն, տրամաբանական-վերլուծական կարողությունները զարգացնող այլ առաջադրանքների

կատարում):

Ուսանողների ինքնուրույն աշխատանք: Ծրագիրը հիմնվում է լայն գործիքակազմի վրա, ինչը մղում է ուսանողներին իրականացնել ինքնուրույն աշխատանքներ և ապահովել արդյունավետ հետադարձ կապ դասախոսների հետ (առկա և էլեկտրոնային հաղորդակցություն), կատարել հետազոտություններ, որոնք օգնում են ուսանողին ինքնուրույն ծանոթանալ իրավական ակտերին և իրավապահ մարմինների, դատարանների իրավասություններին, վերլուծել դրանք, փնտրել առաջադրված հարցերի և խնդիրների պատասխանները, պատրաստվեն սեմինարներին, դասախոսություններին և արդյունքների գնահատման այլ ձևերին /միջանկյալ, ամփոփիչ քննություններ/ ու պրակտիկ աշխատանքին):

13.ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մասնագիտական գիտելիքների և իմացության գնահատման մեթոդները

Ուսանողների Ա1-Ա7 գիտելիքները և իմացությունը գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ.
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում
- ակտիվության գնահատում
- ստուգարքներ
- ավարտական աշխատանքի պաշտպանություն:

Գործնական մասնագիտական կարողությունների գնահատման մեթոդները

Ուսանողների Բ1-Բ3 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ.
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում
- ակտիվության գնահատում
- ստուգարքներ
- ավարտական աշխատանքի պաշտպանություն:

Ընդհանրական (փոխանցելի) կարողությունների գնահատման մեթոդները.

Ուսանողների Գ1-Գ6 ընդհանրական /փոխանցելի/ կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ.
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում
- ակտիվության գնահատում
- ստուգարքներ:

14. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնելու համար համալսարանն ունի համապատասխան նյութատեխնիկական բազա՝ սովորողների առարկայական և միջառարկայական պատրաստությունը, լաբորատոր, գործնական և հետազոտական աշխատանքներն ապահովելու համար:

Բակալավրական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ցանկն ընդգրկում է ՝

- ուսումնական լսարաններ՝ կահավորված մուլտիմեդիական ցուցադրական համալիրներով,
- համակարգչային լսարան՝ գլոբալ որոնողական համակարգերից օգտվելու հնարավորությամբ,
- ուսումնամեթոդական կաբինետներ,
- իրավաբանական կլինիկա,
- կրիմինալիստիկայի լաբորատորիա,
- էլեկտրոնային հրատարակումներ օգտագործելու դեպքում՝ այդ բազայից օգտվելու հնարավորություն:

Ուսումնական գործընթացի տեղեկատվական և ուսումնամեթոդական ապահովմանը ներկայացվող պահանջներ

- ՄԿԾ-ով նախատեսված բոլոր ուսումնական դասընթացները, դրանց մոդուլները ապահովված են ուսումնամեթոդական փաստաթղթերով և նյութերով:
- Սովորողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի իրականացումը պետք է զուգորդվի մեթոդական ապահովմամբ և ծախսված ժամանակի հիմնավորմամբ:
- ՄԿԾ-ի իրականացումը յուրաքանչյուր սովորողի թույլատրում է մուտք գործել տվյալների բազա,

գրադարանային ֆոնդեր, ստանալ տեղեկատվություն և խորհրդատվություն:

- Գրադարանային ֆոնդը պետք է համալրված լինի ոչ միայն մասնագիտական, այլ նաև հումանիտար, սոցիալական և տնտեսական դասընթացներին համապատասխան տպագիր և/կամ էլեկտրոնային հրատարակություններով:

15. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

‹‹Իրավագիտություն›› մասնագիտական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավաժական կադրերով, ովքեր ունեն դասավանդվող առարկային համապատասխանող մասնագիտական բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում) և իրականացնում են գիտական կամ գիտամանկավարժական, գիտամեթոդական գործունեություն:

Մասնագիտական դասընթացների ուսումնական գործընթացը ապահովող դասավանդողների առնվազն 30%-ը պետք է ունենան գիտական աստիճան և /կամ/ կոչում: Կրթական գործընթացի մեջ կարող են ընդգրկվել նաև դասախոսներ՝ պրակտիկաների բազային մարմինների, ՀՀ իրավապահ կառույցների, մասնագիտական կազմակերպությունների, գիտահետազոտական հաստատությունների համակազմից:

«Իրավագիտության» կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմը պետք է ունենա հետևյալ բնութագրերը.

Մասնագետի բնութագիր.

Անձնային որակներ.

1. Տարբեր իրավիճակներում ինքնադրսևորվելու, ուսումնական գործընթացում հնարավոր խնդրահարույց իրավիճակները հարթելու, ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության և պատշաճ վարվեցողության նորմեր ձևավորելու, ուսումնառողների գիտելիքներն ու ներուժը օբյեկտիվ գնահատելու կարողություններ:

Մանկավարժական որակներ.

1. Մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կիրառում, ՀՀ գործող օրենսդրական փաստաթղթերի իմացություն և դրանց ներկայացման, մեկնաբանման,

վերլուծության կարողություն, ուսանողների ստեղծագործական, վերլուծական, քննադատական մտածողության զարգացում, սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու հմտություն, մանկավարժական տարբեր մեթոդների, հնարների համադրում, անհատական և խմբային աշխատանքի կազմակերպում, ուսումնառողների սովորելու դրդապատճառների ձևավորում և խթանում, դասավանդման նպատակների և խնդիրների ձևակերպման կարողություն, դասընթացի ծրագրի կազմման և մշակման կարողություն:

Կազմակերպչական բնութագիր.

1. Ուսուցման լավագույն ձևերի ու մեթոդների ընտրության, սուբյեկտների միջև փոխգործակցության մոդելավորման կարողություն,
2. Վերահսկողության, գնահատման գործընթացների մոդելավորման կարողություն,
3. Անհրաժեշտ ուսումնական միջավայր ձևավորելու և ծրագրերը արդյունավետորեն իրականացնելու կարողություն,
4. Ժամանակի ճիշտ պլանավորման և կառավարման կարողություն:

Հաղորդակցական հմտություններ.

1. Խոսքի բարձր մշակույթի դրսևորում, օտար լեզուների իմացություն,
2. Մանկավարժական հաղորդակցման մշակույթի զարգացում:

Համակարգչային ծրագրերի իմացություն

1. Համակարգչային ծրագրերի ազատ տիրապետում և դասավանդման գործընթացում դրանք կիրառելու հմտություն:

Դասախոսի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները.

1. **իմանա** դասավանդած առարկան, համապատասխան գիտակարգը, ՀՀ պետահիրավական վերնաշենքի կառուցվածքը, կազմավորման և գործունեության սկզբունքները, ՀՀ սահմանադրական կարգի հիմունքները, օրենսդրության համակարգը, իրավունքի հիմնական ճյուղերը, միջազգային և եվրոպական իրավունքի առանցքային ինստիտուները, իրավաստեղծման հասկացությունը և փուլերը, իրավունքի տարբեր ոլորտներին առնչվող տեսություններն ու սկզբունքները, ինչպես նաև առկա իրավական դպրոցների և ուսմունքների, դատական և վարչական պրակտիկայի համապատասխան իրավական ակտերը, մասնագիտացման ոլորտի առանձնահատկություններն ու հիմնախնդիրները,

2. **կարողանա** աշխատել նորմատիվ իրավական ակտերով, մեկնաբանել իրավական նորմերն ու սկզբունքները, բացահայտել ՀՀ օրենսդրության մեջ առկա բացերն ու հակասությունները, առաջարկներ ներկայացնել բացերի լրացման ուղղությամբ, իրավական գիտելիքներ հաղորդել դասավանդման արդի մեթոդներով, կազմակերպել և համակարգել մասնագիտական ուսուցման գործընթացի բոլոր փուլերը, վերլուծել ուսուցման գործընթացի արդյունքները, զարգացնել մասնագիտական և մանկավարժական հմտությունները,
3. **տիրապետի** մասնագիտական ու մանկավարժական գիտելիքները խորացնելու հմտություններին, մասնագիտական ուսումնասիրման առարկա հանդիսացող տարբեր իրավական երևույթների, իրավաբանական փաստերի, իրավական նորմերի և իրավահարաբերությունների վերլուծության հմտություններին, հետազոտության, ուսուցման և գնահատման մեթոդներին, տվյալ ուսուցման ձևի կազմակերպման համար անհրաժեշտ իրազեկություններին (կոմպետենցիաներին):

16. ՍՈՎՈՐՈՂԻ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրավագիտության բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու՝

- մագիստրատուրայում՝ ստանալու իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան,
- ստանալու բակալավրի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով,
- ասպիրանտուրայում (մագիստրոսի որակավորում ստանալուց հետո)՝ ստանալով հետազոտողի որակավորում (գիտությունների թեկնածուի գիտական աստիճան):

17. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Իրավագիտությունե կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել որպես իրավունքի բնագավառի մասնագետ՝ քննիչ, դատախազ, փաստաբան, դատավոր, նոտար, քաղաքացիական/ հանրային ծառայող, իրավախորհրդատու մասնավոր ընկերություններում, կարող են զբաղեցնել այլ պաշտոններ իրավապահ մարմիններում, պետական կառավարման համակարգում, տեղական ինքնակառավարման մարմիններում:

18. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Գավառի պետական համալսարանում իրականացվող «Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի կայունությանը նպաստող գործոններն են դիմորդների շրջանում ‹‹Իրավագիտություն›› մասնագիտության նկատմամբ եղած պահանջարկը, հանրապետական և մարզային իրավապահ մարմիններում աշխատատելու հնարավորությունը, ԳՊՀ շրջանավարտների՝ իրավապահ մարմիններում աշխատելու փորձը, գործատուներից ստացված դրական կարծիքները, ԳՊՀ գործընկեր եվրոպական բուհերում իրավաբան ուսանողների սովորելու հնարավորությունը, համալսարանի առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում ‹‹Իրավագիտություն›› մասնագիտական կրթական ծրագրի իրականացումը, բակալավրի որակավորմամբ իրավաբանների՝ մագիստրատուրայի կրթական աստիճանում սովորելու հնարավորությունը, բուհի իրավագիտության ամբիոնի կադրային համալրվածությունը, իրավապահ ոլորտի պրակտիկ մասնագետներին ուսումնական գործընթացի մեջ ներգրավումը, ‹‹Իրավագիտություն›› մասնագիտական կրթական ծրագրով սովորողների համար պրակտիկայի բազայի առկայությունը՝ իրավապահ և դատական մարմիններում, ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության բաժնի շրջանավարտներին համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելվածի տրամադրումը, իրավաբան մասնագետներին գործատուների կողմից ներկայացվող պահանջների և կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանեցման շարունակական աշխատանքը, ՀՀ Սահմանադրության, օրենքների փոփոխություններին համապատասխան կրթական ծրագրի բովանդակության վերանայումն ու արդիականացումը, ԳՊՀ-ում իրավաբանական կլինիկայի առկայությունը, ԳՊՀ-ում էլեկտրոնային ուսուցման՝ ‹‹Learn.GSU›› համակարգի, էլեկտրոնային գրադարանի՝ ‹‹E-Library.GSU›› առկայությունը:

Միաժամանակ, կրթական ծրագիրը զերծ չէ ռիսկայնությունից: Բացասական գործոններ են ‹‹Իրավագիտություն›› մասնագիտության գծով պետպատվեր (անվճար) տեղերի բացակայությունը, իրավագիտության բաժնի համեմատաբար բարձր ուսման վարձավճարը, ուսանողների միջև փոխատեղման (ռոտացիայի) մրցույթի հնարավորության բացակայությունը, որոշ հովանավոր կազմակերպությունների կողմից իրավագիտության բաժնի ուսանողներին չֆինանսավորելը, ‹‹Իրավագիտություն›› մասնագիտական կրթական ծրագրի՝ օտար լեզվով մշակված չլինելը, ‹‹Իրավագիտություն›› մասնագիտության գծով ԳՊՀ-ում ասպիրանտուրայի

բացակայությունը:

Ծրագրի կայունությանը սպառնում են ՀՀ Գեղարքունիքի մարզի ժողովրդագրական բացասական միտումները, աճող արտագաղթը, ուսանողների մեծ մասի ընտանիքների սոցիալական անապահով վիճակը, ուսման վարձը վճարելու դժվարությունները, դիմորդների թվի զգալի նվազումը, ‹‹Իրավագիտություն›› բաժնի ուսանողների՝ եվրոպական ծրագրերին մասնակցելու համար անհրաժեշտ օտար լեզվի իմացության ցածր մակարդակը, իրավապահ մարմինների աշխատակազմի սահմանափակ թիվը:

‹‹Իրավագիտություն›› մասնագիտական կրթական ծրագրի ռիսկայնությունը հաղթահարելու և կայունությունը ապահովելու միջոցներ ենք համարում ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցումը ԳՊՀ-ի և տարբեր հիմնադրամների կողմից, բուհի իրավաբանական կլինիկայի գործունեության արդյունավետության բարձրացումը, ուսանողների համար կազմակերպվող օտար լեզվի լրացական դասընթացները, ամառային և ձմեռային դպրոցները, ՏՀՏ-ների և արհեստական բանականության գործիքների ընձեռած հնարավորությունների օգտագործումը, հեռավար դասերի անցկացումը, օգտակար էլեկտրոնային պաշարների օգտագործումը, վեբինարներին ուսանողների մասնակցությունը, ‹‹Իրավագիտություն›› մասնագիտական կրթական ծրագրի բարելավման նպատակով համադրական վերլուծության /բենչմարքինգի/ իրականացումը:

ՄԱՍ Ի. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները

Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման, արժևորման, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

Կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգը (ECTS) միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը մեկ ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

ECTS համակարգի կարևոր հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ ենթակա բոլոր բաղկացուցիչներին. դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային, ավարտական և այլ աշխատանքներին,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են վաղօրոք (տպագրվում և/կամ տեղադրվում են ԳՊՀ կայքէջում):

ECTS կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

ECTS կրեդիտի կարևոր հատկանիշներն են.

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական

աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, ինքնուրույն հետազոտական աշխատանքը և այլն,

- կրեդիտը չափում է ուսանողի ուսումնական բեռնվածքը և նրա ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և բակալավրի կրթական ծրագրի աշխատածավալը

ԳՊՀ-ում բակալավրի կրթական աստիճանում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:

1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 30-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Կիսամյակը բաղկացած է 20 շաբաթից, որից 15 շաբաթը հատկացվում է ուսումնական լսարանային պարապմունքներին, 1 շաբաթը՝ առաջին միջանկյալ քննությանը, 1 շաբաթը՝ երկրորդ միջանկյալ քննությանը և ստուգարքներին, իսկ 3 շաբաթը նախատեսված է գիտելիքների ամփոփիչ ստուգման և վերջնական գնահատականի ձևավորման համար:

Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ ծանրաբեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1.5 ակադեմիական կրեդիտի:

Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 28-34 ժամ:

Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:

Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է:

3.Դասընթացները և կրթական մոդուլները

Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով:

Մեծածավալ դասընթացները բաժանված են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց յուրացման բնույթով բաժանվում են 2 հիմնական խմբի՝

բ) պարտադիր դասընթացներ՝ ամրագրված որոշակի կիսամյակներում,

ա) կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ՝ ազատ:

4. Բակալավրի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները

4.1. Ուսումնական ծրագիրը

Բակալավրի ուսումնական ծրագիրը ներառում է երեք հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ:

Ծրագրի ընդհանուր կառուցվածքը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 1

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական պարտադիր կամընտրական	**38** **36** **2**	**16** **14** **2**
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական պարտադիր կամընտրական	**9** **6** **3**	**5** **3** **2**
Ընդհանուր մասնագիտական կուրսային աշխատանքներ կամընտրական	175 2 6	**39** **2** **4**
Կրթական այլ մոդուլներ	18	2

Ընդամենը	240	78

4.1.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

4.1.2. Ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՏ) կրթամասը ներառում է կրթական մոդուլների երկու բաղկացուցիչ՝ պարտադիր և կամընտրական: Դրանց առկայությունը ծրագրում նպատակաուղղված է համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

ՀՍՏ պարտադիր դասընթացներ.

ՀՍՏ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Աղյուսակ 2

Մոդուլ-դասընթաց	**Կրեդիտ**	**Լսարանային**	**Մոդուլ-դասընթաց**	**Կրեդիտ**
Հայոց լեզու և խոսքի մշակույթ - 1	3	40 (10/20/0)	1	ստուգարք
Հայոց լեզու և խոսքի մշակույթ - 2	3	40 (10/20/0)	2	քննություն
Ռուսաց լեզու – 1	3	30 (0/30/0)	1	ստուգարք
Ռուսաց լեզու – 2	3	30(0/30/0)	2	քննություն
Օտար լեզու (անգլերեն) – 1	3	30 (0/30/0)	1	ստուգարք
Օտար լեզու (անգլերեն) – 2	3	30 (0/30/0)	2	քննություն
Հայոց պատմության հիմնահարցեր-1	3	30 (20/10/0)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	30 (20/10/0)	2	քննություն
Հետազոտության մեթոդաբանություն	3	30 (20/10/0)	3	ստուգարք
Կրոնագիտության հիմունքներ	3	30 (20/10/0)	3	ստուգարք
Տրամաբանության հիմունքներ	3	30 (20/10/0)	2	ստուգարք
Փիլիսոփայության հիմունքներ	3	30 (20/10/0)	5	քննություն
Ֆիզիկական դաստիարակություն	-	60 (0/60/0)	1,2	ստուգարք

2 Այսուհետ՝ դ - դասախոսություն, գ - գործնական կամ սեմինար պարապմունք, լ – լաբորատոր աշխատանք:

3 Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն:

ՀՍՏ կամընտրական դասընթացներ

ՀՍՏ կամընտրական դասընթացների ցանկը ներառում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը.

Աղյուսակ 3

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանայի ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Մշակութաբանության հիմունքներ	2	30(20/10/0)	1	ստուգարք
Արվեստի պատմություն				ստուգարք

4.1.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ) կրթամասը նույնպես ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամընտրական:

ԸՄԲ պարտադիր դասընթացներ

ԸՄԲ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Աղյուսակ 4

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանայի ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	3	30 (20/10/0)	1	ստուգարք
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3	30 (20/10/0)	2	ստուգարք

ԸՄԲ կամընտրական դասընթացներ

ԸՄԲ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը.

Աղյուսակ 5

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանայի ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	3	30 (20/10/0)	2	ստուգարք

Սոցիոլոգիա				ստուգարք

4.1.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպում է ուսուցում «Իրավագիտություն» մասնագիտության գծով:

Կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) կրթամասը նպատակաուղղված է տվյալ մասնագիտությամբ շրջանավարտի պատրաստմանը: Դրա բովանդակությունը, դասընթացների կազմը և դրանց կրեդիտատարությունը առանձին մասնագիտական մոդուլ-դասընթացների համար ներկայացված են ստորև.

Աղյուսակ 6 Աղյուսակ 6

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Պետության և իրավունքի տեսություն-1	5	60(40/24/0)	1	ստուգարք
Պետության և իրավունքի տեսություն-2	5	60 (40/24/0)	2	քննություն
Հայաստանի պետության և իրավունքի պատմություն	4	30 (20/10/0)	1	քննություն
Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն	6	60 (40/20/0)	2	քննություն
Հռոմեական մասնավոր իրավունքի հիմունքներ	2	30 (20/10/0)	1	ստուգարք
Արդարադատության և իրավապահ մարմինները ՀՀ-ում	5	60 (40/20/0)	1	քննություն
ՀՀ սահմանադրական իրավունք-1	5	60 (40/20/0)	3	քննություն
ՀՀ սահմանադրական իրավունք-2	5	60 (40/20/0)	4	քննություն
Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք	60	60 (40/20/0)	7	քննություն
Իրավական ուսմունքների պատմություն	4	40 (30/18/0)	4	ստուգարք
Քաղաքացիական իրավունք-1	5	60 (40/20/0)	3	ստուգարք
Քաղաքացիական իրավունք-2	5	60 (40/20/0)	4	քննություն
Քաղաքացիական իրավունք-3	5	90 (60/30/0)	5	ստուգարք

Քաղաքացիական իրավունք-4	6	60 (40/20/0)	6	քննություն
Քաղաքացիական դատավարություն-1	5	60 (40/20/0)	5	ստուգարք
Քաղաքացիական դատավարություն-2	5	60 (40/20/0)	6	քննություն
Քրեական իրավունք-1	5	60(40/20/0)	3	ստուգարք
Քրեական իրավունք-2	5	60(40/20/0)	4	քննություն
Քրեական իրավունք-3	5	60(40/20/0)	5	ստուգարք
Քրեական իրավունք-4	6	90(60/30/0)	6	քննություն
Քրեական դատավարություն-1	5	60 (40/20/0)	5	ստուգարք
Քրեական դատավարություն-2	5	60 (40/20/0)	6	քննություն
Վարչական իրավունք -1	2	30 (20/10/0)	3	ստուգարք
Վարչական իրավունք-2	5	60(40/20/0)	4	քննություն
Վարչական դատավարություն	3	30 (20/10/0)	5	քննություն
Կրիմինալիստիկա	6	60 (40/20/0)	7	քննություն
Աշխատանքային իրավունք	6	60(40/20/0)	3	քննություն
Ֆինանսական իրավունք	3	30(20/10/0)	7	ստուգարք
Միջազգային իրավունք	5	60(40/20/0)	6	քննություն
Եվրոպական իրավունք	3	30(20/10/0)	7	ստուգարք
Ընդհանուր հոգեբանություն	2	30(20/10/0)	3	ստուգարք
Իրավաբանական հոգեբանություն	2	30(20/10/0)	4	ստուգարք
Դատական բժշկություն և հոգեբուժություն	2	32(20/12/0)	6	ստուգարք
Քրեակատարողական իրավունք	4	30(20/10/0)	7	ստուգարք
ՀՀ մունիցիպալ իրավունք	2	30(20/10/0)	3	ստուգարք
Բնապահպանական իրավունք	5	60(40/20/0)	7	քննություն
Կրիմինալոգիա	5	60(40/20/0)	4	քննություն
Միջազգային մասնավոր իրավունք	5	40(30/10/0)	8	ստուգարք
Միջազգային մարդասիրական իրավունք	4	30(20/10/0)	7	ստուգարք
Կուրսային աշխատանք /ՀՀ	1		4	քննություն

սահմանադրական իրավունք/				
Կուրսային աշխատանք / Քրեական իրավունք կամ Քաղաքացիական իրավունք /	1		6	քննություն
Կամընտրական				
Մարդու իրավունքի հիմունքներ	4	30(20/10/0)	8	ստուգարք
Ընտանեկան իրավունք				
Սահմանադրական վերահսկողություն	2	30(20/10/0)	6	ստուգարք
Սահմանադրական մշակույթ				

Ծրագրի մասնագիտական հատվածում նախատեսված է նաև 2 կրեդիտ աշխատածավալով կուրսային աշխատանքների կատարում, որի արդյունքների ստուգումն ու գնահատումը իրականացվում է կրեդիտային եղանակով:

4.1.4. Կրթական այլ մոդուլներ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Աղյուսակ 7

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
Նախաավարտական պրակտիկա	12	8	քննություն
Ավարտական աշխատանքի պաշտպանություն	8	8	քննություն

5.Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

5.1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների (կուրսղեկների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրին քաջատեղյակ մասնագետներ:

5.2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:

5.3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, կրթական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբակային և անհատական խորհրդատվություններ:

5.4. Անհրաժեշտության դեպքում, ելնելով ուսանողների պահանջներից, կազմակերպվում է լրացուցիչ խորհրդատվություն՝ ընդգրկելով տվյալ կամ հարակից մասնագիտությամբ և անհրաժեշտ որակներով խորհրդատուի (խորհրդատուների):

6. Ուսանողի գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

ԳՊՀ՝ կրեդիտային համակարգով կազմակերպվող բակալավրիատի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համար ընդունվում է ներքոհիշյալ աղուսակում տրված 100 միավորանոց գնահատման համակարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Աղյուսակ 8

Գնահատականը	Նշանակումը	Թվանշանը	Միավորը
Գերազանց	A + A A -	4,0 4,0 3,7	95-100 87-94 81-86
Լավ	B+ B B-	3,3 3,0 2,7	75-80 67-74 61-66
Բավարար	C+ C C-	2,3 2,0 1,7	55-60 46-54 40-45
Անբավարար	D	1,0	0
Չներկայացած	F	-	0
Ստուգված	S	-	≥40
Չստուգված	U	-	< 40

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում հանրագումարային միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ A (4,0)):

1. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 40-ից ցածր միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:
2. Միավորների բաշխումն ըստ գործոնների.

ա/ Քննությամբ ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 9

հ/հ	Գործոններ	Միավորներ
1	Հաճախումներ	10

2	1-ին միջանկյալ քննություն	20
3	2-րդ միջանկյալ քննություն	20
4	Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք	20
5	Վերջնական հանրագումարային քննություն	12-30
Ընդամենը		**100**

բ/ Ստուգարքով ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 10

h/h	**Գործոններ**	Միավորներ
1	Հաճախումներ	10
2	Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք	40
3	Վերջնական հանրագումարային ստուգում	20-50
Ընդամենը		**100**

գ/ Կուրսային աշխատանք

Աղյուսակ 11

h/h	**Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները**	**Միավորներ**
1	Բովանդակության ամբողջականությունը (լիարժեքությունը)	30
2	Կատարման ինքնուրույնությունը	25
3	Համապատասխանությունը տեխնիկական պահանջներին	15
4	Ներկայացման և պաշտպանության որակը	30
Ընդամենը		**100**

դ/ Նախաավարտական պրակտիկա /քննություն/

Աղյուսակ 12

h/h	Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները	Միավորը	Ցուցում՝ գնահատման մասին
1	Հաճախում	30	գնահատման ժամանակ 30 միավորից հանվում է յուրաքանչյուր բացակայած օրվան համապատասխան միավորների թիվը, արդյունքը կլորացնելով՝ պակասորդով
2	Աշխատանքային պլանի կատարում	30	Գնահատումը իրականացվում է կանոնակարգի և սույն աղյուսակի համաձայն
3	Պրակտիկայի հաշվետվության, օրագրի կազմում և պաշտպանություն	40	

Ե/ Ավարտական աշխատանքի պաշտպանություն

Աղյուսակ 13

h/h	Չափանիշներ	Միավորը
1	Արդյունարար գնահատականը	0-100
2	Տառային նշանակումը և թվային նշանակումը	C- - A+ /1,7 – 4,0/

h/h	**Գործոններ**	**Միավոր**
1	Աշխատանքի թեմայի արդիականությունը, նորույթը	10
2	Աշխատանքի ընդհանուր բնութագիրը (հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները, աղբյուրները, այլ), բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները, արված եզրակացությունները և առաջարկությունները	50
3	Աշխատանքին ներկայացվող պահանջների պահպանումը (շարադրանքի որակը, մեջբերումները, հղումները, օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունները, աղյուսակները, հավելվածները, տեխնիկական այլ պահանջներին համապատասխանությունը)	10

4	Ավարտական աշխատանքի ներկայացումը, պաշտպանությունը	30

6.1 Ուսանողների գիտելիքների որակի ստուգման ձևերը

Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում, օգտագործելով ակադեմիական կրեդիտների կուտակման համակարգը, կիրառվում են ուսանողների գիտելիքների որակի ստուգման հետևյալ տեսակներն ու ձևերը.

- ընթացիկ ստուգում,
- միջանկյալ ստուգում,
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգում,
- հանրագումարային ստուգում:

6.2. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգում

6.2.1. Կանոնակարգի համաձայն՝ ընթացիկ ստուգման ձևեր կարող են հանդիսանալ հարցումները, կարճատև ելույթները գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ, լսարանային աշխատանքները, իսկ ինքնուրույն հետազոտական աշխատանքը կարող է ստուգվել շնորհանդեսների, զեկուցումների, հետազոտությունների արդյունքների, թեստերի, կատարված հանձնարարությունների, լուծված առաջադրանքների, ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքների ստուգման և գնահատման այլ ձևերի միջոցով:

6.2.2. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ու գնահատման ձևերը որոշվում են դասախոսների կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացից ուսումնական պլանով նախատեսված պարապմունքի ձևերը, ինչպես նաև դասընթացի բնույթն ու առանձնահատկությունները:

6.2.3. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի պատրաստվածությունը գործնական և սեմինար պարապմունքներին, գնահատում է նյութի յուրացման մակարդակը, լսարանային աշխատանքներին նրա մասնակցությունը, ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքները և ի հայտ է բերում ուսանողների պատրաստվածության թերությունները՝ տվյալ դասընթացի բովանդակությունը հարստացնելու և արդիականացնելու, մեթոդները կատարելագործելու, պարապմունքների և ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողների աշխատանքը ակտիվացնելու և իր կողմից ուսանողին անհատական օգնություն ցուցաբերելու նպատակով:

6.2.4. Ողջ ուսումնառության ընթացքում ուսանողների գիտելիքների ստուգման համար ընթացիկ ստուգումներն ու ինքնուրույն հետազոտական աշխատանքի գնահատումներն իրականացվում են այն դասախոսների կողմից, ովքեր անցկացնում են գործնական կամ սեմինար պարապմունքներ, հանձնարարում ինքնուրույն հետազոտական աշխատանքներ:

6.2.5. Անկախ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տեսակից՝ դասախոսը պարտավոր է անցկացնել տվյալ խմբի բոլոր ուսանողների ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի գնահատում:

՛6.2.6. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման արդյունք են համարվում այն միավորներով արտահայտված գնահատականները, որոնք ուսանողը հավաքում է ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման համար տրված բոլոր աշխատանքներից և հաշվարկված ընթացիկ ստուգման գնահատականի մեջ դրանց համամասնությունից:

6.2.7. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականը հաշվարկվում է սույն կարգի աղյուսակ 2-ում և 3-ում «Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք» գործոնին հատկացված միավորի (քննության դեպքում՝ 20 միավորի, ստուգարքի դեպքում՝ 40 միավորի) շրջանակներում բոլոր ձևերի ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգումների արդյունքներից:

6.2.8. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգումների ձևերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռը ընդհանուր գնահատականի մեջ, և այդ տեսակարար կշիռների գումարը պետք է հավասար լինի 1-ի: ‹‹Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք» գործոնի գնահատականի հաշվարկը կարող է կատարվել Օրինակ 1-ում (ստուգարքով ավարտվող մոդուլի դեպքում) և Օրինակ 2-ում (քննությամբ ավարտվող մոդուլի դեպքում) ներկայացված ձևով (հաշվարկում 5-րդ սյան միավորները ստացվում են 3-րդ և 4-րդ սյուների միավորների բազմապատկման արդյունքում).

1) ստուգարքով ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 1.

Հ/h	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ձևերը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչ յուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /30 միավորի շրջանակնե րում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5-րդ սյունակի միավորը.= 3-րդ սյունակ*4-րդ սյունակ/
1	**2**	**3**	**4**	**5**
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	27	10,8
3.	Սեմինար պարապմունք	0,4	28	11,2
4.	Թեստ			
5.	Հարցում	0,2	16	3,2
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			

Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/	**25,2=26**

2) քննությամբ ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 2.

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակները	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /15 միավորի շրջանակներում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5-րդ սյունակի միավորը.= 3-րդ սյունակ*4-րդ սյունակ/
1	2	3	4	5
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	11	4,4
3.	Սեմինար պարապմունք			
4.	Թեստ	0,6	14	8,4
5.	Հարցում			
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/				12,8=13

Այսպիսով, ՎԳընթ=Կx*Գx., որտեղ

ՎԳընթ-ն ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականն է,

Կx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի տեսակարար կշիռը,

Գx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի գնահատականը:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի օգտագործված ձևերի տեսակարար կշիռը հավասար է 1-ի /0,4+0,4+0,2=1/, /0,4+0,6=1/:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականը կարող է կլորացվել ի օգուտ ուսանողի, մինչև մոտակա ամբողջ թիվը: Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի համար դասախոսը կարող է հատկացվող միավորների

շրջանակներում կիրառել նաև այլ մոտեցում՝ նախապես այն սահմանելով դասընթացի առարկայական ծրագրում և տեղյակ պահել ուսանողներին:

6.3. Միջանկյալ ստուգում

6.3.1. Միջանկյալ ստուգումն անցկացվում է կիսամյակի կամ մոդուլի ընթացքում ուսանողի առաջադիմությունը գնահատելու և ուսանողների գիտելիքների վերջնական գնահատման ժամանակ ավելի մեծ օբյեկտիվություն ապահովելու նպատակով:

6.3.2. Միջանկյալ ստուգումը արտահայտում է հաստատված ուսումնական պլանում առկա դասընթացի առարկայական ծրագրում ընդգրկված թեմաների որոշ մասի յուրացումը ուսանողի կողմից և ամփոփում է այդ հատվածի /թեմաների/ գնահատականները:

6.3.3. Միջանկյալ ստուգումն անցկացվում է ստուգողական աշխատանքի, համակարգչային թեստավորման կամ այլ եղանակներով:

6.3.4. Միջանկյալ ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում միջանկյալ քննությանը հատկացված 20 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

6.3.5. Միջանկյալ ստուգման եղանակը և գնահատման սկզբունքները պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները: Դրանք պետք է նկարագրված լինեն տվյալ դասընթացի առարկայական ծրագրում և տեղեկացվեն ուսանողներին դասընթացի սկզբում:

6.4. Հանրագումարային ստուգում

6.4.1. Հանրագումարային ստուգման ձևերն են համարվում քննությունները և հանրագումարային ստուգարքները /այն մոդուլներից, որոնցից քննություն նախատեսված չէ/:

6.4.2. Հանրագումարային ստուգումը նպատակ ունի բացահայտել և գնահատել ուսանողների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները տվյալ դասընթացից:

6.4.3. Հանրագումարային ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում վերջնական քննությանը հատկացված 30 միավորի կամ վերջնական ստուգմանը հատկացված 50 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

6.4.4. Հանրագումարային ստուգումների ժամանակացույցը գնահատման գործոնների և սկզբունքների հետ միասին հաստատվում է ֆակուլտետի դեկանի կողմից և տեղեկացվում դասախոսներին ու ուսանողներին՝ անցկացման ժամկետից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ:

6.4.5. Տվյալ դասընթացից հանրագումարային ստուգմանը մասնակցելու և գնահատվելու իրավունք ունեն միայն այն ուսանողները, ում հաճախելիության տոկոսը բարձր է առարկայական ծրագրում նշված նվազագույն ցուցանիշից, ինչը 40%-ից ցածր չպետք է լինի:

6.4.6. Հաճախելիությունը գնահատվում է հետևյալ կերպ.

հաճախելիության ցուցանիշը հավասար է մի մեծության, որը ստացվում է ուսանողի կողմից տվյալ դասընթացին ներկա գտնված ժամաքանակը բազմապատկած 10-ով և արդյունքը բաժանած դասընթացի ընդհանուր ժամաքանակի վրա:

6.4.7. Հանրագումարային ստուգման գնահատման ժամանակ այդ գնահատման բաղադրիչ տարրերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռները, որոնք պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները:

6.4.8. Ուսանողի վերջնական գնահատականը հաշվարկվում է վերոհիշյալ բոլոր գործոններից վաստակած միավորների գումարումով: Ստացված գումարային միավորը՝ ըստ գնահատման վերոնշյալ համակարգի, համապատասխանեցվում է տառային նշանակումներին: Ըստ այդմ՝ համապատասխան A-, A, A+, B-, B, B+, C-, C, C+, S գնահատականները դրվում են տեղեկագրի և ուսանողի ստուգման գրքույկի մեջ, իսկ D, F, U գնահատականները՝ միայն տեղեկագրի մեջ:

6.4.9. Այն ուսանողները, ովքեր ստանում են «անբավարար», «չստուգված» կամ «չներկայացած», համարվում են ակադեմիական պարտք ունեցողներ:

7. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

7.1 Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԳՊՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն՝ ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

7.2 Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

7.3 Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները ՝

- ծրագրային կրեդիտների քանակը,
- որակավորման կրեդիտների քանակը,
- վարկանիշային միավորները,

- միջին որակական գնահատականը:

7.4 Ծրագրային կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

7.5 Որակավորման կրեդիտը (ՈԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով.

$$ՈԿ = \sum \text{Կրեդիտ}$$

7.6 Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$ՎՄ = \sum \text{Կրեդիտ} \quad \text{Գարդ.}$$

որտեղ Գարդ.-ը ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է (օրինակ, եթե 2 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է 3,0, ապա տվյալ դասընթացի վարկանիշային միավորը հավասար է 2 կրեդիտ 3,0 = 6՝ 8 հնարավորից):

7.7 Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները որակավորման կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ՈԿ}}$$

7.8 Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

8. Լուծարքի, առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

8.1 Լուծարք

8.1.1 Լուծարքը կազմակերպվում է հինգ գործոնների փաստացի արդյունքներով, ապա դեկանատում հաշվարկվում է վերջնական ամփոփիչ գնահատականը, որը նշվում է ձևաթերթում:

8.1.2 Լուծարք կազմակերպվում է ամփոփիչ քննության կամ ստուգարքի համար:

8.1.3 Լուծարք է կազմակերպվում, երբ վերջնական հաշվարկային գնահատականը համապատասխանում է «D»-ի քննության պարագայում /կամ «U»-ի ստուգարքի պարագայում/ և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը ավել է կամ հավասար 25–ի և պակաս՝ 40–ից:

8.1.4 Ամփոփիչ ստուգումից հետո դեկանատը կազմում է լուծարքին թույլատրված ուսանողների ցուցակը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:

8.1.5 Լուծարքին թույլատրված ուսանողը քննությունը կամ ստուգարքը կարող է հանձնել երկու անգամ՝ դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան, իսկ առանձին դեպքերում՝ անհատական ժամանակացույցով:

8.2 Առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

Ուսանողը չի ստանում տվյալ առարկայի կրեդիտը, եթե՝

8.2.1 այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, իսկ հանրագումարային գնահատականի արժեքը պակաս է 25-ից,

8.2.2 այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, հանրագումարային գնահատականի արժեքը ավել կամ հավասար է 25–ի և պակաս 40-ից, թույլատրվել է ամփոփիչ քննության կամ ստուգարքի լուծարքին, և լուծարքի արդյունքում գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը չի բարձրացել 40-ից:

8.2.3 Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է, եթե նա չի հավաքել 30 կրեդիտ, այսինքն՝ մեկ և ավելի առարկայից կրեդիտ չի ստացել:

9. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

9.1 Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

9.2 Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:

9.3 Հարգելի պատճառով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը դեկանատի թույլտվությամբ լուծարային շրջանի ընթացքում կարող է վերահանձնել այն:

9.4 Եզրափակիչ քննությունից «անբավարար» գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է վերահանձնել այն, եթե տվյալ դասընթացից նրա հանրագումարային գնահատականը փոքր է 40-ից, սակայն բարձր է 25-ից:

9.5 Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ մնում՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը

10.1. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով ու պաշտպանությամբ և/կամ ծրագրի ավարտից հետո կազմակերպվող

մասնագիտական ամփոփիչ ատեստավորման քննությամբ (քննություններով), որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները:

10.2. Ավարտական աշխատանքի թեման ընտրվում և հաստատվում է նախաավարտական ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում: Աշխատանքը կատարվում է ավարտական ուստարվա ընթացքում:

10.3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա. աշխատանքի ներկայացումը մասնագիտական ամբիոնի քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը պետք է ներառի կատարած աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ. ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտական ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Դրական եզրակացության դեպքում ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության,

գ. մասնագիտական ամբիոնի կողմից աշխատանքը գրախոսության ուղարկելու գործընթացի կազմակերպում,

դ. ավարտական աշխատանքի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և բակալավրի աստիճանի շնորհում:

10.4. Ավարտական աշխատանքի և ամփոփիչ ատեստավորման քննության գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման միավորների չափաքանակներն՝ ըստ Աղյուսակ 8-ի և Աղյուսակ 13-ի:

10. Ծրագրի ավարտական պահանջները

11.1 Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ուսանողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն:

11.2 Մինչև ամփոփիչ ատեստավորումն ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 1,7: Հակառակ պարագայում որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ: Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն մինչև 39 կրեդիտ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ պարտադիր 36 կրեդիտ, իսկ 3 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 9 կրեդիտ՝ ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ պարտադիր 6 կրեդիտ, իսկ 3 կրեդիտ՝

կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), և առնվազն 18 կրեդիտ՝ պրակտիկայից և ամփոփիչ ատեստավորման ձևերից /ըստ մասնագիտությունների կրթամասերին հատկացվող կրեդիտների քանակը կարող է ունենալ մինչև 20% շեղում/:

11.3 Մնացած 171 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, և մասնագիտության համար տրվում է առանձին (մինչև 24 կրեդիտ կարող է հատկացվել մասնագիտության շրջանակներում որոշակի ուղղություններով մասնագիտացում իրականացնելու համար):

11.4 Ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվում է և համապատասխան որակավորումներով դիպլոմները (սովորական, գերազանցության) շնորհվում են՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի:

12. Կրեդիտների փոխանցումը

12.1 Այլ բուհերից ԳՊՀ բակալավրի կրթական ծրագիր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

12.2 Այլ ուսումնական ծրագրից ԳՊՀ բակալավրի ուսումնական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե՝

ա) դրանց բովանդակությունները միանման են,

բ) կան բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

12.3 Այլ բուհում ԳՊՀ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ԳՊՀ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

12.4 Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար Համալսարանն ունի ECTS-ի բուհական համակարգմամբ զբաղվող կառույց:

13. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

13.1 Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ԳՊՀ-ի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի,
- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը ԳՊՀ-ում, համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշման:

13.2. Ուսանողը պարտավոր է՝
- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

2024-2025 ուսումնական տարի

Աշնանային կիսամյակ

Աղյուսակ 15

01 սեպտեմբերի 2024թ. – 22 դեկտեմբերի 2024թ.	
Ուսուցման սկիզբ	01 սեպտեմբեր
1-ին միջանկյալ քննություն	30 հոկտեմբերի -03 նոյեմբերի
2-րդ միջանկյալ քննություն	25 դեկտեմբերի - 29 դեկտեմբերի
Գործնական պարապմունքներին ակտիվության ամփոփում	18 դեկտեմբերի -22 դեկտեմբերի
Ստուգարքների հանձնում	25 դեկտեմբերի - 29 դեկտեմբերի
Ուսուցման ավարտ	22 դեկտեմբերի
Քննաշրջան	8 հունվարի - 26 հունվարի

Ձմեռային արձակուրդներ	30 դեկտեմբերի – 07 հունվարի

<u>Գարնանային կիսամյակ</u>

Աղյուսակ 16

05 փետրվարի 2025 թ. – 25 մայիսի 2025թ.	
Ուսուցման սկիզբ	05 փետրվարի
1-ին միջանկյալ քննություն	02 ապրիլի - 06 ապրիլի
2-րդ միջանկյալ քննություն	29 մայիսի - 01 հունիսի
Ինքնուրույն հետազոտական աշխատանքների հանձնում, գործնական պարապմունքներին ակտիվության ամփոփում	21 մայիսի -25 մայիսի
Ստուգարքների հանձնում	29 մայիսի - 01 հունիսի
Ուսուցման ավարտ	25 մայիսի
Քննաշրջան	04 հունիսի – 22 հունիսի
Ավարտական աշխատանքի պաշտպանություն	07 մայիսի- 31 մայիսի
Ամառային արձակուրդներ	29 հունիսի – 31 օգոստոսի

ՄԱՍ II. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐ

1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ - տնտեսագիտական դասընթացներ

1.1 Պարտադիր դասընթացներ

22/Բ40 – Հայոց լեզու և խոսքի մշակույթ – 1 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (10 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացն ունի տեսական, գործնական-կիրառական ուղղվածություն: Նպատակն է ամրապնդել ուսանողների գիտելիքները ժամանակակից հայոց լեզվի խոսքի դրսևորման տարբեր տեսակների, ոճերի տեսակների, հնչյունական կազմի, բառակազմության դարձվածաբանության, բառարանագրության, ինչպես նաև և ձևաբանություն, և շարահյուսություն բաժինների վերաբերյալ, ընդհանուր գծերով ներկայացնել խոսքի մասերը՝ իրենց բնորոշ քերականական կարգերով և ոճական առանձնահատկություններով, հայերենի նախադասությունները, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները, նախադասությունների տեսակներն ըստ հնչերանգի և ըստ կառուցվածքի, յուրաքանչյուր թեմայի իմացությունը ամրապնդելով համապատասխան գործնական աշխատանքներով՝ հատկապես ուղղագրության և կետադրության հետ կապված, զարգացնել ուսանողների՝ քերականորեն և ոճական առումով ճիշտ խոսք կառուցելու կարողությունները, նպաստել խոսքի թերությունների վերացմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ ժամանակակից հայոց լեզվի ոճաբանությունը, հնչյունաբանությունը, հնչյունափոխությունը, բառագիտությունը, բառակազմությունը, դարձվածաբանությունը, բառարանագիտությունը:

Կկարողանա՝ ներկայացնել խոսքի դրսևորման ձևերը, հայերենի հնչյունական համակարգը, հնչյունափոխության տեսակները և դեպքերը, բառը, նրա հատկանիշներն ու տեսակները, բառերի տեսակներն ըստ կազմության, դարձվածքները, բառարանների տեսակները:

Կտիրապետի՝ հնչյունական վերլուծություններին, հնչյունափոխական երևույթները որոշելուն, բառերի կազմության ձևերին, խոսքում դարձվածքները ճիշտ կիրառելուն, բառարաններից

օգտվելու ձևերին, ճիշտ, փաստարկված գնահատող և դատողական խոսք կառուցելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայոց լեզվի հատկանիշները և գրավոր զարգացման փուլերը: **Թեմա 2.** Խոսքի տեսակները: Ոճերի դասակարգման սկզբունքները. ոճերի տեսակները և կիրառությունները: Խոսքի պատկերավորման և հուզարտահայտչական միջոցները: Վարչագործարարական գրություններ: **Թեմա 3.** Հայերենի հնչյունական համակարգը: Հնչյուն և հնչույթ Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ: Երկհնչյուններ: **Թեմա 5.** Վանկը և շեշտը հայերենում:Վանկատում և տողադարձ. Շեշտ և հնչերանգ: Հնչյունափոխություն, **Թեմա 4.** Ուղղագրություն և ուղղախոսություն. Օրինաչափությունները, **Թեմա 5.** Բառագիտություն: Բառի ուսմունքը: Բառապաշար, դրա դասակարգումը: Մասնագիտական բառապաշար: Իմաստաբանություն: Բառիմաստի տեսակները և փոփոխությունները, **Թեմա 6.** Բառակազմություն: Ձևույթներ: Բառերի տեսակներն ըստ կազմության, **Թեմա 7.** Դարձվածքները և դրանց տեսակները, կիրառությունները: **Թեմա 8.** Բառարանագիտություն: Բառարանների հիմնական տեսակները:

22/Բ41 – Հայոց լեզու և խոսքի մշակույթ – 2 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (10 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացն ունի տեսական, գործնական-կիրառական ուղղվածություն: Նպատակն է ամրապնդել ուսանողների գիտելիքները ժամանակակից հայոց լեզվի խոսքի դրսևորման տարբեր տեսակների, ոճերի տեսակների, հնչյունական կազմի, բառակազմության դարձվածաբանության, բառարանագրության, ինչպես նաև և ձևաբանություն, և շարահյուսություն բաժինների վերաբերյալ, ընդհանուր գծերով ներկայացնել խոսքի մասերը՝ իրենց բնորոշ քերականական կարգերով և ոճական առանձնահատկություններով, հայերենի նախադասությունները, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները, նախադասությունների տեսակներն ըստ հնչերանգի և ըստ կառուցվածքի, յուրաքանչյուր թեմայի իմացությունը ամրապնդելով համապատասխան գործնական աշխատանքներով՝ հատկապես ուղղագրության և կետադրության հետ կապված, զարգացնել ուսանողների՝ քերականորեն և ոճական առումով ճիշտ խոսք կառուցելու կարողությունները, նպաստել խոսքի թերությունների վերացմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ հայերենի խոսքի մասերի դասակարգման սկզբունքները և քերականական կարգերը:

Կկարողանա՝ տարբերակել խոսքի մասերն իրենց բնորոշ քերականական առանձնահատկություններով:

Կտիրապետի՝ նախադասությունների ձևաբանական վերլուծություններին, գրական երկերի վերլուծության սկզբունքներին, ճիշտ, փաստարկված, գնահատող և դատողական խոսք կառուցելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Խոսքի մասեր, դրանց դասակարգման հիմունքները: **Թեմա 2.** Գոյական անուն: Գոյականի իմաստային-քերականական խմբերն ու քերականական կարգերը:Գոյականի կազմությունը: Հոլովները: Հոլովումներ: Գոյականի առկայացման կարգը: **Թեմա 3.** Ածական անուն, տեսակները, կազմությունը և շարահյուսական կիրառությունները: **Թեմա 4.** Թվական անուն տեսակները, կազմությունը, կիրառությունները: **Թեմա 5.** Դերանուն, տեսակները: Դերանվանական հոլովում: **Թեմա 6.** Բայ, հատկանիշները,կազմությունը: Բայի անդեմ և դիմավոր ձևերը, դրանց տեսակները, կազմությունը: **Թեմա 7.** Բայի խոնարհումը: Բայի սեռերը: Անկանոն և պակասավոր բայեր: **Թեմա 8.** Մակբայ, տեսակները, կազմությունը, ուղղագրությունը: **Թեմա 9.** Կապերի տեսակներն ըստ իմաստի: Կապական բառեր: Կապերի հոլովառությունը: **Թեմա 10.** Շաղկապ. տեսակները և կիրառությունները: **Թեմա 11.** Վերաբերականներ. իմաստային խմբերը, կազմությունը, կիրառությունները: **Թեմա 12.**Ձայնարկություններ. տեսակները, կազմությունը և կիրառությունը: **Թեմա 13.** Շարահյուսություն. Նախադասություն,նախադասության հատկանիշները: **Թեմա 14.** Նախադասության տեսակներն ըստ հնչերանգի և ըստ կառուցվածքի: Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ: Դերբայական դարձված: Բարդ նախադասություն, տեսակները: Բարդ համադասական նախադասություն, տեսակները, առանձնահատկոըթյունները: Բարդ ստորադասական նախադասություն, տեսակները, առանձնահատկոըթյունները: **Թեմա 15.** Ուրիշի խոսք, կոչական, կետադրություն:

24/Բ64- Ռուսաց լեզու – 1 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները, ձևավորել, ընդլայնել և համակարգել մասնագիտական բառապաշարը,զարգացնել վերլուծելու, համադրելու, դատողություն անելու կարողությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ ռուսաց լեզվի լեզվական համակարգը, քերականական առանձնահատկությունները, ոճական ռեսուրսները, հաղորդակցման պայմաններին համապատասխան ընտրվող խոսքային միավորների կիրառական առանձնահատկությունները, մասնագիտական բնագրերի գործնական թարգմանության առանձնահատկությունները:

Կկարողանա՝ ընկալել, համառոտագրել և ընդլայնել տեքստի տեղեկատվությունը, մեկնաբանել տեքստը, փոխակերպել տեքստի ոճը, մասնագիտական տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել, տեղեկություն ներկայացնել և մասնակցել բանավեճերի, լուծել իրավիճակային խնդիրներ, կառուցել բանավոր և գրավոր խոսք:

Կտիրապետի՝ ռուսաց լեզվով մասնագիտական թեմաներով հաղորդակցվելու կարողություններին, ռուսաց լեզվով դատողություններ անելու տարբեր իրավական երևույթների, իրավաբանական փաստերի վերաբերյալ, առաջարկել նոր լուծումներ և հիմնավորել դրանք:

Բովանդակությունը.

Тема 1. Основные фонетичекие и интонационные нормы русского языка. Речевые темы: «Преступление» ,Дефиниции преступления по УК РА, РФ, некоторых стран Европы и др. государств. Текст «Признаки преступления по УК РА» Текст «Категории преступлений по УК РА», Термины в конституционном праве РА. **Тема 2.** Лексические нормы русского языка. (Лексическое значение слова. Фразеологический оборот. Употребление синонимов, антонимов, паронимов. Лексическая омонимия.Архаизмы, историзмы, неологизмы). Нарушения лексических норм (тавтология, паронимия, плеоназм и т.д.). Речевые темы: «Виды преступлений», «Совокупность преступлений», Статья 3. Конституции РА « Человек, его достоинство, основные права и свободы» **Тема 3.** Состав слова: основа слова и окончание, корень, суффикс, префикс. Речевые темы: «Рецидив преступлений», «Общие условия уголовной ответственности». «Возраст привлечения к уголовной ответственности»,«Невменяемость»,Ст. 4, 5 Конституции РА «Принцип разделения и баланса властей», « Иерархия правовых норм». **Тема 4.** Семантический потенциал аффиксов Речевые темы: «Государство как институт человеческой цивилизации». «Государство, его признаки и назначение». Термины в конституционном праве РА. **Тема 5.** Имя существительное (лексико -

грамматические разряды, род, число, падеж имен существительных); имя прилагательное (значение и грамматические признаки имени прилагательного; изменение имен прилагательных); согласование имён существительных и прилагательных. *Речевые темы:* «Уголовная ответственность лиц, совершивших преступление в состоянии опьянения». «Ограниченная вменяемость», Термины в конституциомнном праве РА.

24/Բ65- Ռուսաց լեզու – 2 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները, ձևավորել, ընդլայնել և համակարգել մասնագիտական բառապաշարը ,զարգացնել վերլուծելու, համադրելու, դատողություն անելու կարողությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ ռուսերենի լեզվական համակարգը, քերականական առանձնահատկությունները, ոճական ռեսուրսները, հաղորդակցման պայմաններին համապատասխան ընտրվող խոսքային միավորների կիրառական առանձնահատկությունները, մասնագիտական բնագրերի գործնական թարգմանության առանձնահատկությունները:

Կկարողանա՝ կիրառել մասնագիտական և հաղորդակցական ոլորտներին պատկանող բնագրերի ընթերցանության տեսակները (թռուցիկ, ընդհանուր բովանդակության ընկալման, որոնողական, մանրազնին), համառոտագրել և ընդլայնել բնագրի տեղեկատվությունը, մեկնաբանել այն, փոխակերպել բնագրի ոճը, դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել, մասնակցել բանավեճերի:

Կտիրապետի՝ ռուսաց լեզվով մասնագիտական թեմաներով հաղորդակցվելու կարողություններին, ռուսաց լեզվով դատողություններ անելու տարբեր իրավական երևույթների, իրավաբանական փաստերի վերաբերյալ, առաջարկել նոր լուծումներ և հիմնավորել դրանք:

Բովանդակությունը.

Тема 1. Глагол. Значение и грамматические признаки глагола; наречие, местоимение, числительное. Речевые темы: «Невербальные средства в профессиональной коммуникации юриста». «Понятие и формы вины», «Умышленное совершение преступления», «Совершение преступления по неосторожности», Ст. 23, 24, 25 Конституции РА «Достоинство человека», «Право

на жизнь», «Право на физическую и психическую неприкосновенность». **Тема 2.** Причастие. Деепричастие. Причастный и деепричастный обороты. Речевые темы: «Оконченные и неоконченные преступления», «Покушение на преступление», Ст. 27, 28, 29 Конституции РА «Личная свобода», «Всеобщее равенство перед законом», «Запрет дискриминации». **Тема 3.** Способы выражения синтаксических отношений, простое предложение, типы предложений по цели высказывания, главные члены предложения. Речевые темы: «Понятие соучастия», «Виды соучастников», «Ответственность соучастников», Ст. 30, 31, 32 Конституции РА «Равноправие женщин и мужчин», «Неприкосновенность частной и семейной жизни, чести и доброго имени», «Неприкосновенность жилища». **Тема 4.** Способы выражения синтаксических отношений, сложное предложение, сочинительная связь, Речевые темы: «Необходимая оборона», «Причинение вреда при задержании лица, совершившего преступление», «Крайняя необходимость»,Ст. 36, 37, 38 Конституции РА «Права и обязанности родителей», «Права ребенка», «Право на образование». **Тема 5.** Сложное предложение, подчинительная связь, прямая речь, косвенная речь. Речевые темы: «Понятие и цели наказания», «Виды наказания», «Основные и дополнительные наказания», «Общие принципы назначения наказания», «Обстоятельства, смягчающие ответственность и наказание», «Обстоятельства, отягчающие ответственность и наказание».

24/Բ30- Օտար լեզու – 1 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է կրկնապատկել ուսանողների բառապաշարը, ինչպես նաև թարգմանական, վերարտադրման և խոսակցական հմտությունները իրավագիտության բնագավառում, քանի որ իրավագիտության բաժնի ուսանողները պետք է կարողանան լուսաբանել և վերարտադրել իրավաբանական տեքստեր, բանավիճել այս կամ այն հարցի շուրջ: Այս դասընթացի նպատակն է հեշտացնել հիմնական իրավաբանական տերմինների ըմբռնումը: Դասընթացի ընթացքում ուսանողը պետք է կուտակի ինչքան հնարավոր է շատ իրավաբանական տերմիններ, և կիրառի դրանք տրված նյութի վերարտադրման մեջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ իրավաբանական տերմինները, իրավաբանական բնագրերը ճիշտ թարգմանելու հնարները, օտար լեզու սովորելու և նրա բառապաշարն ու քերականությունը յուրացնելու եղանակներն ու մեթոդները, բառակապակցությունները և դարձվածքները:

Կկարողանա՝ կարդալ, թարգմանել, վերլուծել բնագիրը, ճիշտ ձևակերպել նախադասությունը հաշվի առնելով անգլերեն լեզվի առանձնահատկությունները, մասնագիտական բնագրից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել, վերարտադրել բնագիրը՝ օգտագործելով անցած բառապաշարը, բանավիճել տրված հարցի շուրջ և տալ համոզիչ փաստարկներ, կազմակերպել դատավարություն՝ կիրառելով ակտիվ բառապաշար:

Կտիրապետի՝ մասնագիտական տերմինաբանությանը, մասնագիտության լեզվին՝ խոսքային բոլոր ձևերում, անգլերեն լեզվով հարց-պատասխան բնույթի զրույցին մասնակցելու, հաղորդակցվելու, դատողություններ անելու կարողություններին, անգլերեն լեզվով բանավեճեր, քննարկումներ վարելու հմտություններին, թարգմանություններ կատարելու հմտություններին:

Բովանդակությունը.

Lesson 1 " The Need For Law", Law and Society. **Lesson** 2. "The First Laws: Laws of Babylon". The Birth of Law. **Lesson 3**" The First Laws : Ancient Greece and Rome".The Legal Heritage of Greece and Rome. **Lesson 4.** The Foundation of British Law: The Magna Carta". The Magna Carta. **Lesson 5.** ."The Foundation of British Law: Habeas Corpus Act". Let the Body Be Brought…. **Lesson 6.** "The Foundation of British Law: The Petition of Rights and The Bill of Rights". **Lesson 7.** "The European Law In The 19th Century: Napoleon's Code", Napoleon's Law.

24/Բ31- Օտար լեզու – 2 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է կրկնապատկել ուսանողների բառապաշարը, ինչպես նաև թարգմանական, վերարտադրման և խոսակցական հմտությունները իրավագիտության բնագավառում, քանի որ իրավագիտության բաժնի ուսանողները պետք է կարողանան լուսաբանել և վերարտադրել իրավաբանական տեքստեր, բանավիճել այս կամ այն հարցի շուրջ: Այս դասընթացի նպատակն է հեշտացնել հիմնական իրավաբանական տերմինների ըմբռնումը:

Դասընթացի ընթացքում ուսանողը պետք է կուտակի ինչքան հնարավոր է շատ իրավաբանական տերմիններ, և կիրառի դրանք տրված նյութի վերարտադրման մեջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ իրավաբանական տերմինները, իրավաբանական բնագրերը ճիշտ թարգմանելու հնարները, օտար լեզու սովորելու և նրա բառապաշարն ու քերականությունը յուրացնելու եղանակներն ու մեթոդները, բառակապակցությունները և դարձվածքները:

Կկարողանա՝ կարդալ, թարգմանել, վերլուծել բնագիրը, ճիշտ ձևակերպել նախադասությունը հաշվի առնելով անգլերեն լեզվի առանձնահատկությունները, մասնագիտական բնագրից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել, վերարտադրել բնագիրը՝ օգտագործելով անցած բառապաշարը, բանավիճել տրված հարցի շուրջ և տալ համոզիչ փաստարկներ, կազմակերպել դատավարություն՝ կիրառելով ակտիվ բառապաշար:

Կտիրապետի՝ մասնագիտական տերմինաբանությանը, մասնագիտության լեզվին՝ խոսքային բոլոր ձևերում, անգլերեն լեզվով հարց-պատասխան բնույթի զրույցին մասնակցելու, հաղորդակցվելու, դատողություններ անելու կարողություններին, անգլերեն լեզվով բանավեճեր, քննարկումներ վարելու հմտություններին, թարգմանություններ կատարելու հմտություններին:

Բովանդակությունը.

Unit 1. ”The study of Crime”. Criminology. **Unit 2.** ”Crimes and Criminal”. **Unit 3.** ”The Causes of Crime”. **Unit 4** “Punishment” . **Unit 5.** “The Purpose of State Punishment” . **Unit 6.** “Treatment of Criminals” . **Unit 7.** “Capital Punishment: History” . **Unit 8.**”Capital Punishment: For And Against”. **Unit 9.** “The History of Police Forces”, From the History of Police Forces. **Unit 10**. “The Organization of Police Forces” . **Unit 11**. ” Police Powers”, The Miranda Warning

23/Բ19- Հայոց պատմության հիմնահարցեր 1 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Հիմնարար գիտելիքներ տալ Հայոց պատմության հին և միջին շրջանի վերաբերյալ, ամրապնդել հարգանք և հպարտություն հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ, դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի, որպես ազգի հարատևման

գրավականի՝ պետականության անհրաժեշտության գիտակցության ձևավորում ու ամրապնդում, որպես պետականության պահպանման և զարգացման նախադրյալի ազգային գաղափարախոսության անհրաժեշտության գիտակցության ձևավորում, հայկական մշակույթի ձևավորումը և զարգացումը պայմանավորող պատմական պայմանների իմացության ամրապնդում և այլն, Հայաստանի երեք հանրապետությունների պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ ձեւավորել այն գիտակցությունը, որ ազգի հարատեւման հիմնական պայմանը պետականության անհրաժեշտությունն է,

նաստել Հայաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման հեռանկարների վերաբերյալ ամբողջական պատկերացման ձեւավորմանը,

նպաստել նորագույն շրջանի հայկական մշակույթի զարգացումը և առանձնահատկությունները պայմանավորող պատմական պայմանների իմացությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ համակողմանի ու խոր գիտելիքներ հայ ժողովրդի պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանի վերաբերյալ:

Կկարողանա՝ քննական ու ինքնուրույն մոտեցումներ ձևավորել հին և միջնադարյան ժամանակաշրջանի պատմական երևույթները գնահատելու առումով:

Կտիրապետի՝ հայոց պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանների երևույթները պատմականորեն գնահատելու, վերլուծելու հմտություններին, կհասկանա ու կարժևորի դրանց ազդեցությունն ու օրգանական կապը հետագա պատմական զարգացումների հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայոց հայրենիքը և հայ ժողովրդի կազմավորումը: **Թեմա 2.** Վանի թագավարություն: **Թեմա 3.** Երվանդունիների պետությունը: **Թեմա 4.** Արտաշեսյանների թագավորությունը: **Թեմա 5.** Արշակունիների թագավարությունը: **Թեմա 6.** Հայկական մշակույթը 4-9-րդ դդ.: **Թեմա 7.** Ֆ դարի ազգային ազատագրական շարժումները: **Թեմա 8.** Բագրատունիների թագավորությունը: **Թեմա 9.** Հայաստանը Զաքարյանների օրոք: **Թեմա 10.** Կիլիկիայի հայկական պետությունը:

23/Բ20- Հայոց պատմության հիմնահարցեր 2 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակը.

Հիմնարար գիտելիքներ տալ Հայոց պատմության նոր և նորագույն շրջանի վերաբերյալ, ամրապնդել հարգանք և հպարտություն հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ, դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի, որպես ազգի հարատևման գրավականի՝ պետականության անհրաժեշտության գիտակցության ձևավորում ու ամրապնդում, որպես պետականության պահպանման և զարգացման նախադրյալի ազգային գաղափարախոսության անհրաժեշտության գիտակցության ձևավորում, հայկական մշակույթի ձևավորումը և զարգացումը պայմանավորող պատմական պայմանների իմացության ամրապնդում և այլն, Հայաստանի երեք հանրապետությունների պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ ձեւավորել այն գիտակցությունը, որ ազգի հարատեւման հիմնական պայմանը պետականության անհրաժեշտությունն է, նաստել Հայաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման հեռանկարների վերաբերյալ ամբաղջական պատկերացման ձեւավորմանը, նպաստել նորագույն շրջանի հայկական մշակույթի զարգացումը եւ առանձնահատկությունները պայմանավորող պատմական պայմանների իմացությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն ժամանակաշրջանի առանցքային հիմնահարցերը:

Կկարողանա ներկայացնել հայոց պատմությա նոր և նորագույն ժամանակաշրջանի ազատագրական պայքարի կարևորագույն դրվագները, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության և Սփյուռքի առանցքային հիմնախնդիրները, 20-րդ դարում հայոց նորագույն պետականության ձևավորման գործընթացները:

Կտիրապետի հայոց պատմության նոր և նորագույն ժամանակաշրջանների օրինաչափությունների և առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայ ազգային ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: **Թեմա 2.** Հայկական հարցի առաջացումը: **Թեմա 3.** Հայ ազգային-քաղաքական կուսակցություններ: **Թեմա 4.** Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջերին-20-րդ դարի սկզբներին. հայերի կոտորածները Օսմանյան Թուրքիայում: **Թեմա 5.** Հայոց ցեղասպանությունը: **Թեմա 6.** Հայաստանի առաջին Հանրապետությունը (1918-1920թթ.): **Թեմա 7.** Խորհրդային Հայաստան: **Թեմա 8.** Հայաստանի անկախության գործընթացը. ՀՀ հռչակումը: **Թեմա 19.** Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը:

12/Բ56- Ֆիզիկական դաստիարակություն – 1 (0 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացը նպատակաուղղված է ուսանողներին սովորեցնել ֆիզիկական կուլտուրայի պահանջները և խնդիրները, օժանդակել աճող սերնդի ֆիզիկական պատրաստվածությանը, օգնել ուսանողներին՝ սովորելու առողջ ապրելակերպի վարման միջոցները, վարժությունների կատարման տեխնիկատակտիկական միջոցները և ստանալու հատուկ ֆիզիկական պատրաստվածություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ Ֆիզիկական կուլտուրայի դերը մատաղ սերնդի դաստիարակման գործում, թեթև ատլետիկայի դերը ֆիզիկական դաստիարակման համակարգում, մարմնամարզական վարժությունների տեխնիկան:

Կկարողանա՝ բացատրել ֆիզիկական դաստիարակության դասավանդման դերը հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինքնուրույն կատարել բժշկական վերահսկողություն և ինքնավերահսկողություն ֆիզիկական դաստիարակության դասերին, սպորտային խմբակներում պարապմունքների ժամանակ, տալ համապատասխան ֆիզիկական բեռնվածություն:

Կտիրապետի՝ վազքի և ֆիզիկական տարբեր վարժությունների տեխնիկաներին:

Բովանդակությունը.

Թեմա 1 . Տեսական տեղեկություններ: **Թեմա 2.** Կարճ տարածության վազքեր: **Թեմա 3.** Վազք 60մ, 100մ, ստարտը և եզրագծի հատումը: **Թեմա** 4. Հեռացատկ տեղից, սպորտային թափավազք: **Թեմա** 5.Միջին տարածության վազք: **Թեմա** 6. Երկար տարածության վազք: **Թեմա** 7. Ակրոբատիկա, եռացատկ տեղից: **Թեմա** 8. Հենացատկ այծի վրայից, ձգումներ կախ դրությունից: **Թեմա** 9. Հեռացատկ տեղից, հեռացատկ այծի վրայից: **Թեմա** 10: Վոլեյբոլիստի կեցվածքով տեղաշարժեր, ցատկեր ցանցի մոտ: **Թեմա** 11. Սկզբնահարված, դաշտի տարբեր մասերը: **Թեմա** 12: **Թեմա** 13 .Սկզբնահարվածի ընդունում, հարձակողական հարված: **Թեմա** 14. Հարձակողական հարվածի շրջափակում: **Թեմա** 15. Երկկողմանի խաղ:

12/Բ57- Ֆիզիկական դաստիարակություն – 2 (0 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացը նպատակաուղղված է ուսանողներին սովորեցնել ֆիզիկական կուլտուրայի պահանջները և խնդիրները, օժանդակել աճող սերնդի ֆիզիկական պատրաստվածությանը, օգնել ուսանողներին սովորելու առողջ ապրելակերպի վարման միջոցները, վարժություններ կատարման տեխնիկա-տակտիկական միջոցները և ստանալու հատուկ ֆիզիկական պատրաստվածություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ կարճ տարածության վազքերի և եռացատկի տեխնիկան:

Կկարողանա՝ կատարել վազք 2000-3000 մ:

Կտիրապետի՝ վոլեյբոլ խաղի տեխնիկային:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գնդակի վերգցումով սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցումը և ամրապնդումը: **Թեմա 2.** Կտրված հարված աջից և ձախից: **Թեմա** 3. Հարված աջից և ձախից գլորումով: **Թեմա 4.** Հաշվով խաղ: **Թեմա** 5: Գնդակի փոխանցում վերևից, ներքևից, 2 ձեռքով ցանցի վրայից: **Թեմա** 6. Ցանցի մոտ գնդակի ետ մղում բռունցքով: **Թեմա** 7.Վերին ուղիղ սկզբնահարված: **Թեմա** 8. Հանդիպակաց փոխանցումից ուղիղ հարձակողական հարված: **Թեմա** 9. Երկկողմանի խաղ: **Թեմա** 10. Փոքր գնդակի նետում հորիզոնական և ուղղահայաց նպատակին: **Թեմա** 11. Փոքր գնդակի նետում աջով և ձախով կամավոր թափավազքից: **Թեմա** 12. Վազք 1500-2000մ: **Թեմա** 13. Վազք 800-1000մ: **Թեմա** 14. Կարճ տարածության վազքեր, արագացումներ: **Թեմա** 15. Նոնակի նետում:

23/Բ54- Փիլիսոփայության հիմունքներ (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

«Փիլիսոփայության հիմունքներ» դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել փիլիսոփայության հիմնարար հարցադրումները, դրանց տեսական և գործնական նշանակությունները, տեղն ու դերը մարդու հոգևոր աշխարհում և աշխարհայացքի ձևավորման գործում: Փիլիսոփայական գիտելիքը հնարավորություն է ընձեռում խորությամբ ընկալելու և վերլուծելու շրջակա միջավայրն ու հասարակական հարաբերությունները, հստակ պատկերացում կազմել հասարակական կարծիքի, զարգացման առաջընթացի, հասարակական շահերի, պահանջմունքների վերաբերյալ և կանխատեսում անել զարգացման ուղղությամբ:

Սովորողը, ծանոթանալով փիլիսոփայական ուսմունքներին, հստակ պատկերացում է կազմելու մարդու էության և գոյության հիմնախնդիրների վերաբերյալ:

Հստակ կողմնորոշում կունենա ժամանակի և տարածության առարկայական պատկերացումների և գիտական ըմբռնման հարցում, ինչպես նաև մարդկային փոխհարաբերությունների, ճշմարիտի, արդարի, ստի և մոլորության խնդրի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ փիլիսոփայության գիտական-մեթոդաբանական, աշխարհայացքային, արժեբանական գործառույթները, ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման, տարբերակման սկզբունքները, քաղաքակրթական զարգացումների օրինաչափությունները և միտումները:

Կկարողանա՝ պարզաբանել բնական և հասարակական գիտությունների գործառույթները, տարբերակել քաղաքակրթական հայեցակարգերն ու դրանց հարացույցերը, գնահատել փակ և բաց համակարգերի զարգացման առանձնահատկությունները, վերլուծել հասարակության պատմական զարգացման ուղիները:

Կտիրապետի՝ փիլիսոփայության հիմնարար եզրույթներին, սկզբունքներին և նրանց տեսական ու գործնական նշանակությանը, կեցության, մարդկային գոյության իմաստի հիմնախնդիրներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Փիլիսոփայության առարկայական տիրույթը և գործառույթները: **Թեմա 2.** Փիլիսոփայական մտքի զարգացման տրամաբանությունը: **Թեմա 3.** Գոյաբանություն: **Թեմա 4.** Փիլիսոփայական մարդաբանություն /անթրոպոլոգիա/: **Թեմա 5.** Հոգեկանի ծագման հիմնահարցը տեսական-գաղափարական տարասեռ համակարգերում: **Թեմա 6.** Իմացաբանություն: **Թեմա 7.** Սոցիալական փիլիսոփայություն:

23/Բ53- Տրամաբանության հիմունքներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Տրամաբանություն դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին մի շարք հիմնախնդիրների, տրմաբանական կանոնների և օրենքների, որը կօգնի նրանց յուրաքանչյուրն իր մասնագիտությունների ոլորտում կիրառելու և առավել շոշափելի արդյունքների հասնելու: Յուրացնելով տրամաբանական գիտելիքը, որը կնպաստի ուսանողի մոտ կանոնավոր մտածողության զարգացման, սեփական մտքերի կոնկրետ ներկայացմանը և հիմնավորմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ տրամաբանության օրենքները և սահմանման ու բաժանման կանոնները, հասկացության կազմավորման ձևերը, մտահանգման տարատեսակները:

Կկարողանա՝ վերլուծել և մեկնաբանել փաստերը, բացատրել մտքի կառուցվածքի տրամաբանական կանոններն ու օրենքները, ճշմարիտ եզրակացություններ ստանալ և հիմնավորել գիտական գիտելիքները:

Կտիրապետի՝ բանավեճերի, ապացուցման, հերքման, քննադատության գործընթացներին, գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառույթների կիրառմանը, կանոնավոր մտածողության հմտությունների, տրամաբանության օրենքների պահանջների կաապակցմանը մասնագիտական առարկայի պահանջների հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Տրամաբանության առարկան: **Թեմա 2.** Հասկացության ընդհանուր բնութագիրը: **Թեմա 3.** Սահմանում և բաժանում: **Թեմա 4.** Դատողություն: **Թեմա 5.** Մտահանգում: **Թեմա 6.** Դեդուկտիվ մտահանգումներ: **Թեմա 7.** Ինդուկտիվ մտահանգում: **Թեմա 8.** Ապացուցում և հերքում: **Թեմա 9.** Վարկած: Գիտական տեսության տրամաբանական հիմքերը: **Թեմա 10.** Տրամաբանության օրենքները:

23/Բ27-Հետազոտության մեթոդաբանություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել հետազոտություն կատարելու սկզբունքներին, ընդունված կանոններին, պահանջներին, զարգացնել մասնագիտական ոլորտում խնդրո առարկայի ուսումնասիրման կարողությունները: Ապահովել ինչպես ուսումնական, այնպես էլ ակադեմիական հետազոտական աշխատանք (ռեֆերատ, կուրսային աշխատանք, բակալավրի ավարտական աշխատանք կատարելու, հոդված գրելու) հիմնական սկզբունքները, հետազոտական աշխատանքի պլանավորման կանոնները, աշխատանքին առաջադրվող կառուցվածքային և բովանդակային պահանջները, գիտական աշխատանքի էթիկայի նորմերը, տեղեկատվություն հավաքելու, ուսումնասիրելու, վերլուծելու, համեմատելու, ընդհանրացնելու, մեջբերումներ ու հղումներ կատարելու, եզրակացություններ ու առաջարկություններ ձևակերպելու, այնուհետև դրանք ամփոփ ու գրագետ ներկայացնելու եղանակները: Դասընթացը կօգնի ուսանողներին արդյունավետ պլանավորել իրենց հետազոտությունները, պատրաստել գիտականության սկզբունքներին և գիտական էթիկայի կանոններին համապատասխանող աշխատանքներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ գիտական ճանաչողության հասկացությունը, հետազոտական աշխատանքի առանձնահատկությունները, ուսումնասիրության մեթոդները, տեղեկատվական աղբյուրների, մասնագիտական գրականության, վիճակագրական նյութի հետ աշխատելու կանոնները, հետազոտական աշխատանք կատարելու եղանակները, աշխատանքում հղումների կատարման կարգը:

Կկարողանա՝ հիմնավորել թեմայի արդիականությունը, ներկայացնել ուսումնասիրության օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրը, առանձնացնել հետազոտության հիմնական դրույթները, ձևակերպել եզրակացություններ և առաջարկություններ:

Կտիրապետի՝ հետազոտական աշխատանքի մեթոդներին, արդի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով մասնագիտական հիմնախնդրի ուսումնասիրության ձևերին, եզրակացությունների ներկայացման գիտական ոճին:

Ներածություն: Գիտական ճանաչողությունը: Գիտական ոճ: Առանձնահատկությունները:

Թեմա 1. Գիտական ճանաչողությունը, գիտահետազոտական աշխատանքների դասակարգումը: **Թեմա 2.** Գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր մեթոդաբանությունը: **Թեմա3.** Գիտահետազոտական աշխատանքների տարատեսակները: **Թեմա 4. Գիտահետազոտական աշխատանք գրելու ընդհանուր սկզբունքները:** Մասնագիտական աղբյուրների բացահայտման եղանակները: **Թեմա 5. Փաստարկման ընդհանուր մեթոդաբանությունը և ակադեմիական ազնվությունը** /Մ. Զաքարյանի «Ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրները Հ. Մաթևոսյանի «Մեծամոր» էսսեում» հոդվածի օրինակով/ **Թեմա6.** Հղումները գիտական հրապարակումներում: **Հետազոտական աշխատանք կատարելիս առավել հաճախ հանդիպող հասկացություններ:**

Թեմա 7. Ռեֆերատը որպես տեքստի հիմնական տեղեկատվության սեղմ փոխադրություն: **Կուրսային և ավարտական աշխատանքների տիտղոսաթերթի օրինակելի նմուշներ Թեմա 8.** Գրավոր խոսք: Ծանոթագրություններ: Ներածություն: Հիմնական մաս: Եզրակացություն: Օգտագործված գրականության ցանկ:

24/Բ12- Կրոնագիտության հիմունքներ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Ուսանողներին տալ ընդհանուր համակարգված գիտելիքներ կրոնի, դրա պատմական դրսևորումների առաջացման, ձևավորման և զարգացման, հասարակական և հոգևոր կյանքում դերակատարության մասին, տալ ընդհանուր գիտելիքներ աշխարհում գոյություն ունեցող կրոնների, դրանց, դասակարգման սկզբունքների, օրինաչափությունների, առանձնահատկությունների, Հայոց եկեղեցու հիմնական առանձնահատկությունների վերաբերյալ, ծանոթացնել ժամանակակից ավանդական և ոչ ավանդական կրոնների աշխարհայացքային և դավանաբանական հիմնարար սկզբունքներին և պաշտամունքային առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ կրոնի սահմանումը և կառուցվածքը, նրա տեղն ու դերը հասարակության մեջ, ժամանակակից կրոնների և կրոնների պատմական ձևերի ձևավորման ու զարգացման պատմությունը, ազգային և համաշխարհային կրոնների բնութագիրը, գլխավոր առանձնահատկություններն ու հիմնական գծերը,, ոչ ավանդական կրոնների առանձնահատկությունները և դասակարգումը, Հայոց եկեղեցու պատմությունը, դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկությունները, ՀՀ արդի կրոնական իրավիճակը:

Կկարողանա՝ հասկանալ և վերլուծել կրոնական ու կրոնագիտական գրականությունը, սահմանել կրոն հասկացությունը և կրոնական տարբեր երևույթները, դասակարգել կրոնի բազմազան և տարատեսակ դրսևորումները, խմբավորել տարբեր կրոններ, բացահայտել և համակարգել ժամանակակից կրոնների աշխարհայացքային, ծիսապաշտամունքային, դավանաբանական առանձնահատկությունները, իրականացնել կրոնների համեմատական վերլուծություն և քննական արժևորում, դիտարկել և համեմատել տարբեր կրոններ:

Կտիրապետի՝ ժամանակակից կրոնների աշխարհայացքային, դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկություններին, կրոնների ուսումնասիրության մեթոդներն ու սկզբունքերը բացատրելու և լուսաբանելու հնարներին, կրոնագիտության արդի հիմնախնդիրներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. «Կրոնագիտության հիմունքներ» դասընթացի առարկան: **Թեմա 2.** Կրոնի պատմական ձևերը: **Թեմա 3.** Բուդդայականություն: **Թեմա 4.** Քրիստոնեություն: **Թեմա 5.** Իսլամ: **Թեմա 6.** Արդի կրոնական դենոմինացիաներն ու ներփակ հոսանքները: **Թեմա 7.** Արդի կրոնական իր վիճակը ՀՀ-ում:

1.2. Կամընտրական դասընթացներ

23/Բ38- Մշակութաբանության հիմունքներ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել կայուն գիտելիքներ մշակույթ հասկացության վերաբերյալ: Արմատավորվում է համակարգված պատկերացում մշակույթ հասկացության բաղադրիչների, գործընթացների և մեխանիզմների մասին: Դասընթացը բացահայտում է մշակութաբանության՝ որպես գիտության էությունը և տեղն ու դերը մարդու հոգևոր աշխարհում: Օգնում է ուսանողին հստակ պատկերացում կազմելու, թե ինչպես է առաջացել մշակույթը նախ որպես երևույթ, հոգևոր պահանջմունքի տարատեսակ, այնուհետև նպաստել մարդկային

հասարակության առաջընթացին: Ծանոթանալով նախնադարից մինչ օրս տարբեր դարաշրջաններում տարբեր ժողովուրդների ու ազգերի կողմից ստեղծած մշակութային արժեքներին, հնարավորություն կունենա այն համադրելու հայ ժողովրդի կողմից ստեղծած մշակութային արժեքներին: Մշակութաբանության, որպես գիտության մեջ հայազգի մշակութաբանության Էդուարդ Մարգարյանի ներդրումը, մշակույթը որպես մարդկային գործունեության հատուկ կամ առանձնահատուկ գործունեություն դիտարկելը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ «Մշակույթ» հասկացության սահմանումները, մշակույթի առանձին բաղադրիչներն ու դրսևորումները:

Կկարողանա՝ բացատրել մշակույթի կառուցվածքը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները, ներկայացնել համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունները, լուսաբանել մերօրյա մշակութային երևույթները և գործընթացները, զանազանել համաշխարհային մշակութային գործընթացի պատմական և լոկալ դրսևորումները:

Կտիրապետի՝ արդի դարաշրջանում մշակութային գործոնի դերի աճի կարևորման հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մշակութաբանությունը որպես գիտություն: Մշակույթի ըմբռնումը: Մշակույթ հասկացության ծագումը և բովանդակության պատմական զարգացումը: Մշակույթի սահմանումը և գործառույթները: Մշակույթի կառուցվածքը, հոգևոր և նյութական մշակույթ: **Թեմա 2.** Մշակույթի մակարդակները: Հոգևոր գործունեության մշակութային ձևերը, մշակույթի ազգային և համամարդկային բնույթը, զանգվածային և էլիտար մշակույթ, կրոնի, գիտության, արվեստի ու մշակույթի փոխկապակցվածությունը: **Թեմա 3.** Մշակույթ-բնություն-հասարակություն: Հասարակություն և մշակույթ, բնություն և մշակույթ, մշակույթ-արժեք-քաղաքակրթություն, քաղաքակրթության մասին արդի տեսությունները: **Թեմա 4.** Նախնադարյան հասարակության և Հին արևելքի մշակույթը: Նախնադարյան հասարակության պարբերացման հարցը: Օյկումեն: Հին Միջագետքի, Եգիպտոսի և Հնդկաստանի մշակույթները: **Թեմա 5**. Հին Հունաստանի և Հռոմի մշակույթը: Հին Հունաստանի մշակույթի զարգացման փուլերը, դասական շրջան: Հելլենիզմի մշակույթը և Հին Հռոմի մշակույթը: **Թեմա 6.** Միջնադարյան մշակույթը: Վերածննդի դարաշրջանի մշակույթը: Բյուզանդիայի մշակույթը: Եվրոպայի միջնադարյան մշակույթը: Կրթության

համակարգի փոփոխությունը, համալսարանների հիմնումը /Բոլոնյան և Փարիզյան մոդելները/: Վերածնությունը Իտալիայում: Հյուսիսային վերածնունդ: Վերածունդը Արևելքում: Արևելյան վերածննդի հարցը: **Թեմա 7.** Նոր դարաշրջանի մշակույթը /17-19-րդ դար/: 17-րդ դարի Եվրոպական մշակույթը: 18-րդ դ.մշակույթը, 19-րդ դարի մշակույթը: Ռուսական մշակույթի առանձնահատկությունները: **Թեմա 8.** Մշակույթը 20-րդ դարում: Մշակույթը որպես 20-րդ դարի պատմական իրադարձության անդրադարձ: Գեղագիտական նոր ըմբռնումների ու գեղարվեստական ուղղությունների ձևավորումը:

Թեմա 9. Հայկական մշակույթը պատմական զարգացման ընթացքում, ձևավորման նախադրյալները, համահայկական պետական համակարգի ձևավորումը և մշակույթը: Մշակույթը Արարատի թագավորությունում: Հայկական մշակույթը հելլենիզմի դարաշրջանում: Հայկական միջնադարյան մշակույթը: Նոր շրջանի հայկական մշակույթը:

12/Բ28- Տնտեսագիտության հիմունքներ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Տնտեսագիտության հիմունքներ դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ տնտեսության զարգացման պատմական շրջաններում ձևավորված տնտեսական հարաբերությունների, տնտեսական կատեգորիաների և տնտեսական և իրավական օրենքների համակարգերի, շուկայական տնտեսության գործառնության միկրոտնտեսական և մակրոտնտեսական օրինաչափությունների մասին: Զարգացնել գիտելիքներ տնտեսագիտական հասկացությունների, դրանց վերլուծության կարևորության և պրակտիկայում դրանք կիրառելու արդյունքում ֆինանսների ձևավորման և դրանց վերաբաշխման ուղղությամբ: Ուսումնասիրել և զուգակցել տնտեսական և իրավական օրենքները:

Դրանք անհրաժեշտ են տնտեսավարող սուբյեկտների գործունեության գնահատման, համապատասխան իրավական դաշտի ապահովման և ձեռնարկատիրական գործունեությունը վերահսկելու, ինչպես նաև ազատ մրցակցային պայմաններ ապահովելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ տնտեսական հարաբերությունների ժամանակակից տեսությունները, շուկայական տնտեսության զարգացման օրինաչափությունները, շուկայի հիմնական տարրերի գործողության մեխանիզմը, ձեռնարկատիրական գործունեության սկզբունքները և բիզնեսի կազմակերպման խնդիրները, պետության տնտեսական գործառութները, տնտեսության կարգավորման շուկայական և պետական մեխանիզմները, համաշխարհային տնտեսության զարգացման օրինաչափությունները և ազգային տնտեսության տեղն ու դերը:

Կկարողանա՝ կողմնորոշվել, արտահայտվել տնտեսական հարաբերությունների ժամանակակից պրակտիկ քննարկումներում, վերլուծել, պատկերացնել շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպությունների գործունեության նպատակներին և արդյունքներին հասնելու և շահույթ ստանալու առանձնահատկությունները,մեկնաբանել, բնութագրել տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը, մեկնաբանել, լուսաբանել տնտեսագիտական հասկացությունների, մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը բնակչության կենսամակարդակի բարձրացման և այդ գործում մարդկային կապիտալի դերի կարևորությունը, ներկայացնել, տարբերակել ազգային տնտեսության զարգացման համեմատական ցուցանիշներ և կիրառել այլ երկրների առաջավոր փորձը,տնտեսական կոնկրետ խնդիրների հետ կապված՝ բացահայտել, առանձնացնել թերությունները և գտնել ժամանակակից պայմաններում դրանց լուծման ուղիները:

Կտիրապետի՝ փոքր և միջին ձեռնարկությունների տնտեսական հաջողությունների հասնելու համար ստեղծագործական մոտեցումներ ցուցաբերելու և խմբային աշխատանքում իրեն դրսևորելու հմտություններին, պրակտիկ աշխատանքում տնտեսական պրոբլեմներ լուծելիս մասնակից դառնալուն, քննադատական մտածողություն ցուցաբերելուն,տնտեսական և իրավական օրենքների զուգակցմանը,նորմատիվային տնտեսագիտական մոտեցումների պրակտիկ կիրառմանը, տնտեսական վերլուծություններ և հաշվարկներ կատարելու մեթոդների գործնական կիրառությանը, ֆինանսական, բյուջետային գիտելիքները առօրյա կյանքում օգտագործելու, հանրային կյանքին տեղեկացված և ակտիվ մասնակցելու, առաջացած խնդիրները լուծելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Տնտեսագիտության հիմունքներ առարկան և ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 2.** Տնտեսագիտության ելակետային հասկացությունները: **Թեմա 3.** Շուկայական տնտեսություն: Շուկայի հիմնական տարրերը: **Թեմա 4.** Աշխատանքի և կապիտալի շուկաներ: **Թեմա 5.** Ձեռնարկատիրական գործունեություն և շահույթ: **Թեմա 6.** Ազգային տնտեսության գնահատման հիմնական ցուցանիշները: **Թեմա 7.** Շուկայական տնտեսության ցիկլային զարգացումը: Գործազրկությունը և ինֆլյացիան: Եկամուտների բաշխման տեսությունը: **Թեմա 8**. Սպառում, խնայողություն, ներդրում: **Թեմա 9.** Դրամավարկային քաղաքականությունը և բանկային համակարգը: **Թեմա 10.** Ֆինանսական համակարգը և պետության ֆինանսական քաղաքականությունը:

2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ

2.1 Պարտադիր դասընթացներ

13/Բ52 – Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ‹‹Մարդ - բնական միջավայր›› համակարգում բնակչության անվտանգ կենսագործունեության ապահովումը: Տնտեսական գործունեության ընթացքում մարդը միշտ ենթարկվում է շրջակա միջավայրի բացասական երևույթների ազդեցություններին, ենթարկվում է արտադրական վնասվածքների, պետք է պատկերացնի և կարողանա ցանկացած իրավիճակում ճիշտ միջոցառումներ իրականացնել դրանց հետևանքները վնասազերծելու և նորմալ կենսագործունեության համար բավարար պայմաններ ստեղծելու համար: Դասընթացում մեծ տեղ է հատկացվում նաև աշխատանքային նորմալ պայմաններ ստեղծելու և իր հանգիստը կազմակերպելու գործընթացների գործընթացներին:

Դասընթացի նպատակն է ծանոթացնել առաջին օգնության հիմունքներին: Ստացված գիտելիքները հնարավարություն են տալիս բնութագրել արտակարգ պատահարը (իրավիճակը), որի դեպքում որոշակի տարածքում (աղետի գոտի, դեպքի վայր) խաթարվում է կարգավորված

կենսագործունեությունը և արդյունքում առաջանում է առաջին օգնություն ցուցաբերելու անհրաժեշտություն; հասկանալ թե ով է տվյալ իրավիճակում տուժած: Դասընթացը հնարավարություն է ընձեռում արտակարգ իրավիճակներում կողմնորոշվել, ճիշտ որոշում կայացնել և իրադրությանը համապատասխանաբար օգնության քայլեր ձեռնարկել՝ ցուցաբերել առաջին օգնություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ ճանաչել մարդու օրգանիզմի կառուցվածքը և ֆունկցիոնալ առանձնահատկությունները, հիմնավորել անվտանգ կենսագործունեության համար անհրաժեշտ ընդհանուր սանիտարատեխնիկական պահանջները, նկարագրել բնական միջավայրը և նրա աղտոտումը, լուսաբանել մարդու տեղը և դերը բիոսֆերայում,մթնոլորտ, նրա աղտոտումն ու հետևանքները, ջրոլորտ, նրա աղտոտումն ու հետևանքները, բնահող, նրա աղտոտումն ու հետևանքները, ներկայացնել բնական, տեխնածին, էկոլոգիական, անտրոպոգեն ծագման արտակարգ իրավիճակների էությունները և առանձնահատկությունները, նկարագրել արտակարգ իրավիճակները, վերլուծելու արտակարգ իրավիճակները և կազմակերպել իրադրությանը համապատասխան առաջին բուժօգնություն, արժևորելու առաջին բուժօգնության գիտելիքները և հմտությունները:

Կկարողանա՝ կիրառել ստացած գիտելիքները ճիշտ կողմնորոշվել ցանկացած արտակարգ իրավիճակների պայմաններում զերծ մնալ սպասվելիք վտանգներից և օգնություն ցուցաբերել մյուսներին, իրականացնել պաշտպանություն անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից, հակահրդեհային պաշտպանություն, պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլկտրական պարպումներից, ներկայացնել իոնացնող ճառագայթների ազդեցությունից, էլեկտրամագնիսական դաշտի և լազերային ճառագայթման ազդեցությունից պաշտպանվելու ուղիները, լուսաբանել պաշտպանությունը աղմուկից, ինֆրա- և ուլտրաձայներից, թրթռոցներից (տատանումներից), վնասակար նյութերի ազդեցությունից, կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում, իրադրությանը համապատասխան օգնության քայլեր ձեռնարկել, ցուցաբերել առաջին բժշկական օգնություն արտակարգ իրավիճակին:

Կտիրապետի՝ կայուն զարգացման ռազմավարությանը անվտանգության կառավարման համակարգերին, արտակարգ իրավիճակների ընթացքում ձեռնարկվող քայլերին, անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից պաշտպանվելու հմտություններին,

քիմիական և ռադիոակտիվ վարակվածության գոտիներում մարդկանց անհատական պաշտպանական միջոցներին, վտանգված տեղանքում փրկարարական աշխատանքներիռեժիմների, կատարել արհեստական շնչառություն, կատարել սրտի անուղղակի մերսում:

Բովանդակությունը.

Ներածություն: Թեմա 1. Մարդու օրգանիզմի բաղադրությունը, կառուցվածքը և ֆունկցիոնալ առանձնահատկությունները: **Թեմա 2.** Բնական միջավայրը և նրա աղտոտումը: **Թեմա 3.** Պաշտպանություն անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից: **Թեմա 4.** Հակահիդեհային պաշտպանություն: **Թեմա 5.** Պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլկտրական պարպումներից: **Թեմա 6.**Պաշտպանություն էլեկտրական հոսանքի ազդեցությունից **Թեմա 7.** Իոնացնող ճառագայթների ազդեցությունից: **Թեմա 8.** Պաշտպանություն էլեկտրամագնիսական դաշտի և լազերային ճառագայթման ազդեցությունից: **Թեմա 9.** Պաշտպանություն աղմուկից, ինֆրա և ուլտրա ձայներից: **Թեմա 10.** Պաշտպանություն ճնշման տակ գտնվող համակարգերում առաջացող վտանգներից: **Թեմա 11.** Պաշտպանություն թրթռոցներից (տատանումներից): **Թեմա 12.** Պաշտպանություն վնասակար նյութերի ազդեցությունից: **ԹԵՄԱ 13.** Հրատապ գործողությունների փուլերը: **ԹԵՄԱ 14.** Սրտի աշխատանքի խանգարումներ: **ԹԵՄԱ 15.** Արյունահոսություններ: **ԹԵՄԱ 16.** Այրվածքներ: **ԹԵՄԱ 17.** Թունավորումներ:

11/Բ51- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ (3կրեդիտ)

Շաբաթական 2ժամ (10 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Ծանոթացնել ուսանողներին համակարգիչների, ծրագրավորման, ինֆորմացիոն տեխնոլոգիաների հիմնական հասկացություններին, համակարգիչների մինիմալ կառուցվածքին և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքին, Windows օպերացիոն համակարգին և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին:

Սովորեցնել Microsoft Office ծրագրային փաթեթի հիմնական կիրառական տեխնոլոգիաներով գործնական աշխատանքներ կատարելու հմտությունները՝MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչը և աշխատանքը նրա հետ, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրիչը, օգտագործել MS Office փաթեթի Power Point ծրագրը շնորհանդեսներ պատրաստելու համար: Ծանոթացնել համացանցին և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ ինֆորմատիկայի տեսական հիմունքները, համակարգիչների տեխնիկական ապահովումը և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի հիմունքները, համակարգիչների ծրագրային ապահովման տեսակները, նշանակությունը և աշխատանքի սկզբունքները, MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչի և նրա աշխատանքի հիմունքները, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրիչի օգտագործման հիմունքները, Համացանցի կիրառության, համացանցում մատուցվող ծառայություններից օգտվելու սկզբունքները:

Կկարողանա՝ աշխատել «Windows»-ի միջավայրում, օգտագործել MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչը՝ փաստաթղթերի ստեղծման և ձևավորման համար, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրիչը, MS Office փաթեթի Power Point խմբագրիչը՝ ներկայացումներ պատրաստելու համար, օգտվել համացանցից:

Կտրրապետի՝ համակարգիչների կառուցվածքի և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի վերաբերյալ գիտելիքների, Windows օպերացիոն համակարգի և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին, MS Office փաթեթի Word տեքստային խմբագրի օգնությամբ փաստաթղթերի ստեղծման և ձևավորման հմտություններին, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրի օգտագործման հմտություններին, համացանցից օգտվելու և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ինֆորմատիկայի տեսական հիմունքները: **Թեմա 2.** Համակարգիչներ, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքները: **Թեմա 3.** Ալգորիթմներ, բլոկ-սխեմաներ, ծրագրեր, ծրագրային ապահովում: **Թեմա 4.** Windows օպերացիոն համակարգ, ընդհանուր տեղեկություններ: **Թեմա 5.** Microsoft Office ծրագրային փաթեթի հիմնական տեխնոլոգիաները: **Թեմա 6.** Համացանց:

2.2 Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ

13/Բ5 – Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Ուսանողներին պատկերացում տալ բնագիտության հայեցակարգերի վերաբերյալ ժամանակակից մոտեցումների մասին: Դասընթացը միտված է ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության արդի ձեռքբերումների լուսաբանմանը: Դասընթացը բացատրում է կենդանի և անկենդան նյութի տարբերությունը, հնարավոր զարգացումները՝ կապված ինֆորմացիայի և ինֆորմացիոն փոխներգործության հետ: Տրված է կենսոլորտի կառուցվածքային առանձնահատկությունները, դրա առանձին բաղադրիչների միջև եղած կապերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ բնագիտության ժամանակակից հայեցակարգերը, դրանց վերաբերյալ ժամանակակից մոտեցումները, բնագիտության զարգացման հիմնական փուլերը, բնագիտության սկզբունքները, բնության համակարգերի կառուցվածքը, առաջացման և զարգացման հայեցակարգերը, բնագիտության դերը աշխարհաընկալման գործընթացներում, հիմնավորել բնագիտության դերը արտադրության զարգացման և նորագույն տեխնոլոգիաների ներդրման գործում, տիեզերքի մասին ժամանակակից պատկերացումները, արեգակնային համակարգի առանձնահատկությունները, երկիր մոլորակը, կենսոլորտը, որպես գլոբալ էկոհամակարգ:

Կկարողանա՝ վերլուծել բնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները, կատարել համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ, նկարագրել կենսոլորտի բաղադրիչների՝ /ջրոլորտ, քարոլորտ, մթնոլորտ/ փոխադարձ կապը և փոխպայմանավորվածությունը, հիմնավորել մատերիայի կենսաբանական կազմակերպվածության բնութագրերը, բացատրել երկրի վրա օրգանական նյութերի առաջացման նախադրյալները:

Կտիրապետի՝ բնագիտական գիտությունների մեթոդաբանությանը և գործնական կիրառության հմտություններին, բնություն-կենսոլորտ-մարդ համակարգի փոխներգործության առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ժամանակակից բնագիտության գործառույթները, հայեցակարգերը, իմացության մեթոդաբանությունը: **Թեմա 2.** Բնափիլիսոփայության պատկերացումները և գիտական գիտելիքները Անտիկ աշխարհում և միջին դարերում: Վերածննդի դարաշրջանի և Նոր ժամանակի գիտական հեղափոխությունը: Վերածննդի դարաշրջանը և բնագիտական հայտնագործությունները: **Թեմա 3.** Տիեզերքի մասին ժամանակակից պատկերացումները: Հասկացողություն տիեզերական մասշտաբների մասին: **Թեմա 4.** Արեգակնային համակարգի

կառուցվածքը: **Թեմա 5.** Երկիր մոլորակը որպես բնագիտական հայեցակարգերի կարևորագույն օբյեկտ, երկրի կառուցվածքը և ձևը: **Թեմա 6.** Մթնոլորտ, կառուցվածքի և բաղադրամասերի վերաբերյալ ժամանակակից պատկերացումները **Թեմա 7.** Արեգակնային ճառագայթում, սպեկտրիալ բաղադրությունը: **Թեմա 8.** Ջրոլորտ, ջուրը և կյանքը: **Թեմա 9.** Երկրագնդի վրա օրգանական նյութերի **առաջացման** նախադրյալները: **Թեմա 10.** Արեգակնային ճառագայթման չափման մեթոդները: **Թեմա** 11. Երկրագնդի օդային թաղանթը, առանձնահատկությունները : **Թեմա 12.** Հողերի ֆիզիկաքիմիական հատկությունների որոշման մեթոդները: **Թեմա** 13. Ջուրը երկրի վրա և դրա հատկությունները: Ջրոլորտի էկոլոգիական հիմնահարցերը: **Թեմա 14.** Երկրի վրա օրգանական նյութերի առաջացման նախադրյալները

13/Բ25 – Սոցիոլոգիա (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոցիոլոգիայի՝ որպես գիտության առանձնահատկություններին, գիտությունների համակարգում սոցիոլոգիայի տեղին ու դերին, սոցիոլոգիայի աշխարհայացքային և էթիկական առանձնահատկություններին, ուսումնասիրության առարկային՝ հասարակությանը և դրա կառուցվածքին, սոցիոլոգիայի հիմնարար տեսություններին, մշակույթին և դրա տարրերին, ինչպես նաև հասարակության մեջ տեղի ունեցող մի շարք սոցիալական գործընթացներին ու առկա հիմնախնդիրներին: Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին սոցիոլոգիական գիտության ձևավորմանն ու զարգացմանը, առանցքային հասկացություններին և պարզաբանել սոցիալական աշխատանքի տարբեր բնագավառներում դրանց կիրառման առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ սոցիոլոգիական գիտելիքների ազատ կիրառության հիմնարար սկզբունքի, հասարակության սոցիալական կառուցվածքի, սոցիոլոգիական տեղեկատվության հավաքման մեթոդների, դրանց առանձնահատկությունների և կիրառության, սոցիոլոգիական հետազոտությունների կատարման մեթոդների մասին:

Կկարողանա՝ բնորոշել առօրյա կյանքի երևույթների և գործընթացների սոցիալական էությունը, կիրառել սոցիոլոգիայի տեսական մոտեցումները՝ հասարակության տարբեր գործընթացների,

հիմնախնդիրների մեկնաբանման նպատակով, իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն:

Կտիրապետի՝ սոցիոլոգիական աշխարհայացքի առանձնահատկություններին, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու , սոցիոլոգիական հետազոտություններ կատարելու հմտություններին:

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1. Սոցիոլոգիան որպես գիտություն.

Սոցիոլոգիան որպես գիտություն. կայացման պատմությունն ու զարգացման առանձնահատկությունները: Սոցիոլոգիայի առաջացման նախադրյալները: Սոցիոլոգիայի ուսումնասիրման օբյեկտը և առարկան: Սոցիոլոգիայի մեթոդը: Սոցիոլոգիայի կառուցվածքը: Մակրո և միկրոսոցիոլոգիա: Սոցիոլոգիան և այլ գիտությունները: Սոցիոլոգիայի գործառույթները:

ԹԵՄԱ2. Ամերիկյան և ժամանակակից արևմտյան սոցիոլոգիան.

1920-1940 թթ. էմպիրիկ սոցիոլոգիան: Թ. Փարսոնսի սոցիալական գործողության տեսությունը, սոցիալական համակարգերի հայեցակարգը: Ռ. Մերթոնի միջին մակարդակի տեսությունը և գործառական վերլուծությունը: Բախման տեսությունը: Դյուրգհեյմյան ավանդույթը ֆրանսիական սոցիոլոգիայում: Վեբերական և մարքսիստական ավանդույթները գերմանական սոցիոլոգիայում: Ժամանակակից արևմտյան սոցիոլոգիա:

ԹԵՄԱ3. Հասարակությունը որպես սոցիոլոգիական վերլուծության օբյեկտ. Հասարակության մասին պատկերացումների ծագումը: «Հասարակություն» հասկացությունը հիմնական սոցիոլոգիական տեսություններում: Հասարակությունը որպես սոցիալական համակարգ: Հասարակության հիմնական հայտանիշները: Հասարակությունների տիպավորումը: «Սոցիալական կառուցվածք» հասկացությունը: Մակրո և միկրոկառուցվածք: Սոցիալական խմբեր: **ԹԵՄԱ4. Սոցիալական հաստատություններ և սոցիալական կազմակերպություններ.** «Սոցիալական հաստատություն» հասկացությունը: Սոցիալական հաստատությունների հիմնական հայտանիշները: Սոցիալական հաստատությունների տիպաբանությունը: Սոցիալական հաստատությունների գործառույթները: «Կազմակերպություն» հասկացությունը: Սոցիալական կազմակերպությունների ձևավորման մեխանիզմները: Սոցիալական կազմակերպության հիմնական հայտանիշները: Սոցիալական կազմակերպությունների տիպաբանությունը: **ԹԵՄԱ 5. Սոցիալական շերտավորվածություն և սոցիալական շարժունություն.** Սոցիալական անհավասարության հիմնախնդիրը սոցիոլոգիայում: «Սոցիալական շերտավորվածություն» հասկացությունը: Շերտավորված համակարգերի տիպերը: Խորհրդային հասարակության սոցիալական շերտավորվածությունը: «Սոցիալական շարժունություն» հասկացությունը: Սոցիալական շարժունության հիմնական տեսակները: Սոցիալական շարժունության հիմնական ուղիներն ու մեխանիզմները: Սոցիալական շարժունության հիմնական չափանիշները: Սոցիալական շարժունությունը ԽՍՀՄ-ում և ժամանակակից հասարակության մեջ: **ԹԵՄԱ 6. Անձի սոցիոլոգիական հիմնախնդիրները և սոցիալականացումը.** «Անձ հասկացությունը» և անձի տեսությունները:

Անձի կառուցվածքը: Անձի տիպերը: Անձի գործառույթները, սոցիալական կարգավիճակը և սոցիալական դերերը: Հասարակության և անձի փոխազդեցությունը: Սոցիալականացման հասկացությունները և տեսությունները: Սոցիալականացման փուլերը: Սոցիալականացման գործակալները և ինստիտուտները: **ԹԵՄԱ 7. Շեղված վարք.** «Սոցիալական նորմեր» հասկացությունը: Սոցիալական նորմերի տեսակները: Վարքի շեղման բացատրության հիմնական գիտական մոտեցումները: Շեղված վարք: Շեղված վարքի պատճառները: Վարքի շեղման հիմնական ձևերը: Սոցիալական հսկողության հիմնախնդիրները, հիմնական մեխանիզմներն ու մեթոդները: **ԹԵՄԱ 8. Սոցիոլոգիական հետազոտություններ. կառուցվածքը, մեթոդիկան և տեխնիկան.** Սոցիոլոգիական հետազոտության փուլերն ու տեսակները: Սոցիոլոգիական հետազոտությունների ծրագիրը: Սոցիոլոգիական տեղեկատվության հավաքման մեթոդները: Դիտարկման մեթոդը: Փաստաթղթերի վերլուծության մեթոդը: Փորձի մեթոդ: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների կիրառումը և վերլուծությունը:

3. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ

3.1 Պարտադիր դասընթացներ

21/Բ25- Պետության և իրավունքի տեսություն – 1 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

«Պետության և իրավունքի տեսությունը» իրավագիտական, փիլիսոփայական, ընդհանուր տեսական-պատմական, մեթոդաբանական բնույթի գիտություն է, որը կազմում է իրավագիտության հիմքը: Ուստի, «Պետության և իրավունքի տեսություն» դասընթացը հիմնարար նշանակություն ունի և տեսական ու մեթոդաբանական հիմք է հանդիսանում բոլոր ճյուղային և հատուկ իրավաբանական դասընթացների համար: Դասընթացի նպատակն է ապահովել պետության և իրավունքի հասկացության, ծագման և էության, պատմական տիպերի ու ձևերի, գործառույթների իմացություն, գիտելիքներ հաղորդել հասարակության պետահիրավական վերնաշենքի, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման, սոցիալական կյանքի կազմակերպման պետահիրավական ձևերի ու կառուցակարգերի, հասարակության, պետության և իրավունքի փոխհարաբերությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ գիտության հասկացությունը, նշանակությունը և գիտությունների տեսակները, պետության և իրավունքի տեսության ուսումնասիրման առարկան և մեթոդները, գործառույթները, պետության և իրավունքի տեսության կապը մյուս հասարակական գիտությունների հետ, պետության ձևավորման նախադրյալները, պետության առաջացման թեոլոգիական (աստվածաբանական), նահապետական, օրգանական, պայմանագրային, մարքսիստական, հոգեբանական, ռասայական, բռնության և մյուս տեսությունները, պետության հիմնական հատկանիշները, պետության պատմական տիպերը և ձևերը, պետության ներքին և արտաքին գործառույթները, պետության և անհատի փոխհարաբերությունների իրավական հիմքերը, հասարակության քաղաքական համակարգի տարրերը, իրավական պետության էական հատկանիշները, իրավունքի հասկացությունը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ առումներով:

Կկարողանա՝ սահմանել ‹‹գիտություն›› հասկացությունը և դասակարգել գիտությունները, վերլուծել պետության և իրավունքի տեսության ուսումնասիրման առարկան կազմող պետահիրավական ինստիտուտները, ներկայացնել պետության և իրավունքի ուսումնասիրման մեթոդները, բնութագրել պետությունների պատմական տիպերը՝ ըստ հասարակական-

տնտեսական ֆորմացիայի և ըստ քաղաքակրթությունների, վերլուծել պետության կառավարման ձևերը, կառուցվածքի ձևերը և իրավաքաղաքական ռեժիմը, դասակարգել պետության գործառույթները, նկարագրել պետական մարմինների տեսակները, պետական ապարատի կազմակերպման և գործունեության հիմունքները, վերլուծել հասարակության քաղաքական համակարգը և բնութագրել պետության դերը քաղաքական համակարգում, բացահայտել անձի իրավական կարգավիճակի տարրերը, ներկայացնել պետության և անհատի փոխհարաբերությունների նորմատիվ իրավական հիմքերը, իրավական պետության կայացման հիմնական նախադրյալները, վերլուծել իրավունքի ուսումնասիրման մեթոդները, ներկայացնել իրավունքի հասկացությունը և էությունը:

Կտիրապետի՝ գիտությունների դասակարգման չափանիշներին, պետության և իրավունքի ուսումնասիրման ընդհանուր և հատուկ մեթոդներին, հասարակության պետաիրավական վերնաշենքի հիմնական տարրերին, պետության գործառույթների իրականացման ձևերին ու մեթոդներին, պետական իշխանության իրականացման ինստիտուցիոնալ (հաստատութային, ենթակառուցվածքային) և ֆունկցիոնալ (գործառութային) հիմունքներին, պետության և անհատի փոխհարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգերին, իրավական պետության հիմնական բնութագրիչներին, իրավունքի ուսումնասիրման մեթոդաբանությանը, իրավունքի հասկացությանը, սոցիալական նշանակությանը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գիտության հասկացությունը, նշանակությունը և տեսակները, Պետության և իրավունքի տեսությունը՝ որպես ընդհանուր տեսական իրավական գիտություն, ուսումնասիրման առարկան և մեթոդները: **Թեմա 2.** Պետության և իրավունքի ծագումը: **Թեմա 3.** Պետության ծագման մասին հիմնական ուսմունքները: **Թեմա 4**. Պետության էությունը և սոցիալական նշանակությունը: **Թեմա 5.** Պետության հիմնական տարբերիչ հատկանիշները: **Թեմա 6.** Պետությունների պատմական տիպերը: **Թեմա 7.** Պետության ձևերը: **Թեմա 8.** Պետության գործառույթները: **Թեմա 9.** Պետական ապարատը: **Թեմա 10.** Պետությունը հասարակության քաղաքական համակարգում: **Թեմա 11.** Պետությունը և անհատը: **Թեմա** 12. Իրավական պետության հասկացությունը և հիմնական հատկանիշները: **Թեմա 13.** Իրավունքի ուսումնասիրման անհրաժեշտությունը և մեթոդաբանությունը: **Թեմա 14.** Իրավունքի էությունը և բովանդակությունը

21/Բ26- Պետության և իրավունքի տեսություն – 2 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ապահովել իրավունքի հասկացության, ծագման և էության, պատմական տիպերի ու աղբյուրների, գործառույթների իմացություն, գիտելիքներ հաղորդել իրավունքի համակարգի, կառուցվածքի, օրենսդրության, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման, սոցիալական կյանքի կազմակերպման իրավական ձևերի ու կառուցակարգերի, հասարակության, պետության և իրավունքի փոխհարաբերությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ իրավունքի մասին հիմնական դպրոցները, իրավունքի հիմնական գործառույթները, սոցիալական նորմերի տեսակները, իրավունքի ձևերը կամ աղբյուրները, իրավունքի համակարգի կառուցվածքային տարրերը, իրավահարաբերությունների հասկացությունը և կառուցվածքը, իրավանորմերի հատկանիշները և կառուցվածքը, իրավաստեղծման տեսակները և սուբյեկտները, իրավունքի մեկնաբանման հասկացությունը և նշանակությունը, իրավաչափ վարքագծի և իրավախախտման հատկանիշները, իրավաբանական պատասխանատվության տեսակները և հիմքերը, իրավագիտակցության հասկացությունը և նշանակությունը, իրավական մշակույթի և իրավական դաստիարակության դերը:

Կկարողանա՝ բնութագրել իրավունքի նորմատիվությունը, համապարտադիր, ֆորմալ, որոշակի բնույթը, համակարգվածությունը, վերլուծել իրավունքի բնական-իրավական, պատմական, մարքսիստական, սոցիոլոգիական, նորմատիվիստական և մյուս հայեցակարգերը, բացահայտել բնական և պոզիտիվ (գրված, կամասահման) իրավունքի հիմնական հատկանիշները, բնութագրել իրավունքի համընդհանուր, միջճյուղային և ճյուղային սկզբունքները, դասակարգել սոցիալական նորմերը, տարբերակել իրավանորմերը բարոյական նորմերից, ավանդույթներից, քաղաքական, գեղագիտական, տեխնիկական, կորպորատիվ և այլ կանոններից, դասակարգել իրավունքի աղբյուրները, բացահայտել իրավունքի համակարգի կառուցվածքը, վերլուծել անգլո-սաքսոնական, ռոմանո-գերմանական, ավանդական, մուսուլմանական և այլ իրավական համակարգերը, բնութագրել իրավահարաբերության սուբյեկտներին, օբյեկտին և բովանդակությանը, նկարագրել իրավաստեղծման փուլերը, բացահայտել իրավական կարգավորման կառուցակարգի տարրերը, բնութագրել իրավունքի մեկնաբանման հիմնական տեսակները, վերլուծել իրավախախտման կազմը:

Կտիրապետի՝ իրավունքի մասին հիմնական տեսություններին (դպրոցներին), իրավունքի հիմնական գործառույթներին, ժամանակի մեջ, տարածության վրա և անձանց նկատմամբ իրավական ակտերի գործողության սկզբունքներին, նորմատիվ ակտում իրավանորմերի ամրագրման ձևերին, իրավական կարգավորման կառուցակարգերին, իրավաստեղծման սկզբունքներին, իրավունքի մեկնաբանման ձևերին, իրավաբանական պատասխանատվության

միջոցներին, իրավական դաստիարակության ձևերին, իրավակարգի և օրինականության ամրապնդման ուղիներին և կառուցակարգերին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Իրավունքի մասին հիմնական դպրոցները (տեսությունները): **Թեմա 2.** Իրավունքը սոցիալական նորմերի համակարգում: **Թեմա 3.** Իրավունքի պատմական տիպերը: **Թեմա 4.** Իրավունքի ձևերը (աղբյուրները): **Թեմա 5.** Իրավանորմերի հասկացությունը և տեսակները: **Թեմա 6.** Իրավունքի համակարգի հասկացությունը և կառուցվածքը: **Թեմա 7.** Իրավաստեղծում: **Թեմա 8.** Իրավահարաբերությունների հասկացությունը և հատկանիշները: **Թեմա 9.** Իրավունքի իրացումը: **Թեմա 10.** Իրավունքի մեկնաբանումը: **Թեմա 11.** Իրավակարգ և օրինականություն: **Թեմա 12.** Իրավական կարգավորման կառուցակարգ: **Թեմա 13.** Օրինաչափ վարքագիծ, իրավախախտում և իրավաբանական պատասխանատվություն: **Թեմա 14.** Ազգային իրավունք և միջազգային իրավունք:

21/Բ14- Հայաստանի պետության և իրավունքի պատմություն (3կրեդիտ)

Շաբաթական 30 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ստանում գիտելիքներ ստանալու Հայաստանի պետության և իրավունքի պատմության այնպիսի կարևորագույն ինստիտուտների մասին, ինչպիսին են պետությունը և իրավունքը՝ սկսած ստրկատիրության ժամանակաշրջանից մինչև մեր օրերը: Դասընթացը ուսումնասիրվում է երեք կարևոր հասկացությունների, ինչպիսիք են՝ հասարակական կարգ, պետական կարգ և իրավունքի համակարգի միջոցով, ինչը կարևոր և անհրաժեշտ նախադրյալ է ուսանողների կողմից կրթության հետագա փուլերում դասավանդվող մյուս մասնագիտական դասընթացների ուսումնասիրման համար: Դասընթացի նպատակն է՝ ապահովել Հայաստանի պետության և իրավունքի ծագման, առաջացման, հասարակության պետաիրավական կազմակերպման բոլոր ասպեկտների խոր իմացությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝

Կիմանա՝ Հայաստանում հասարակական, պետական կարգերի, իրավական համակարգի պատմական զարգացման փուլերը հին, միջին, նոր և նորագույն դարաշրջաններում, իրավական

աղբյուրների համակարգը, հիմնական իրավական ինստիտուտները՝ սեփականություն, պարտավորություններ, ամուսնաընտանեկան և ժառանգական իրավունք, հանցագործություն և պատիժ, դատավարություն:

Կկարողանա՝ համեմատել հասարակական կարգ, պետական կարգ, իրավական համակարգ կատեգորիաների առանձնահատկությունները Հայաստանում հին, միջին, նոր և նորագույն շրջանում, իրավական համակարգերի հիմնական առանձնահատկությունները, դրանց իրավական ձևերի ստորակարգությունը, հասարակական և պետական կարգերի հիմնական գծերը, առանձին շրջանների պետական մարմինների համակարգը:

Կտիրապետի՝ իրավունքի հիմնական հուշարձաններում օգտագործված եզրույթների և դրանց տեքստերի պարզաբանման հմտություններին, Հայաստանի պետաիրավական մշակույթի պատմության նկատմամբ պատմաիրավական, քննադատական, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայաստանի պետության և իրավունքի պատմությունը՝ որպես գիտություն և դասընթաց: **Թեմա 2.** Հայաստանի պետության և իրավունքի պատմության ուսումնասիրման առարկան, մեթոդները և ժամանակագրությունը: **Թեմա 3.** Պետությունը և իրավունքը Հայաստանում ստրկատիրության ժամանակաշրջանում մ.թ.ա 9-3-րդ դդ-ում: **Թեմա 4.** Պետությունը և իրավունքը Հայաստանում վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում 3-9-րդ դդ-ում: **Թեմա 5.** Պետությունը և իրավունքը Հայաստանում զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում: **Թեմա 6**. Մխիթար Գոշի դատաստանագիրքը, Վաղ ֆեոդալական Հայաստանի իրավունքի ճյուղերը և հիմնական ինստիտուտները: **Թեմա 7.** Պետությունը և իրավունքը Կիլիկյան Հայաստանում: **Թեմա 8.** Մխիթար Գոշի դատաստանագիրքը: **Թեմա 9.** Սմբատ Սպարապետի դատաստանագիրքը: **Թեմա 10.** Հայաստանի պետությունը և իրավունքը նոր և նորագույն շրջանում / 18-րդ դարի կեսերից մինչև մեր օրերը:

21/Բ3- Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն (6 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ստանում ծանոթանալու արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմությանը կոնկրետ պատմական ձևի և ժամանակաշրջանի մեջ՝ հաշվի առնելով պատմական զարգացումները: Այն մասնագիտական առարկա է և ուսումնասիրում է պետության և իրավունքի ծագման, զարգացման

և փոփոխման ընդհանուր օրինաչափությունները, որոնք բնորոշ են պետությանը և իրավունքին՝ պատմական բոլոր տիպերում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ համաշխարհային պետաիրավական մշակույթում մեծ ներդրում կատարած, կարևոր քաղաքական նշանակություն ունեցող երկրների պետության և իրավունքի պատմությունը, հնագույն, միջին, նոր և նորագույն ժամանակաշրջաններում տարբեր երկրների հասարակական, պետական կարգերը, հնագույն, միջին, նոր և նորագույն ժամանակաշրջաններում տարբեր երկրների իրավունքի հիմնական գծերի առանձնահատկությունները:

Կկարողանա՝ նկարագրել հին և միջնադարյան աշխարհի պետությունների հասարակական և պետական կարգերը, բնութագրել և համեմատել իրավական համակարգերը, դրանց իրավական աղբյուրները, հին և միջնադարյան աշխարհի երկրների հիմնական իրավական ինստիտուտները՝ սեփականություն, պարտավորություններ, ամուսնաընտանեկան և ժառանգական իրավունք, հանցագործություն և պատիժ, դատավարություն, տարբերակել արդի զարգացած երկրների պատմական զարգացման հիման վրա տեղի ունեցող պետաիրավական հարցերը, հետագա մասնագիտական դասընթացների ուսումնասիրման ընթացքում ցուցաբերել պատմաիրավական, ստեղծագործական և քննադատական մոտեցում, մեկնաբանել հասարակական կարգ, պետական կարգ, իրավական համակարգ կատեգորիաները,համեմատել հին և միջնադարյան աշխարհի երկրների պետական կարգերի հիմնական գծերը, առանձին երկրների պետական մարմինների համակարգը:

Կտիրապետի՝ հնագույն, միջին, նոր և նորագույն ժամանակաշրջաններում տարբեր երկրների հասարակական, պետական կարգերի հիմունքներին, հնագույն, միջին, նոր և նորագույն ժամանակաշրջաններում տարբեր երկրների իրավունքի հիմնական առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Բաժին 1. Հնագույն աշխարհի պատմության և իրավունքի պատմություն: **Թեմա 1.** Պետության և իրավունքի ծագումը: **Թեմա 2.** Պետությունը Արևելքի երկրներում: **Թեմա 3.** Պետությունն անտիկ աշխարհի երկրներում: **Թեմա 4.** Հին-Արևելյան քաղաքականության իրավունքը: **Թեմա 5.** Անտիկ աշխարհի ծագումը: **Բաժին 2.** Միջին դարերի պետության և իրավունքի պատմություն: **Թեմա 1.** Պետությունը և իրավունքը Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում: **Թեմա 2.** Իրավունքը Արևելքի երկրներում: **Բաժին 3.** Նոր ժամանակների պետության և իրավունքի պատմություն: **Թեմա 1.** Պետությունը Եվրոպայի երկրներում: **Թեմա 2.** Նոր ժամանակի պետություն Ամերիկայի երկրներում: **Թեմա 3.** Պետությունն Ասիայի երկրներում: **Թեմա 4.** Նոր

ժամանակի իրավունքի պատմությունը: **Բաժին 4.** Նորագույն ժամանակաշրջանի պետության և իրավունքի պատմություն (20-րդ դար): **Թեմա 1.** Պետությունը Եվրոպայի երկրներում: **Թեմա 2.** Պետությունը Ամերիկայում: **Թեմա 3.** Պետությունը Ասիայի և Աֆրիկայի երկրներում: **Թեմա 4.** Նորագույն ժամանակի իրավունքի պատմությունը:

21/Բ19 – Հռոմեական մասնավոր իրավունքի հիմունքներ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողներին ծանոթացնել ժամանակակից քաղաքացիական իրավունքում օգտագործվող լատիներեն տերմինաբանությանը, հռոմեական մասնավոր իրավունքի կողմից մշակված հիմնարար ինստիտուտներին ու սկզբունքներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ հանրային և մասնավոր իրավունքների հասկացությունն ու առանձնահատկությունները, քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցելու համար անձին անհրաժեշտ հատկանիշների ամբողջությունը:

Կկարողանա՝ տարբերակել անձանց իրավական կարգավիճակի առանձնահատկությունները՝ ըստ հռոմեական իրավունքի, պարզաբանել հանրային և մասնավոր իրավունքների հասկացությունն ու առանաձնահատկությունները, ներկայացնել իրային և պարտավորական իրավահարաբերությունների հասկացությունն ու էությունը, լուսաբանել հռոմեական իրավունքին հայտնի պայմանագրերի առանձին տեսակները:

Կտիրապետի՝ ռոմանո-գերմանական իրավունքի ընտանիքի հիմունքներին, մասնավոր սեփականության ինստիտուտին, հայց հարուցելու սկզբունքներին, Հռոմում ընտանեկան իրավահարաբերությունների ձևավորման հիմնադրույթներին, մասնավոր իրավունքի հիմք հանդիսացած սկզբնաղբյուրներից, տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից օգտվելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հռոմեական իրավունքի հասկացությունը և համակարգը: **Թեմա 2.** Հռոմեական իրավունքի աղբյուրները: **Թեմա 3.** Ուսմունք հայցի մասին: **Թեմա 4.** Անձեր: **Թեմա 5.** Ընտանեկան իրավահարաբերությունները Հռոմում: **Թեմա 6.** Մասնավոր սեփականության իրավունք: **Թեմա 7.** Իրավունք ուրիշի իրերի նկատմամբ: **Թեմա 8.** Ուսմունք պարտավորության

մասին: Պայմանագիր: **Թեմա 9.** Պայմանագրի առանձին տեսակներ: **Թեմա10.** Ժառանգման իրավունք:

21/Բ2 Արդարադատության և իրավապահ մարմինները Հայաստանի Հանրապետությունում (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ստանում սկզբնական, ելակետային գիտելիքներ ձեռք բերել Հայաստանի Հանրապետության դատական և իրավապահ մարմինների կազմակերպման և գործունեության մասին, ինչը կարևոր և անհրաժեշտ նախադրյալ է ուսանողների կողմից կրթության հետագա փուլերում դասավանդվող մյուս մասնագիտական դասընթացների ուսումնասիրման համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ ՀՀ դատական իշխանության առանձնահատուկ գծերը, դատարաններիի կարգավիճակի առանձնահատկությունները, արդարադատության սկզբունքների էությունն ու բովանդակությունը, ԲԴԽ սահմանադրաիրավական կարգավիճակը, ՀՀ սահմանադրական դատարանի կարգավիճակի առանձնահատկությունները, իրավապահ այլ մարմինների իրավական կարգավիճակը:

Կկարողանա՝ բնութագրել դատական իշխանության առանձնահատուկ գծերը, ներկայացնել դատարանի գործունեության սկզբունքները, նկարագրել ՀՀ իրավապահ մարմինների համակարգը, նրանց լիազորությունները, բացատրել ու վերլուծել իրավապահպան մարմինների և դրանց գործունեության հետ առնչվող այլ

կառույցների գործառույթները, գնահատել արդարադատության իրականացման սկզբունքների դերն ու նշանակությունը:

Կտիրապետի՝ ՀՀ դատական համակարգի կառուցվածքին, դրա կազմավորման և գործունեության հիմնադրույթներին, ՀՀ իրավապահ մարմինների համակարգին:

Բովանդակությունը.

Թեմա 1. «Արդարադատության և իրավապահ մարմինները ՀՀ-ում» դասընթացի առարկան, հիմնական հասկացությունները և համակարգը: **Թեմա 2.** Արդարադատության և դատական իշխանության հասկացությունն ու բովանդակությունը: **Թեմա 3.** Դատական իշխանության գործունեության սկզբունքները: **Թեմա 4.** ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարանները: ՀՀ մասնագիտացված դատարանները: **Թեմա 5.** ՀՀ Վերաքննիչ դատարանները: **Թեմա 6.** ՀՀ Վճռաբեկ դատարանը: **Թեմա 7.** Դատարանի բնականոն գործունեության ապահովման երաշխիքները: **Թեմա 8.** Դատական իշխանության ինքնակառավարումը: **Թեմա** 9. ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը: **Թեմա 10.** Դատական իշխանության կազմակերպման միջազգային-իրավական սկզբունքները և դրանց իրացման խնդիրները: **Թեմա 11.** ՀՀ Սահմանադրական դատարանը: **Թեմա 12.** ՀՀ Դատախազությունը: **Թեմա 13.** ՀՀ Ոստիկանությունը: **Թեմա 14.** ՀՀ Քննչական կոմիտեի իրավական կարգավիճակը: **Թեմա 15.** ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեն: **Թեմա** 16. ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը: **Թեմա 17.** Նոտարիատը, ԴԱՀԿ մարմինները, ՔԿԱԳ մարմինները ՀՀ-ում: **Թեմա 18.** ՀՀ փաստաբանների պալատը: Փաստաբանական գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: **Թեմա 19.** ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն: ՀՀ հարկային և մաքսային մարմինները: **Թեմա 20.** ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը:

21/Բ16 ՀՀ սահմանադրական իրավունք - 1 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ստանում գիտելիքներ ստանալու Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի այնպիսի կարևորագույն ինստիտուտների մասին, ինչպիսին են սահմանադրական կարգը, մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակը, քաղաքացիության հասկացությունը, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները, ինչը կարևոր և անհրաժեշտ նախադրյալ է ուսանողների կողմից կրթության հետագա փուլերում դասավանդվող մյուս մասնագիտական դասընթացների ուսումնասիրման համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ սահմանադրական իրավունքի հասկացությունն ու էությունը, սահմանադրական իրավունքի աղբուրները, խնդիրները և նպատակները, Սահմանադրության հասկացությունը, տեսակները և ձևերը, ՀՀ սահմանադրական կարգի բովանդակությունը, քաղաքացիության հասկացությունը, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատություններն ու պարտականությունները:

Կկարողանա՝ բնութագրել սահմանադրական իրավունքը՝ որպես ՀՀ իրավունքի համակարգի առաջատար ճյուղ, բացահայտել հասարակական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման առանձնահատկությունները, բնութագրել Սահմանադրության հասկացությունը, դրա տեսակներն ու ձևերը, դասակարգել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատություններն ու պարտականությունները:

Կտիրապետի՝ սահմանադրական իրավունքի ելակետային հասկացություններին, ՀՀ սահմանադրական կարգի ինստիտուտի առանձնահատկություններին, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին, ազատություններին և պարտականություններին:

Բովանդակությունը

Թեմա 1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքը որպես՝ իրավունքի ճյուղ: **Թեմա 2.** Սահմանադրական իրավունքի գիտությունը: **Թեմա 3.** Սահմանադրության հասկացությունը: Իրավաբանական բնույթը և բովանդակությունը: **Թեմա 4.** Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը: **Թեմա 5.** Ժամանակակից պետության սահմանադրական բնութագիրը: **Թեմա 6.** Պետական իշխանության կազմակերպման

հիմունքները: **Թեմա 7.** Տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակույթային հարաբերությունների սահմանադրական հիմունքները: **Թեմա 8.** Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգը: **Թեմա 9.** Մարդու և քաղաքացու սահմանադրաիրավական կարգավիճակը: **Թեմա 10.** Մարդու և քաղաքացու անձնական իրավունքները և ազատությունները: **Թեմա 11.** Քաղաքացիական իրավունքներ և ազատությունները: **Թեմա 12.** Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ ու ազատություններ: **Թեմա 13.** Իրավունքների և ազատությունների սահմանադրական երաշխիքները: **Թեմա14.** Մարդու և քաղաքացու սահմանադրական պարտականությունները: **Թեմա 15.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը:

21/Բ17 ՀՀ սահմանադրական իրավունք - 2 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ստանում գիտելիքներ ստանալու Հայաստանի Հանրապետության պետական մարմինների՝ Նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության, արդարադատության մարմինների, ինչպես նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի կազմակերպման և գործունեության սկզբունքների մասին, ինչը կարևոր և անհրաժեշտ նախադրյալ է ուսանողների կողմից կրթության հետագա փուլերում դասավանդվող մյուս մասնագիտական դասընթացների ուսումնասիրման համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ ՀՀ պետական կառուցվածքի սահմանադրական հիմունքները, ՀՀ ընտրական համակարգը, ՀՀ պետական իշխանության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման և գործունեության սահմանադրական հիմունքները:

Կկարողանա՝ սահմանել ՀՀ սահմանադրաիրավական կարգավիճակը, բնութագրել ՀՀ ընտրական համակարգը, բնութագրել ՀՀ Նախագահի ինստիտուտը, ՀՀ Ազգային Ժողովի, կառավարության սահմանադրաիրավական կարգավիճակը, ՀՀ դատական իշխանության և դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակները, նկարագրել ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգը:

Կտիրապետի՝ ՀՀ պետական կառուցվածքի սահմանադրաիրավական հիմունքներին, ՀՀ ընտրական համակարգին և ընտրությունների կազմակերպման գործընթացին, ՀՀ պետական

իշխանության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման և գործունեության սահմանադրաիրավական հիմուքներին:

Բովանդակությունը

Թեմա 1. Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքը, կառավարման ձևը և պետական ռեժիմը: **Թեմա 2.** Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավիճակը: **Թեմա 3.** Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների համակարգը: **Թեմա 4.** Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը: **Թեմա 5.** Հայաստանի Հանրապետության Նախագահը: **Թեմա 6.** Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը: **Թեմա 7.** Հայաստանի Հանրապետության կառավարությունը: **Թեմա 8.** Հայաստանի Հանրապետության դատական իշխանության և դատախազության սահմանադրական հիմունքները: **Թեմա 9.** Սահմանադրական արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում: **Թեմա10.** Տեղական ինքնակառավարման սահմանադրական հիմունքները:

21/Բ4 Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք - (6 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքը հիմնական ուսումնական, մասնագիտական առարկաներից է, որի դասավանդումը կարևորվում է մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների, պետական մարմինների գործունեության մասին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերելու առումով:

Դասընթացի ուսումնասիրման ընթացքում հիմնական ուշադրությունը դարձվելու է արտասահմանյան երկրների պետական ապարատի, պետական մարմինների համակարգի, սահմանադրական կարգի, մինչդատական վարույթի մարմինների և տարածքային ինքնակառավարման մարմինների կազմավորման, գործունեության հիմունքների ուսումնասիրման վրա: Դասընթացի ուսումնասիրումը ուսանողներին հնարավորություն կտա ծանոթանալու այդ մարմինների գործունեության իրավական հիմքերին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի առանձնահատկությունները, արտասահմանյան երկրների սահմանադրությունների քաղաքական համակարգերը, մարդու իրավունքների, ազատությունների և պարտականությունների,

արտասահմանյան երկրների սահմանադրահիրավական հիմնադրույթները, արտասահմանյան երկրների ընտրական համակարգերի, պետական և տեղական ինքակառավարման մարմինների մասին:

Կկարողանա՝ բնութագրել արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքը, նկարագրել տարբեր արտասահմանյան երկրների պետական և տեղական ինքակառավարման մարմինները:

Կտիրապետի՝ արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի առանձնահատկություններին, արտասահմանյան երկրների ընտրական համակարգերի, պետական և տեղական ինքակառավարման մարմինների առանձնահատկություններին:

Բովանդակությունը

Թեմա 1. Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի հասկացությունը և բովանդակությունը: **Թեմա 2.** Արտասահմանյան երկրների սահմանադրությունները: **Թեմա 3.** Սահմանադրական վերահսկողությունն արտասահմանյան երկրներում: **Թեմա 4.** Անհատի սահմանադրական կարգավիճակը արտասահմանյան երկրներում: **Թեմա 5.** Հասարակական կարգի սահմանադրահիրավական հիմունքները արտասահմանյան երկրներում: **Թեմա 6.** Քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և շարժումների կազմակերպման և գործունեության իրավական կարգավորումը արտասահմանյան երկրներում: **Թեմա 7.** Պետական իշխանության կազմակերպման սահմանադրական հիմունքներն արտասահմանյան երկրներում: **Թեմա 8.** Պետության ձևերը արտասահմանյան երկրներում (կառավարման ձև, կառուցվածքի ձև, պետական ռեժիմի ձև): **Թեմա 9.** Ընտրական իրավունքը և ընտրական համակարգը արտասահմանյան երկրներում: **Թեմա 10.** Օրենսդիր իշխանությունն արտասահմանյան երկրներում: **Թեմա 11.** Գործադիր իշխանությունն արտասահմանյան երկրներում: **Թեմա 12.** Դատական իշխանությունն արտասահմանյան երկրներում: **Թեմա 13.** Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սահմանադրական իրավունքի հիմունքները:

21/Բ11 Քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն - (4 կրեդիտ)

Շաբաթական 13 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

8-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացը ուսանողին սովորեցնում է պետության և իրավունքի վերաբերյալ մարդկային մտքի (ուսմունքների, տեսությունների, հայեցակարգերի) պատմությունը՝ սկսած Հին աշխարհից մինչև մեր օրերը՝ հաղորդակից դարձնելով համաշխարհային իրավական մշակույթի գանձարանին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ քաղաքական և իրավական ուսմունքների հիմնական կատեգորիաները, քաղաքական և իրավական ուսմունքների պատմության դերը, գործառույթները և հիմնախնդիրները անտիկ, միջին և նոր ժամանակներում, քաղաքական և իրավական ուսմունքների հիմնական հեղինակներին հին, միջին և նոր դարաշրջաններում, արդի դարաշրջանի առանձնահատկությունները և քաղաքական և իրավական ուսմունքների զարգացման հնարավոր ուղիները:

Կկարողանա՝ մեկնաբանել քաղաքական և իրավական ուսմունքների պատմության հետազոտման մեթոդները, քննարկել պատմական դարաշրջանների քաղաքական և իրավական ուսմունքների հիմնական գծերը, տիպերը, իրականացնել քաղաքական իրավական մտածողների հայեցակարգերի վերլուծություն և պարզաբանում, վեր հանել դրանց մեթոդական հիմքերը, սկզբունքերը,դրսևորել իրավափիլիսոփայական աշխարհայացք, մասնագիտական իրավական մշակույթ:

Կտիրապետի՝ քաղաքական և իրավական ուսմունքների հիմնախնդիրներին, հիմնական հայեցակարգերին, արդի դարաշրջանի առանձնահատկությունների, քաղաքական և իրավական ուսմունքների զարգացման հնարավոր ուղիների վերլուծության սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Քաղաքական և իրավական ուսմունքների պատմության ուսումնասիրման առարկան և մեթոդաբանությունը: **Թեմա 2.** Քաղաքական և իրավական միտքը ստրկատիրական պետություններում: **Թեմա 3.** Քաղաքական և իրավական միտքը Հին Հունաստանում: **Թեմա 4.** Քաղաքական և իրավական միտքը Հին Հռոմում: **Թեմա 5.** Քաղաքական և իրավական միտքը Հին Հայաստանում: **Թեմա 6.** Քաղաքական և իրավական միտքը արևմտյան Եպրոպայում՝ միջին դարերում: **Թեմա 7.** Քաղաքական և իրավական միտքը արաբական երկրներում: **Թեմա 8.** Քաղաքական և իրավական մտքի զարգացումը Ռուսաստանում: **Թեմա 9.** Վերածննդի դարաշրջանի քաղաքական և իրավական միտքի ձևավորումը: **Թեմա 10.** Քաղաքական և իրավական մտքի ձևավորումը Հոլանդիայում: **Թեմա 11.** Քաղաքական և իրավական միտքը Անգլիալում: **Թեմա 12.** Քաղաքական և իրավական միտքը միջնադարյան Հայասատնում: **Թեմա 13.** Քաղաքական և իրավական ուսմունքները Ռուսաստանում 17-19-րդ դարերում: **Թեմա 14.** Քաղաքական և իրավական ուսմունքները Ֆրանսիայում 18-րդ դարում: **Թեմա 15.** Քաղաքական և իրավական ուսմունքները Անգլիայում 18-րդ դարում: **Թեմա 16.** Քաղաքական և իրավական ուսմունքները Գերմանիայում 18-րդ դարում: **Թեմա 17.** Քաղաքական և իրավական ուսմունքները

ԱՄՆ-ում 18-19-րդ դարերում: **Թեմա 18.** Հայ քաղաքական և իրավական ուսմունքները 18-րդ դարի երկրորդ կեսին: **Թեմա 19.** Քաղաքական և իրավական ուսմունքները Եվրոպայում 19-րդ դարի կեսին: **Թեմա 20.** Քաղաքական և իրավական ուսմունքները 20-րդ դարում: **Թեմա 21.** Քաղաքական և իրավական ուսմունքները Հայաստանում 20-րդ դարի սկզբից մինչև 21-րդ դարի սկիզբը:

21/Բ34 - Քաղաքացիական իրավունք – 1 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ ՀՀ Քաղաքացիական օրենդրության, պարտավորական իրավունքի հիմնական դրույթների վերաբերյալ: Քաղաքացիական իրավունք դասընթացի նպատակն է ապահովել քաղաքացիա-իրավական հարաբերությունների կարգավորմանը լիարժեք մասնակցելու համար անհրաժեշտ գիտագործնական գիտելիքներ: Դասընթացը հնարավորություն է տալիս ուսանողներին ուսումնասիրել շուկայական տնտեսության ապրանքադրամային և այլ հարաբերությունները, ինչպես նաև սկզբնական տեղեկություններ ստանալ քաղաքացիական իրավունքի գիտության, համակարգի, իրավաբանական հասկացությունների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ քաղաքացիական իրավունքի հասկացությունը, կարգավորման առարկան, քաղաքացիահրավական հարաբերությունների իրավական կարգավորման մեթոդի առանձնահատկությունները, քաղաքացիական իրավունքի սուբյեկտների կարգավիճակը, օբյեկտների իրավական ռեժիմը, քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքը, սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության եղանակներն ու կարգը:

Կկարողանա՝ ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավական կարգավիճակի առանձնահատկությունները, ներկայակացնել քաղաքացիական իրավունքի օբյեկտների շրջանակը, դրանց դասակարգումը, առանձին օբյեկտների իրավական ռեժիմի առանձնահատկությունները, թվարկել քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը, լուսաբանել քաղաքացիահրավական գործարքի նշանակությունը, վավերության պայմանները և անվավերության հետևանքները, պարզաբանել քաղաքացիական սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ձևերն ու եղանակները:

Կտիրապետի՝ քաղաքացիաիրավական տարբեր խնդիրներ լուծելու եղանակներին, լիազորագրեր, իրավաբանական անձի ստեղծման գործընթացը միջնորդավորող փաստաթղթեր կազմելու ձևերին, դատական պրակտիկայի նյութերը վերլուծելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Քաղաքացիական իրավունքը որպես ՀՀ իրավունքի միասնական համակարգի ճյուղ: **Թեմա 2.** Քաղաքացիական իրավունքի գիտությունը: **Թեմա 3.** Քաղաքացիական իրավունքի աղբյուրները: **Թեմա 4.** Քաղաքացիական իրավահարաբերություններ: Թեմա 5. Քաղաքացիական իրավահարաբերությունների ծագումը, իրականացումը, պաշտպանությունը: Թեմա 6. Քաղաքացիները՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ: **Թեմա 7.** Իրավաբանական ակտեր: **Թեմա 8.** ՀՀ-ը, մարզերը և համայնքները որպես՝ քաղաքացիական իրավունքի սուբյեկտ: **Թեմա 9.** Քաղաքացիական իրավունքի օբյեկտները: **Թեմա 10.** Գործարքներ: **Թեմա 11.** Ներկայացուցչություն: **Թեմա 12.** Անձնական ոչ գույքային իրավունքները և դրանց պաշտպանությունը: **Թեմա 13.** Ժամկետները քաղաքացիական իրավունքում:

21/ /Բ 36 - Քաղաքացիական իրավունք – 2 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Քաղաքացիական իրավունք դասընթացի նպատակն է ապահովել քաղաքացիա-իրավական հարաբերությունների կարգավորմանը լիարժեք մասնակցելու համար անհրաժեշտ գիտագործնական գիտելիքներ: Դասընթացը հնարավորություն է տալիս ուսանողներին ուսումնասիրել շուկայական տնտեսության ապրանքադրամային և այլ հարաբերությունները, ինչպես նաև տեղեկություններ ստանալ քաղաքացիական իրավունքի հիմնական ինստիտուտների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ սեփականության և պարտավորական հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները, սեփականության և պարտավորական իրավահարաբերությունների բնույթն, կարգավորման հիմնարար սկզբունքնրին, դրանց մասնակիցների կարգավիճը, վերջիններիս իրավունքների և պարտականությունների իրականացման եղանակները և առանձնահատկությունը:

Կկարողանա՝ պարզաբանել սեփականության և այլ իրային իրավահարաբերությունների էությունը, բովանդակությունը և հարաբերակցությունը, ներկայացնել սեփականության իրավունքի ձեռք բերման և դադարման հիմքերը, լուսաբանել սեփականության իրավունքի իրականացման պայմանները, պաշտպանության ձևերը և եղանակները, ներկայացնել պարտավորական իրավահարաբերությունների էությունը, տեսակները և առանձնահատկությունները, լուսաբանել պարտավորությունների առաջացման, կատարման, կատարման ապահովման և դադարման իրավական ընթացակարգերը, պարզաբանել քաղաքացիաիրավական պայմանագրերի հասկացությունը, առանձին տեսակներների առանձնահատկությունները, լուսաբանել քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու, կատարելու և լուծելու կարգը,ներկայացնել պարտավորությունների խախտման համար պատասխանատվության
նշանակությունը, պայմանները և տեսակները:

Կտիրապետի՝ քաղաքացիաիրավական տարբեր խնդիրներ լուծելու եղանակներին, իրային և պարտավորական հարաբերությունները միջնորդավորող փաստաթղթերի կազմմանը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայցային վաղեմություն: **Թեմա 2.** Սեփականության իրավունք: Ընդհանուր դրույթներ: **Թեմա 3.** Քաղաքացիների սեփականության իրավունքը: **Թեմա 4.** Իրավաբանական անձանց սեփականության իրավունքը: **Թեմա 5.** Պետական և համայնքային սեփականություն: **Թեմա 6.** Ընդհանուր սեփականության իրավունք: **Թեմա 7.** Սեփականության իրավունքի պաշտպանությունը: **Թեմա 8.** Սահմանափակ իրային իրավունքներ: **Թեմա 9.** Պարտավորական իրավունք: Ընդհանուր ուսմունք պարտավորությունների մասին: **Թեմա 10.** Քաղաքացիաիրավական պայմանագիր: **Թեմա 11.** Պարտավորությունների կատարումը: **Թեմա 12.** Պարտավորությունների կատարման ապահովումը: **Թեմա 13.** Պատասխանատվությունը պարտավորությունների չկատարման և ոչ պատշաճ կատարման համար: **Թեմա 14.** Պարտավորությունների դադարումը:

21/Բ 36 - Քաղաքացիական իրավունք – 3 (5 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ քաղաքացիաիրավական պայմանագրերի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքման և կատարման առանձնահատկությունները, գույքի օտարման և ժամանակավոր օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի հիմնական տեսակները:

Կկարողանա՝ ներկայացնել գույքի օտարման և ժամանակավոր օգտագորման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման առանձնահատկությունները, լուսաբանել գույքի օտարման և ժամանակավոր օգտագորման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի առարկան, ներկայացնել գույքի օտարման և ժամանակավոր օգտագորման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվության առանձնահատկությունները, պարզաբանել գույքի օտարման և ժամանակավոր օգտագորման, աշխատանքների կատարման և ծառայությունները:

Կտիրապետի՝ քաղաքացիաիրավական պայմանագրեր կազմելու առանձնահատկություններին, այլ քաղաքացիաիրավական փաստաթղթերը (առևտրային ակտեր, արձանագրություններ, ծանուցումներ) ձևակերպելու եղանակներին, դատական պրակտիկայի նյութերը վերլուծելու հմտություններին:

Բովանդակությունը

Թեմա 1. Առուծախի պայմանագիր: **Թեմա 2.** Մատակարարման պայմանագիր: **Թեմա 3.** Ռենտայի պայմանագիր: **Թեմա 4.** Փոխանակության պայմանագիր: **Թեմա 5.** Նվիրատվության պայմանագիր: **Թեմա 6.** Վարձակալության պայմանագիր: **Թեմա 7.** Բնակելի տարածության վարձակալության պայմանագիր: **Թեմա 8.** Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր: **Թեմա 9.** Կապալի պայմանագիր: **Թեմա 10.** Շինարարական կապալի պայմանագիր:

21/Բ 37 - Քաղաքացիական իրավունք – 4 (6 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (60 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ապահովել գիտելիքներ քաղաքացիական իրավունքի հատուկ մասի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ քաղաքացիական իրավունքի մի շարք առանցքային պայմանագրերը և ինստիտուտները, այդ թվում՝ վնաս պատճառելուց և միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները,
ժառանգման և մտավոր սեփականության ինստիտուտները:

Կկարողանա՝ ներկայացնել վարկային և հաշվարկային պարտավորությունները, գույքի հավատարմագրային կառավարման, ֆրանչայզինգի և ապահովագրական պայմանագրերի
կնքման և դադարման առանձնահատկությունները, պայմանագրերի բովանդակությունը և կողմերի պատասխանատվությունը, լուսաբանել վնաս պատճառելուց և միակողմանի գործողություններից ծագող պարտավորությունները, պարզաբանել մտավոր սեփականության և ժառանգման ինստիտուտների իրավական կարգավորումները և դրանց առանձնահատկությունները:

Կտիրապետի՝ քաղաքացիաիրավական պայմանագրեր կազմելու առանձնահատկություններին, այլ քաղաքացիաիրավական փաստաթղթերը (առևտրային ակտեր, արձանագրություններ, ծանուցումներ) ձևակերպելու եղանակներին, դատական պրակտիկայի նյութերը վերլուծելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր: Թեմա 2. Հանձնարարության պայմանագիր: **Թեմա 3.** Կոմիսիայի պայմանագիր: **Թեմա 4.** Գործակալման պայմանագիր: **Թեմա 5.** Պահատվության պայմանագիր: **Թեմա 6.** Փոխադրման պարտավորություններ: **Թեմա 7.** Վարկային և հաշվարկային պարտավորություններ: **Թեմա 8.** Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր: **Թեմա 9.** Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության պայմանագիր: **Թեմա 10.** Ապահովագրություն: **Թեմա 11.** Համատեղ գործունեության պայմանագիր: **Թեմա 12.** Խաղեր և գրազ անցկացնելու պայմանագրեր: **Թեմա 13.** Միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններ: **Թեմա 14.** Վնաս պատճառելուց ծագող պարտավորություններ: **Թեմա 15.** Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ: **Թեմա 16.** Մտավոր սեփականություն: **Թեմա 17.** Ժառանգման իրավունք:

21/Բ32 Քաղաքացիական դատավարություն -1 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքացիական դատավարության ընդհանուր և հիմնական հասկացություններին, կատեգորիաներին, իրավունքների պաշտպանության դատական ձևի հիմնարար սկզբունքներին, առանձին կատեգորիայի գործերի հարուցման, քննության և լուծման առանձնահատկություններին, դատական ակտերի կատարման ընթացակարգին, տարբեր երկրների քաղաքացիական դատավարության հասկացություններին, գործերի քննության առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ քաղաքացիական դատավարության իրավունքի առարկան, մեթոդը, համակարգը, աղբյուրները, սկզբունքները, դատավարական իրավահարաբերությունները, կողմերը քաղաքացիական դատավարությունում, երրորդ անձինք քաղաքացիական դատավարությունում, դատախազի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը, այլ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը, դատական ներկայացուցչությունը, քաղաքացիական գործերի ընդդատությունը, դատավարական ժամկետները, դատական ծախսերը, հայցը, ընդհանուր ուսմունքը ապացույցների մասին, ապացույցների առանձին տեսակները:

Կկարողանա՝ վերլուծել Հայաստանի քաղաքացիական դատավարության պատմությունը, բացահայտել քաղաքացիական դատավարության իրավունքի փուլերը, յուրաքանչյուր փուլի նշանակությունը և կարևորությունը, քաղաքացիական դատավարության տեսակները և դրանց բնորոշ առանձնահատկությունները, քաղքացիական դատավարությանը բնորոշ սկզբունքները սահմանազատել սահմանադրական մյուս սկզբունքներից, բնութագրել քաղաքացիական դատավարական իրավահարբերությունները, տարբերակել օբյեկտը, սուբյեկտը և բովանդակությունը, վերլուծել դատավարության մասնակիցներից՝ կողմերին քաղաքացիական դատավարությունում, դասակարգել երրորդ անձի հասկացությունը, նկարագրել դատախազի իրավական կարգավիճակը քաղաքացիական դատավարությունում, վերլուծել այլ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությամբ հանդես գալու, իրավասություն ունեցող պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը, բացահայտել դատական ներկայացուցչություն դերը և նշանակությունը,

սահմանել դատավարական ժամկետներ և դրանց տեսակները, դասակարգել դատական ծախսերը և դրանց տեսակները, սահմանել դատական ապացուցման հասկացությունը և առանձին տեսակները:

Կտիրապետի՝ հիմնական քաղաքացիադատավարական հասկացություններին, իրավաբանական տերմինաբանությանը, դատավարությանը անհրաժեշտ ոլորտներին առնչվող տեսություններին ու սկզբունքներին և վարույթի տեսակներին, դատական մի շարք ձևաթղթերին, կողմերի հասկացությանը և նրանց իրավունքներին ու պարտականություններին, քաղաքացիական գործերի ընդդատությանը, որ դատարան պետք է դիմի հայցվորը, դատավարական ժամկետները հաշվարկի տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով, դատական ծախսերի տեսակներին՝ ըստ պետական տուրքի մասին օրենքի կհաշվարկի պարզ և համեմատական տուրքը, կտիրապետի հայցային վարույթի հասկացությանը, հայցի տարրերին, կկարողանա գրել հայցադիմումներ, հակընդեմ հայցեր և ուղարկել դատարան, իրավունքի պաշտպանության հայցային միջոցների տնօրինմանը, վեր հանելով իրական փաստերն ու հանգամանքները կկարողանա իրավաբանորեն ճիշտ որակել արարքը, ապացույցների վերաբերելիությանը և թույլատրելիությանը, որպեսզի անթույլատրելի ապացույցներ չներկայացնի դատարան և ավելորդ հետաձգի գործի քննությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Քաղաքացիական դատավարության իրավունքի բնութագիրը: **Թեմա 2**. Քաղաքացիական դատավարության բնութագիրը: **Թեմա 3.** Քաղաքացիական դատավարության սկզբունքները: **Թեմա 4.** Քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունները: **Թեմա 5.** Կողմերը քաղաքացիական դատավարությունում: **Թեմա 6.** Ներկայացուցչությունը քաղաքացիական դատավարությունում: **Թեմա 7.** Դատավարական ժամկետները: **Թեմա 8.** Դատական ծախսերը: **Թեմա 9.** Հայց: **Թեմա 10.** Ընդհանուր ուսմունք ապացույցների մասին:

21/Բ33 Քաղաքացիական դատավարություն -2 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքացիական դատավարության առանձին կատեգորիայի գործերի հարուցման, քննության և լուծման առանձնահատկություններին, դատական ակտերի կատարման ընթացակարգին: Ինչպես նաև համապատասխան ոլորտի օրենսդրական դաշտը կարգավորող իրավական ակտերին, միջազգային փաստաթղթերին և

նախադեպերի հետ աշխատելու կանոններին, ձեռք բերել արտասահմանյան երկների քաղաքացիական դատավարությունը ՀՀ օրենսդրության հետ համադրելու, մեկնաբանելու և կիրառելու հմտություններին: Օրենսդրության նախադեպերի կիրառում: Ապահովել իրավունքի գերակայությունը, հարգելու անձի պատիվն ու արժանապատվությունը, պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները դատարան դիմելու միջոցով կամ իրավունքի պաշտպանության այլընտրանքային միջոցներով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ հայց հարուցելու կարգը և այն չպահպանելու հետևանքները, գործը դատական քննության նախապատրաստելը, գործի քննության կարգը առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում, դատական որոշումների հասկացությունը և տեսակները, արագացված դատաքննության հասկացությունը և նշանակությունը, կիրառման հիմքերը, հատուկ հայցային վարույթների գործերի քննության դատավարական առանձնահատկությունները, հատուկ վարույթի գործերի քննության դատավարական առանձնահատկությունները, օրինական ուժի մեջ չմտած վճիռները և որոշումները վերաքննության կարգով բողոքարկելը և ստուգելը, օրինական ուժի մեջ մտած վճիռները և որոշումները վերանայումը վճռաբեկության կարգով, վճիռների և որոշումների վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով, կատարողական վարույթը, օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթը, մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու և այդ դիմումներով վարույթի կարգը, արտասահմանյան քաղաքացիական դատավարություն, քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոչ դատական ձևերը, վճռաբեկ դատարանի դատական նախադեպերը քաղաքացիական դատավարության տարբեր վարույթների գործերով դրանց վրա հղում կատարելու կանոնակարգը:

Կկարողանա՝ բնութագրել հայցային գործերով քաղաքացիական գործի հարուցումը դատարանում, վերլուծել գործը դատական քննության նախապատրաստելու փուլի նշանակությունը, դատավարության մասնակիցների դատական ծանուցման տեսակները և դատական ծանուցագրեր գրելու և ուղարկելու կարգը, բացահայտել գործի քննության կարգը դատական համակարգում, բնութագրել դատական վճռի բովանդակությունը, դասակարգել հատուկ հայցային վարույթի գործերի քննության դատավարական առանձնահատկությունները, տարբերակել հատուկ վարույթի գործերի քննության դատավարական առանձնահատկությունները, տարբեր հատուկ վարույթի գործերով դիմումներ գրելու առանձնահատկությունները, դատական պրակտիկան և դատավարության ընթացքին վերաբերվող բոլոր ձևաթղթերը: Կկարողանա՝ բացահայտել

վերաքննության վարույթի սկզբունքները, վերլուծել օրինական ուժի մեջ չմտած և օրինական ուժի մեջ մտած վճիռների և որոշումների վերանայում վերաքննության ու վճռաբեկության կարգով, բնութագրել վճիռների և որոշումների վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով, նկարագրել կատարողական վարույթը, կազմել կատարողական թերթ, բացահայտել օտարերկրյա քաղաքացիների և կազմակերպությունների իրավական վիճակը քաղաքացիական դատավարությունում, ներկայացնել քաղաքացիական իրավունքների և օրինական շահերիպաշտպանության ոչ դատական ձևերը, պաշտպանյալին, որպես դատական ներկայացուցիչ կտրամադրի որակյալ իրավաբանական եզրակացություններ և իրավական խորհրդատվություն:

Կտիրապետի՝ հայցային վարույթին, հատուկ հայցային վարույթին, հատուկ վարույթին, վարույթը վերաքննիչ դատարանում, վարույթը վճռաբեկ դատարանում, կատարողական վարույթին, արտասահմանյան քաղաքացիական դատավարությանը, քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոչ դատական ձևերին և վերը նշված բոլոր տեսակի դատավարություններում կիրառվող իրավական ակտերի մեկնաբանմանը և վարման ձևաթղթերին, վճռաբեկ դատարանի որոշումներին, Եվրոպական դատարանի վճիռներին և դատական պրակտիկայում դրանց ունեցած դերին, դատարանում մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ միջոցների կիրառման հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Վարույթը առաջին ատյանի դատարանում: **Թեմա** 2. Նախնական դատական նիստ: **Թեմա 3.** Դատական քննություն: **Թեմա 4.** Արագացված դատաքննություն: **Թեմա 5.** Հատուկ հայցային վարույթների գործերի քննության դատավարական առանձնահատկությունները: **Թեմա 6.** Հատուկ վարույթների գործերի քննության դատավարական առանձնահատկությունները: **Թեմա 7**. Վարույթը վերաքննիչ դատարանում: **Թեմա 8**. Վարույթը վճռաբեկ դատարանում: **Թեմա 9**. Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով: **Թեմա 10.** Կատարողական վարույթ: **Թեմա 11.** Օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթ:

21/Բ10 Քրեական իրավունք -1 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Քրեական իրավունքը իրավագիտության բակալավրի կրթական ծրագրի պարտադիր մասնագիտական դասընթացներից է, որի նպատակն է ուսանողներին ծանոթացնել

քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներին, քրեական օրենքի, հանցագործության, հանցակազմի տարրերի էությանն ու բովանդակությանը, ավարտված և չավարտված հանցագործության ինստիտուտներին, հանցակցության, հանցագործությունների բազմակիության, արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներին: Դասընթացի ուսումնասիրման արդյունքնում ուսանողները խորը գիտելիքներ կստանան ՀՀ քրեաիրավական ինստիտուտների, քրեական իրավահարաբերությունների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ քրեական իրավունքի կարգավորման առարկան և մեթոդը, քրեական իրավունքի հիմնարար սկզբունքները, քրեական պատասխանատվության հասկացությունը, քրեական պատասխանատվությունը որպես բարդ համակարգային երևույթ, քրեական պատասխանատվության իրագործման ձևերը, քրեական պատասխանատվության տարբերությունները պատասխանատվության այլ տեսակներից, հանցանքի հասկացությունը և տեսակները:

Կկարողանա՝ ներկայացնել հանցակազմի տարրերի էությունն ու բովանդակությունը, տարբերակել հանցավոր և ոչ հանցավոր արարքները և որակել հանցագործությունները ըստ մեղքի ձևի, կկարողանա տարբերակել ընդհանուր հանցակազմը և կոնկրետ հանցակազմը, ներկայացնել հանցակազմի քրեաիրավական նշանակությունը, հանցակազմի տարրերն ու հատկանիշները, պարտադիր և ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) հատկանիշները, բացահայտել քրեական իրավունքի ընդհանուր մասում տեղ գտած առանձին ինստիտուտների ընդհանուր բնութագրումները, վերլուծել հանցակազմեր, կատարել հետևություններ:

Կտիրապի՝ հանցանքների դասակարգման առանձնահատկություններին, հանցագործությունների որակման իրավական տեխնիկային, հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկություններին, քրեական օրենքի տեխնիկան կիրառելու հմտություններին, կտիրապետի հանցագործությունների բազմակիության և քրեաիրավական նորմերի մրցակցության հիմնադրույթներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդը, համակարգը և խնդիրները: Քրեական իրավունքի գիտությունը: **Թեմա 2.** Քրեական իրավունքի սկզբունքները: **Թեմա 3.** Քրեական պատասխանատվության հիմքը: **Թեմա 4.** Հանցանքը և դրա հատկանիշները : **Թեմա 5.** Հանցակազմ: **Թեմա 6.** Հանցագործության օբյեկտ: **Թեմա 7.** Հանցագործության օբյեկտիվ կողմը: **Թեմա 8.** Հանցագործության սուբյեկտ: **Թեմա 9.** Հանցագործության սուբյեկտիվ կողմը: **Թեմա 10.**

Հանցագործության փուլերը: **Թեմա 11.** Հանցակցություն: **Թեմա 12.** Հանցագործությունների բազմակիությունը

21/Բ41 Քրեական իրավունք -2 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ «Պատիժ» հասկացությունը, դրա նպատակների և տեսակների, պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելու ինստիտուտների, անչափահասների և 21 տարին չլրացած անձանց նկատմամբ պատիժ նշանակելու, իրավաբանական անձի քրեական պատասխանատվության ընդհանուր պայմանների վերաբերյալ: Դասընթացի ուսումնասիրման արդյունքնում ուսանողները խորը գիտելիքներ կստանան ՀՀ քրեական իրավունքի ինստիտուտների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ պատժի հասկացությունը, տարրերը և նպատակները, պատժի համակարգի հասկացությունը, պատժի տեսակները. հիմնական և լրացուցիչ պատիժները, ընդհանուր և հատուկ պատիժները, ազատազրկման հետ կապված և չկապված պատիժները, ինչպես նաև պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելու ինստիտուտները:

Կկարողանա՝ կկարողանա ներկայացնել պատժի տարբերությունը պետական հարկադրանքի այլ միջոցներից պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելու պայմաններն ու առանձնահատկությունները, ներկայացնել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու բացառիկ հանգամանքների էությունը, տարբերակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու դրսևորումները, թվարկել և ներկայացնել իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցների տեսակները և դրանց առանձնահատկությունները, վերլուծել, մեկնաբանել իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների առանձնահատկությունները իրականացնել հանցավոր արարքների որակում, վերլուծել փաստեր, կատարել հետևություններ:

Կտիրապետի՝ հանցավոր և ոչ հանցավոր արարքների տարբերակման տեխնիկային, պատժի նշանակման կարգին ու սկզբունքներին, քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելու կարգին ու պայմաններին, կտիրապետի հանցագործությունների համակցության և

դատավճիռների համակցության դեպքում պատիժ նշանակելու կառուցակարգերին կտիրապետի իրավաբանական անձի դատվածության մարման ժամկետներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. «Պատիժ» հասկացությունը, դրա նպատակները և տեսակները: **Թեմա 2.** Պատիժ նշանակելը: **Թեմա 3.** Քրեական պատասխանատվությունից ազատելը: **Թեմա 4**. Պատժից ազատելը: **Թեմա 5.** Համաներում, ներում, դատվածություն: **Թեմա 6.** Անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի նպատակները և տեսակները: **Թեմա 7.** Անչափահասների և 21 տարին չլրացած անձանց նկատմամբ պատիժ նշանակելը: **Թեմա 8.** Անչափահասներին և 21 տարին չլրացած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելը: Անչափահասներին և 21 տարին չլրացած անձանց պատժից ազատելու առանձնահատկությունները: **Թեմա 9.** Անվտանգության միջոցները և գույքի բռնագրավումը: **Թեմա 10.** Իրավաբանական անձի քրեական պատասխանատվության ընդհանուր պայմանները: **Թեմա 11.** Իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները:

21/Բ42 Քրեական իրավունք -3 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քրեական իրավունքի հատուկ մասի կառուցվածքին, հանցագործությունների որակման հիմունքներին, ինչպես նաև խաղաղության և մարդկության անվտանգության, մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված, ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, ընտանիքի և երեխայի շահերի, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ հանցագործությունների որակման էությունը, հանցագործությունների հանցակազմերի տարրերի բնութագրող հիմնական և ֆակուլտատիվ հատկանիշները, նշված հանցագործությունների հասկացությունները, դրանց նշանակությունն ու էությունը, հանցագործությունների տեսակներն՝ ըստ սեռային, տեսակային, անմիջական օբյեկտների:

Կկարողանա՝ վերլուծել մարդու կյանքի, առողջության, ազատության, պատվի, արժանապատվության, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների էությունը և առանձնահատկությունները, տարբերակել հանցագործություններն ըստ մեղքի ձևի, որակել հանցագործությունները, վերհանել հանցագործությունների մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, առաջարկներ անել քրեաիրավական ինստիտուտների և կոնկրետ հանցակազմերի կատարելագործման ուղղությամբ:

Կտիրապետի՝ հանցագործությունների որակման իրավական հիմունքներին, ՀՀ իրավական համակարգում քրեական իրավունքի հատուկ մասին դերին ու նշանակությանը, մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված, անձի ազատության, պատվի և արժանապատվության, սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության, ընտանիքի և երեխայի շահերի, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների որակման քրեաիրավական առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. ՀՀ Քրեական իրավունքի հատուկ մասի հասկացությունը, համակարգը և նշանակությունը: **Թեմա 2.** Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ: **Թեմա 3.** Մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործությունները: **Թեմա 4.** Առողջության դեմ ուղղված հանցագործությունները: **Թեմա 5.** Կյանքը և առողջությունը վտանգող հանցագործությունները: **Թեմա 6.** Ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները: **Թեմա 7**. Սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները: **Թեմա 8.** Սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ: **Թեմա 9.** Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները: **Թեմա 10.** Սեփականության դեմ ուղղված հանցագործությունները:

21/Բ20 Քրեական իրավունք -4 (6 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (60 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քրեական իրավունքի հատուկ մասի կառուցվածքին, հանցագործությունների որակման հիմունքներին, ինչպես նաև տնտեսական հանցագործությունների, հասարակական կարգի և բարոյականության, զենքի, հրազենի կամ այլ հանրավտանգ նյութերի և առարկաների օրինական շրջանառության, երթևեկության անվտանգության և տրանսպորտի շահագործման սահմանված կարգի, աշխատանքների և

գործունեության իրականացման անվտանգության հատուկ կանոններով կամ պահանջներով սահմանված կարգի, համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության, բնակչության առողջության, շրջակա միջավայրի, սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության անվտանգության, հանրային ծառայության շահերի, կառավարման կարգի, արդարադատության շահերի, զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ տնտեսական, հասարակական անվտանգության, շրջակա միջավայրի անվտանգության, ինչպես նաև հանրային ծառայության շահերի, կառավարման կարգի, արդարադատության շահերի, զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների որակման առանձնահատկությունները:

Կկարողանա՝ վերլուծել քրեական իրավունքի հատուկ մասի համապատասխան հանցակազմերի առանձնահատկությունները, տարբերակել հանցագործություններն ըստ մեղքի ձևի, որակել հանցագործությունները, վերհանել հանցագործությունների մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, ուսումնասիրել իրավակիրառ պրակտիկայի առանձնահատկությունները:

Կտիրապետի՝ փաստեր վերլուծելու, հետևություններ կատարելու տեխնիկային, հանցագործությունների որակման իրավական հիմունքներին, ունեցած գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու ու զարգացնելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Տնտեսական հանցագործությունները: **Թեմա 2.** Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունները: Զենքի, հրազենի կամ այլ հանրավտանգ նյութերի և առարկաների օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունները: Երթևեկության անվտանգության և տրանսպորտի շահագործման սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունները: Աշխատանքների և գործունեության իրականացման անվտանգության հատուկ կանոններով կամ պահանջներով սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունները: **Թեմա** 4. Համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները: **Թեմա 5.** Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ: **Թեմա 6.** Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ: Թեմա 7. Սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները: **Թեմա 8.** Հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունները: **Թեմա 9.** Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ: **Թեմա 10.** Արդարադատության շահերի դեմ ուղղված

հանցագործություններ: **Թեմա 11.** Զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործություններ:

21/Բ38 Քրեական դատավարություն -1 (5կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ունենում ծանոթանալու քրեական դատավարություն առարկային՝ հաշվի առնելով վերջինիս կարևորությունը և զարգացման հիմնական ուղությունները: Այն զուտ մասնագիտական առարկա է և ուսումնասիրում է քրեական դատավարական իրավունքի ծագման, զարգացման, փոփոխման ընդհանուր օրինաչափությունները, որոնք յուրահատուկ են իրավունքի միայն այս ճյուղին, պետության պատմական բոլոր ժամանակաշրջաններում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ քրեական դատավարության հասկացությունը, նշանակությունը, նրա բնութագրիչ գծերը, խնդիրները, աղբյուրները, սկզբունքները, քրեական դատավարության սուբյեկտները, ապացույցները, դրանց տեսակները:

Կկարողանա՝ վեր հանել քրեական դատավարության էությունը, խնդիրները և հիմնական հասկացությունները, տարբերակել արդարադատության իրականացման սկզբունքները և դրանց կիրառման առանձնահատկությունները, վերլուծել դատավարության սուբյեկտների իրավական վիճակը և տարբերակել նրանց գործառույթները, լուսաբանել քրեական դատավարությունում ապացույցների էությունը, վերլուծել դրանց թույլատրելիության և վերաբերելիության հատկանիշները, գնահատել դատավարության մասնակիցների իրավական վիճակը ապացուցման գործընթացում, կիրառել ապացույցները, հավաքել, ստուգել և գնահատել ապացույցները, քննարկել դատավարական հարկադրանքի միջոցների էությունը, համեմատել և տարբերակել դատավարական հարկադրանքի միջոցները, բացատրել դրանց բնութագրական հատկանիշները և կիրառման առանձնահատկությունները, գնահատել քրեական դատավարության ընդհանուր մասի կարգավորման առարկայի մեջ մտնող մյուս ինստիտուտները (գույքային հարցերը, դատավարական ժամկետները, դատական ծախսերը, դատավարության մասնակիցների պաշտպանության միջոցները):

Կտիրապետի՝ փաստեր վերլուծելու, հետևություններ կատարելու հմտություններին, համապատասխան դատավարական փաստաթղթեր կազմելու տեխնիկային:

Բովանդակությունը.

Թեմա 1. Քրեական դատավարության հասկացությունը և էությունը: **Թեմա 2.** Քրեական դատավարության օրենսդրությունը: **Թեմա 3.** Քրեական վարույթի իրականացման հիմունքները: Քրեական վարույթի սկզբունքները:Քրեական դատավարական սկզբունքները: **Թեմա 4.** Քրեական վարույթին ներգրավված մարմինները և անձինք: **Թեմա 5.** Վարույթին մասնակցության անհնարինությունը:Վարույթին ներգրավված անձանց հատուկ պաշտպանությունը: **Թեմա 6.** Ապացույցները և ապացուցումը քրեական դատավարությունում: **Թեմա 7.** Հարկադրանքի միջոցները: **Թեմա 8.** Պարզաբանումները և ծանուցումները: Միջնորդությունները և բողոքները: Գույքային հայցը և ռեաբիլիտացիան: Վարձատրությունը, ծախսերը և հատուցումը:

21/Բ39 Քրեական դատավարություն -2 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ունենում ծանոթանալու քրեական դատավարության հիմնարար դրույթներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ քրեական գործի հարուցման փուլի էության և նշանակության, քրեական գործ հարուցելու համար նյութերի նախապատրաստման հիմնախնդիրների մասին, նախնական քննության որպես մինչդատական վարույթի հիմնական ձևի, հետաքննության և նախաքննության էության և նշանակության մասին, նախնական քննության ընդհանուր պայմանները, քննչական գործողությունների կատարման ընդհանուր կանոնների և յուրաքանչյուր գործողության իրականացման ընթացակարգի իրավական կարգավորման առանձնահատկությունները:, մինչդատական վարույթում դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հիմնախնդիրները, քրեական գործով վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման, ինչպես նաև քրեական գործով վարույթի կասեցման հիմնախնդիրները, մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության հիմնահարցերի մասին, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության տեսակների, նշանակության և հայեցակարգային հիմնախնդիրների մասին:

Կկարողանա՝ ներկայացնել քրեական գործի հարուցման փուլի էությունը, ներկայացնել այս փուլում իրականացվող քննչական և դատավարական գործողությունները, կազմել այն որոշումները, որոնք կարող են կայացվել քրեական գործի հարուցման փուլում, քննարկել այն բոլոր ինստիտուտները, որոնք կազմում են նախնական քննության փուլի բովանդակությունը, նկարագրել անձին որպես մեղադրյալ ներգրավելը և մեղադրանքի առաջադրումը, դասակարգել և ներկայացնել քննչական գործողությունները, բացատրել քրեական գործով վարութի կասեցման, քրեական գործի կարճման և քրեական հետապնդման դադարեցման էությունը, ներկայացնել մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը և դատախազի լիազորությունները, ներկայացնել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը, տարանջատել դրանք և կազմել այն որոշումները, որոնք կարող են կայացվել դատական վերահսկողության շրջանակներում, քննարկել և ներկայացնել մինչդատական քրեական վարույթի առանձին ինստիտուտների վերաբերյալ ՄԻԵԴ-ի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները:

Կտիրապետի՝ փաստեր վերլուծելու, հետևություններ կատարելու հմտություններին, համապատասխան որոշումներ, արձանագրություններ, միջնորդություններ կազմելու տեխնիկային:

Բովանդակությունը

Թեմա 1. Քրեական վարույթ նախաձեռնելը: **Թեմա** 2. Մինչդատական վարույթի ընդհանուր պայմանները: **Թեմա** 3. Հանրային քրեական հետապնդումը: **Թեմա** 4. Նախաքննության ավարտը: **Թեմա** 5. Ապացուցողական գործողությունների հասկացությունը և տեսակները: **Թեմա** 6. Քննչական գործողությունները: **Թեմա** 7. Ապացուցողական գործողությունների կատարման ընդհանուր կանոնները: **Թեմա** 8. Գաղտնի քննչական գործողությունները: **Թեմա 9.** Փորձաքննությունը: **Թեմա** 10. Դատական վարույթները: **Թեմա** 11. Ընդդատությունը: **Թեմա** 12. Դատական վարույթի կարգին վերաբերող պայմանները: **Թեմա** 13. Դատական վարույթի մասնակիցներին վերաբերող պայմանները: Դատական վարույթի այլ պայմաններ: **Թեմա** 14. Մինչդատական վարույթի դատական երաշխիքները: **Թեմա** 15. **Դատաքննությունն առաջին ատյանում**: **Թեմա** 16. Դատական վերանայման ընդհանուր պայմանները: **Թեմա** 17 Վերաքննությունը: **Թեմա** 18. Վճռաբեկությունը: **Թեմա** 19. Հատուկ վերանայումը: **Թեմա** 20. Առանձին անձանց նկատմամբ իրականացվող վարույթների առանձնահատկությունները: **Թեմա** 21. Առանձին տեսակի վարույթների իրականացման առանձնահատկությունները:

21/Բ29 Վարչական իրավունք - 1 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ապահովել պետական կառավարման գործադիր իշխանության մամինների կազմակերպման և գործունեության, ինչպես նաև հանրային վարչարարություն իրականացնող մարմինների՝ որպես վարչական իրավունքի սուբյեկտի խոր իմացություն, գիտելիքներ հաղորդել վարչական իրավունքի սկզբունքների, նորմերի և իրավահարաբերությունների, ինչպես նաև վարչական իրավունքի սուբյեկտների պետական կառավարման ձևերի ու մեթոդների վերաբերյալ:

«Վարչական իրավունք» դասընթացը ներառված է «Իրավագիտություն» մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրում: «Վարչական իրավունք» հանրային իրավունքի ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մաս, իրավական համակարգի ինքնուրույն ճյուղ: Ուստի «Վարչական իրավունք» դասընթացը հիմնված է իրավագիտական տեսական-պատմական գիտակարգերի վրա և փոխկապակցված է սահմանդրական իրավունքի, ինչպես նաև մյուս ճյուղային իրավաբանական գիտությունների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ վարչական իրավունքի սուբյեկտների, սկզբունքների, աղբյուրների, կառավարման վարչաիրավական ձևերի ու մեթոդների մասին:

Կկարողանա՝ սահմանել պետական կառավարման գործադիր իշխանության, ինչպես նաև սոցիալական կառավարման հասկացությունները, վերլուծել վարչական իրավունքի ուսումնասիրման առարկան կազմող հասարակական հարաբերությունները, ներկայացնել վարչական իրավունքի ուսումնասիրման մեթոդները, վերլուծել վարչական իրավունքի նորմերը և աղբյուրները, դասակարգել վարչաիրավական հարաբերությունները՝ որպես իրավահարաբերությունների տարբերակ, վերլուծել ՀՀ քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչաիրավական կարգավիճակը, դասակարգել հանրային վարչարարություն իրականացնող մարիններին՝ որպես վարչական իրավունքի սուբյեկտ, բացատրել հանրային ծառայողների՝ որպես վարչական իրավունքի սուբյեկտի կարգավիճակը, վերլուծել հասարակական միավորումների և կուսակցությունների վարչաիրավական կարգավիճակը, դասակարգել պետական կառավարման ձևերը և մեթոդները:

Կտիրապետի՝ պետական կառավարման և սոցիալական կառավարման չափանիշներին, վարչական իրավունքի առանձնահատուկ մեթոդներին, վարչական նորմերի և հարաբերությունների հասկացությանը և կառուցվածքին, վարչական իրավունքի ենթակայությամբ

պայմանավորված սուբյեկտների իրավական կարգավիճակին, գործադիր իշխանության իրականացման ինստիտուցիոնալ և ֆուկցիոնալ հիմունքներին, պետական կառավարման ձևերին և մեթոդներին:

Բովանդակությունը

Թեմա 1. Կառավարում, պետական կառավարում, գործադիր իշխանություն: **Թեմա 2.** Վարչական իրավունքի առարկան, մեթոդը և սուբյեկտները: **Թեմա 3.** Վարչաիրավական նորմերը և աղբյուրները: **Թեմա 4.** Վարչաիրավական հարաբերություններ: **Թեմա 5.** ՀՀ քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչաիրավական կարգավիճակը: **Թեմա 6.** Պետական կառավարման մարմինները որպես վարչական իրավունքի սուբյեկտ: **Թեմա 7.** Պետական ծառայողները՝ որպես վարչական իրավունքի սուբյեկտ: **Թեմա 8.** Հասարակական և հասարակական- քաղաքական կազմակերպությունները՝ որպես վարչական իրավունքի սուբյեկտ: **Թեմա 9.** Պետական կառավարման ձևերը: **Թեմա 10.** Պետական կառավարման մեթոդները: **Թեմա 11.** Պետական կառավարման ակտեր:

21/Բ30 Վարչական իրավունք - 2 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ապահովել պետական կառավարման գործադիր իշխանության մամինների կազմակերպման և գործունեության, ինչպես նաև հանրային վարչարարություն իրականացնող մարմինների՝ որպես վարչական իրավունքի սուբյեկտի խոր իմացություն, գիտելիքներ հաղորդել վարչական իրավունքի նորմերի և հարաբերությունների, ինչպես նաև հասարակական կյանքի տարբեր ոլորտների պետական կառավարման ձևերի ու մեթոդների վերաբերյալ:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝ տնտեսության, սոցիալ-մշակութային, վարչաքաղաքական բնագավառներում կառավարման կազմակերպումը, պատճառված վնասի համար, վարչական պատասխանատվությունը, համոզումը և հարկադրանքը պետական կառավարման մեջ, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթը, կարգապահական վարույթը, տնտեսության և ֆինանսների պետական կառավարումը, սոցիալ- մշակութային ոլորտի պետական

կառավարումը: վարչաքաղաքական ոլորտի պետական կառավարումը, միջճյուղային պետական կառավարումը, վարչական իրավունքի հատուկ մասի հասկացությունը:

Կկարողանա՝ վերլուծել հատուկ վարչաիրավական ռեժիմները և առանձնահատկությունները, բնութագրել օրինականությունը և կարգապահությունը պետական կառավարման մեջ, նկարագրել վարչական վարույթի վարչարարության հիմնարար սկզբունքները և առանձնահատկությունները, բացատրել վարչական վարույթ հարուցելու իրավական հիմքերը, տարբերակել վարչական ակտի տեսակները և բողոքարկման վարույթի կարգն ու պայմանները, բացատրել պատասխանատվությունը վարչարարությամբ պատճառված վնասի համար, բացատրել համոզելը և հարկադրելը պետական կառավարման մեջ որպես վարչական պատասխանատվության տեսակ, վերլուծել վարչական իրավախախտումների վերաբերող գործերով վարույթի առանձնահատկությունները, բացատրել վարչական իրավունքի հատուկ մասի հատկությունը, նկարագրել տնտեսության կառավարման վարչաիրավական կանոնակարգման հիմունքները, վերլուծել սոցիալ-մշակույթի կառավարման սկզբունքները, բացատրել վարչաքաղաքական բնագավառների կառավարման առանձնահատկությունները:

Կտիրապետի՝ հատուկ վարչաիրավական ռեժիմներին, կառավարման բնագավառում օրինականության ապահովման կառուցակարգերին, վարչարարության հիմնական սկզբունքներին, վարչական վարույթ հարուցելու հիմքերին, վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության կարգին և միջոցներին, վարչական իրավախախտուների վերաբերյալ գործերի վարույթին:

Բովանդակությունը

Թեմա 1. Վարչական վարույթի և վարչարարության հասկացությունը, վարչարարության հիմնարար սկզբունքները: **Թեմա 2.** Վարչական վարույթի իրավական հիմքերը: **Թեմա 3.** Վարչական վարույթի համակարգը: **Թեմա 4.** Վարչական ակտը, դրա տեսակները եվ ձևերը: բողոքարկման վարույթը: Պատասխանատվությունը վարչարարությամբ պատճառված վնասի համար: **Թեմա 5.** Վարչական պատասխանատվություն: **Թեմա 6.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթը: **Թեմա 7.** Պետական կառավարման ոլորտում կարգապահական վարույթը: **Թեմա 8.** Տնտեսության և ֆինանսների պետական կառավարումը: **Թեմա 9.** Սոցիալ- մշակութային ոլորտի պետական կառավարումը: **Թեմա 10.** Վարչաքաղաքական ոլորտի պետական կառավարումը: **Թեմա 11.** Միջճյուղային պետական կառավարումը: **Թեմա 12.** Արտասահմանյան երկրների վարչական իրավունքի ձևավորման պատմաիրավական նախադրյալները և հիմնական համակարգերը:

21/Բ31 Վարչական դատավարություն (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

«ՀՀ վարչական դատավարություն» դասընթացը ներառված է «Իրավագիտություն» մասնագիտությամբ բակալավրիպատրաստման կրթական ծրագրում:

Դասընթացն ուղղված է «Իրավագիտության» կրթական ծրագրով սովորողների մոտ զարգացնելու հիմնարար տեսական և գործնական գիտելիքներ և կարողություններ վարչական վարույթի և դատավարության սկզբունքների վերաբերյալ:

«ՀՀ վարչական դատավարություն» դասընթացի նպատակն է խորացնել սովորողների գիտելիքները Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում, Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանում և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգի, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ վարչական դատավարության բովանդակությունը ու համակարգը ՀՀ-ում, վարչական դատավարության սկզբունքները, մասնակիցների կազմը, ՀՀ վարչական դատավարության տեսակները, փուլերը և դատաքննության կարգը, ՀՀ վարչական դատավարության նորմատիվ-իրավական հիմքերը, ՀՀ վարչական արդարադատության առանձնահատկությունները:

Կարողանա՝ բնութագրել ՀՀ վարչական դատավարական իրավունքը, վերլուծել ՀՀ վարչական դատավարության փուլերը, բացահայտել վարչական դատարան դիմելու կարգը, դատաքննության անցկացման, ինչպես նաև դատական ակտերի բողոքարկման կարգերը, վերլուծել վարչական դատարանի ընդունած ակտերը, կատարել եզրահանգումներ:

Կտիրապետի՝ ՀՀ վարչական դատավարության իրավական հիմքերին, համակարգին, վարչական դատավարության ձևերին ու կառուցակարգերին, ՀՀ վարչական, վարչական վերաքննիչ և վճռաբեկ դատարանների վարչական գործերի քննության առանձնահատկություններին:

21/Բ13 Կրիմինալիստիկա - (6 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հանցագործությունների քննության մեթոդիկայի հիմունքների, քրեական գործերի քննության ընթացքում կիրառվող ժամանակակից տեխնիկական միջոցների, կիրառվող տակտիկական հնարքները, դրանց կիրառման առանձնահատկությունները: Մասնավորապես կրիմինալիստիկական իդենտիֆիկացիան (նույնացում), կրիմինալիստիկական դիագնոստիկան (ախտորոշումը), կրիմինալիստիկական մոդելավորումը, կրիմինալիստիկական միկրոլոգիան, կրիմինալիստիկական օդորոլոգիան և այլն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ հանցագործությունների քննության մեթոդոլոգիական հիմունքները, հանցագործությունների առանձին տեսակների քննության կազմակերպման գործնական առանձնահատկությունները, քրեական գործերի քննության ընթացքում կիրառվող գիտատեխնիկական միջոցները, տակտիկական հնարքների համակարգը:

Կկարողանա՝ բացահայտել հանցագործությունների քննության օրինաչափությունները, վերլուծել քննության կազմակերպման, իրավապահ մարմինների փոխգործողությունների համակարգման առանձնահատկությունները, վերարտադրել առանձին տիպային քննչական իրավիճակները և սահմանել բնորոշ լուծումներ, կազմակերպել քննության առանձին փուլերի պլանավորման և դրանց համադրման գործընթացը:

Կտիրապետի՝ հանցագործությունների քննության տեսական ու գործնական հմտություններին՝ կրիմինալիստիկական լուսանկարչությանը, հոլոգրաֆիային, հետքաբանությանը (տրասոլոգիա), միկրոլոգիային, օդորոլոգիային և հրազենագիտությանը (բալիստիկա), հանցագործությունների քննության ոլորտում առկա օրինաչափությունների կիրառման հնարքներին, փաստերը վերլուծելու, դրանք համադրելու և իրավիճակից բխող գործնական որոշումներ կայացնելու հնարներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կրիմինալիստիկայի հասկացությունը, մեթոդները, առարկան և համակարգը: **Թեմա 2.** Կրիմինալիստիկայի կապն իրավաբանական այլ գիտությունների հետ: **Թեմա 3.** Կրիմինալիստիկական իդենտիֆիկացում (նույնացում): **Թեմա 4.** Քննիչի իդենտիֆիկացման գործողությունները: **Թեմա 5.** Կրիմինալիստիկական մոդելավորում: **Թեմա 6.** Կրիմինալիստիկական տեխնիկա: **Թեմա 7.** Կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչություն: **Թեմա 8.** Կրիմինալիստիկական (դատական) լուսանկարման տեսակները: **Թեմա 9.** Կրիմինալիստիկական (դատական) հետազոտական լուսանկարչություն: **Թեմա 10.** Կինոնկարահանման և տեսագրման կիրառումը քննչական գործողություններ կատարելիս: **Թեմա 11.** Կրիմինալիստիկական հոլոգրաֆիա: **Թեմա 12.** Կրիմինալիստիկական հետքաբանություն

(տրասոլոգիա): **Թեմա 13.** Կրիմինալիստիկական միկրոլոգիա: **Թեմա 14.** Կրիմինալիստիկական օդորոլոգիա: **Թեմա 15.** Կրիմինալիստիկական հրազենագիտություն (բալիստիկա, հրազենագիտության օբյեկտները): **Թեմա 16.** Գրի կրիմինալիստիկական հետազոտում:

21/Բ1 Աշխատանքային իրավունք - (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ աշխատանքային իրավունքի ոլորտի, աշխատանքի հետ կապված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման վերաբերյալ: Տվյալ ոլորտում գիտելիքների խորացումը թույլ կտա ուսանողներին պրակտիկայում կիրառել աշխատանքային օրենսդրության նորմերը, պահպանել աշխատանքային հարաբերությունների առավել չպաշտպանված կողմի՝ աշխատողների աշխատանքային իրավունքները: Աշխատանքային իրավունքը ՀՀ իրավունքի կարևորագույն ճյուղերից մեկն է, որն իբրև իրավանորմերի մի ամբողջություն կարգավորում է քաղաքացիների սահմանված աշխատանքի իրավունքի իրականացման գործընթացը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ աշխատանքային իրավունքի ոլորտում կիրառվող հիմնական հասկացությունները և ինստիտուտները, աշխատանքային իրավունքի հիմնական սուբյեկտների ընդհանուր բնութագիրը:

Կկարողանա՝ ներկայացնել աշխատողին աշխատանքի ընդունելու, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը փոփոխելու և լուծելու ընթացակարգերը, աշխատանքային ոլորտի իրավական ակտերով նախատեսված՝ գործատուի և աշխատողի իրավունքները և պարտականությունները, աշխատանքային իրավունքի հիմնական սուբյեկտների պատասխանատվության տեսակները և առանձնահատկությունները, կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերի կնքման և կոլկետիվ բանակցությունների վարման ընթացակարգը, ինչպես նաև գործադուլի իրավական կարգավորումը, լուսաբանել աշխատանքի անվտանգության վերաբերյալ օրենսդրական հիմնական կարգավորումները, պարզաբանել աշխատաժամանակի կազմակերպման, դրա վարման կարգի, հաշվառման, աշխատողին տրամադրվող հանգստի իրավունքի իրացման, ինչպես նաև աշխատավարձի վճարման և դրա պաշտպանության հետ կապված հիմնահարցերը,աշխատողների ներկայացուցիչների իրավական կարգավիճակը,

աշխատանքային իրավունքների պաշտպանության դատական և արդատական ձևերը և դրանց իրացման կարգը, թվարկել աշխատանքային պայմանագրերի, պատասխանատվության միջոցների, աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը և դրանց կիրառման ու իրացման առանձնահատկությունները:

Կտիրապետի՝ աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորմանն ուղղված գործատուի ներքին և անհատական իրավական ակտերին, աշխատանքի վերականգման

և աշխատանքից ազատելու մասին հրամանների կազմման ձևերին, կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու մասին հրամանն անվավեր ճանաչելու պահանջով հայցեր կազմելու ձևերին,միջին աշխատավարձի հաշվարկման կարգին,կոլեկտիվ և անհատական աշխատանքային պայմանագրեր կազմելու պահանջներին, աշխատանքի ընդունելու մասին, աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին գործատուի անհատական իրավական ակտերի, ինչպես նաև աշխատաժամանակի ու հանգստի կազմակերպման ժամանակացույցերի ձևակերպման կարգերին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Աշխատանքային իրավունքի ընդհանուր բնութագիրը: **Թեմա 2.** Աշխատանքային իրավունքի աղբյուրները: **Թեմա 3.** Աշխատանքային իրավունքի սկզբունքները: **Թեմա 4.** Աշխատանքային իրավահարաբերություններ: **Թեմա 5.** Աշխատանքային իրավունքի սուբյեկտները: **Թեմա 6.** Ժամկետները աշխատանքային իրավունքում: **Թեմա 7.** Աշխատողների իրավունքների իրականացումը և պաշտպանությունը: **Թեմա 8.** Կոլեկտիվ պայմանագիր, կոլեկտիվ Կոլեկտիվ աշխատանքային վեճեր: **Թեմա 9.** Աշխատանքային պայմանագիր: **Թեմա 10.** Աշխատանքային պայմանագրի դադարումը: Աշխատողների անձնական տվյալների պաշտպանությունը: **Թեմա 11.** Աշխատաժամանակ: **Թեմա 12.** Հանգստի ժամ: **Թեմա 13.** Աշխատավարձ: **Թեմա 14.** Երաշխիքները և փոխհատուցմներ: Աշխատանքային կարգապահություն **Թեմա 15.** Աշխատանքային պայմանագրի կողմերի նյութական պատասխանատվությունը: **Թեմա 16.** Առանձին կատեգորիայի անձանց աշխատանքի կարգավորման առանձնահատկությունները: **Թեմա 17.** Աշխատանքը և ուսումնառությունը: **Թեմա 18.** Աշխատանքային վեճեր: **Թեմա 19.** Հսկողությունը և վերահսկողությունը աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ: **Թեմա 20.** Պատասխանատվությունը աշխատանքային օրենսդրության խախտման համար:

21/Բ46 Ֆինանսական իրավունք - (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Ֆինանսական իրավունքի դասընթացը ներառված է «Իրավագիտություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրում: «Ֆինանսկան իրավունք» դասընթացը բաղկացած է 1 մոդուլից: Ֆինանսական իրավունքը իրավաբանական և տնտեսագիտական ուղղվածություն ունեցող գիտություն է: Այն անմիջականորեն կապված է պետության հարկային համակարգի, բյուջետային, բանկային համակարգերի խնդիրների հետ: Հայաստանի Հանրապետության իրավագիտության ժամանակակից խնդիրներից է ֆինանսական իրավունքի առարկայի հասկացության լուսաբանումը: Կարևոր է, որ ուսումնասիրության ոլորտում իրավունքի տեսության դիրքերից հետազոտվի ֆինանսական իրավունքի առարկայի դերը իրավունքի համակարգում, ինչպես նաև հիմնարար սկզբունքների և արժեքների համակարգը: Պետության ֆինանսական գործառույթների ուսումնասիրությունը նպաստում է այդ պետության զարգացման հիմնական ուղություններին և անմիջականորեն կապված է հարկային իրավունքի,
վարչական իրավունքի, քաղաքացիական իրավունքի և այլ իրավունքի ճյուղերի հետ: Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ստանում ուսումնասիրելու պետության ֆինանսական գործառույթները և նրա զարգացման հիմնական ուղղությունները, իրավական համակարգի առանցքային տարրերի ու հասկացությունների,որոնցով էլ պայմանավորված է այդ պետության հետագա զարգացման միտումները: Այն մասնագիտական առարկա է և ուսումնասիրում է պետության ֆինանսական գործընթացի ընդհանուր օրինաչափությունները: Ուսանողներին ապահովում է պետության ֆինանսական գործունեության վերլուծության, եզրահանգումների կատարման կարողություններ, ինչպես նաև տիրապետել մասնագիտական գործունեության ոլորտին համապատասխան նորմատիվ և այլ իրավական ակտերին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ ֆինանսական իրավունքի՝ որպես իրավունքի ինքնուրույն ճյուղի նպատակները, զարգացման փուլերը, հիմնադրույթները, սկզբունքները, դերն ու նշանակությունը իրավական համակարգում, ֆինանսական իրավունքի դերը պետության ֆինանսական գործառույթներն իրականացնելիս:

Կկարողանա՝ մեկնաբանել ֆինանսական իրավունքի աղբյուրները, բնութագրել ֆինանսական համակարգը, մեկնաբանել մասնագիտորեն ճիշտ և գրագետ ֆինանսական իրավունքի նորմերը, ներկայացնել պետության ֆինանսական խնդիրները, բացահայտել ֆինանսական իրավունքի

նպատակները և խնդիրները, ներկայացնել ֆինանսական գործունեության իրավական առանձնահատկությունները, բնութագրել պետության բյուջետային համակարգը, բյուջետային գործընթացի իրական կարգավորման առանձնահատկությունները, ներկայացնել ֆինանսավարկային մարմինների գործունեության կարգավորման իրավական հիմունքները:

Կտիրապետի՝ ֆինանսական իրավունքի սկզբունքներին, ֆինանսական գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտին, մասնագիտական գործունեության ոլորտին համապատասխան նորմատիվ և այլ իրավական ակտերին, պետության բյուջետային համակարգի առանձնահատկություններին, բյուջետային գործընթացի իրավական դրույթներին, բանկային իրավունքի հիմունքներին:

Բովանդակությունը

Թեմա 1. Պետության ֆինանսական գործունեությունը և իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում: **Թեմա 2.** Ֆինանսական իրավունքի առարկան և համակարգը: **Թեմա 3.** Ֆինանսաիրավական նորմեր և հարաբերություններ: **Թեմա 4.** Պետության ֆինանսական վերահսկողության իրավական հիմքերը : **Թեմա 5.** Բյուջե և բյուջետային համակարգ: **Թեմա 6.** Բյուջեների դասակարգման իրավական հիմքերը և դեֆիցիտի կառավարումը Հայաստանի Հանրապետությունում: **Թեմա 7.** Բյուջետային գործընթաց հասկացությունը և իրավական կարգավորումը ՀՀ-ում: **Թեմա 8.** Տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային եկամուտներ և ծախսեր սահմանելու իրավունքը: **Թեմա 9.** Հայաստանի Հանրապետության և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային իրավունքները: **Թեմա 10.** Պետական եկամուտների հասկացությունը, համակարգը, տեսակները և իրավական կարգավորումը: **Թեմա** 11. Հարկերի հասկացությունը և իրավական կարգավորումը ՀՀ-ում: **Թեմա 12.** Հարկերի համակարգը և իրավական կարգավորումը ՀՀ-ում: **Թեմա** 13. Ապահովագրության իրավական կարգավորումը: **Թեմա** 14. Արժեթղթերը և դրանց տեսակները: **Թեմա** 15. Բանկային իրավունքի հիմունքները ՀՀ-ում: **Թեմա** 16. Դրամաշրջանառության իրավական հիմունքները ՀՀ-ում: **Թեմա 17.** Արժութային գործառնությունների և վերահսկողության իրավական հիմունքները ՀՀ-ում:

21/Բ21 Միջազգային իրավունք (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է բազմակողմ և հիմնավոր գիտելիքներ հողորդել միջազգային հանրային իրավունքի ձևավորման, զարգացման, իրավունքի աղբյուրների, սուբյեկտների և հիմնական սկզբունքների վերաբերյալ:

Դիտարկվում է նաև միջազգային հանրային իրավունքի առաջնությունը միջպետական հարաբերություններում, միջազգային հանրային և միջազգային մասնավոր իրավունքների առանձնահատկությունները, միջազգային կազմակերպությունների հասկացությունը, դասակարգումը, դերն ու նշանակությունը միջազգային համակարգում: Միջազգային կազմակերպություններին անդամակցելու, դուրս գալու, հեռանալու և անդամակցությունը կասեցնելու կարգը: Արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը, հյուպատոսական աշխատողների գործառույթները, նշանակման և հետ կանգնման կարգը: Մարդու իրավունքների պաշտանության բնագավառում պետությունների համագործակցությունը:

Որոշակիորեն ուսումնասիրվում է տարածքի նշանակությունը միջազգային հարաբերություններում, տարածքի տեսակները՝ պետական տարածք, միջազգային ռեժիով և խառը ռեժիմով տարածք: Ծովային տարածությունների դասակարգումը, ներքին ծովային ջրեր, պատմական ջրեր (պատմական ծովածոցեր և նեղուցներ): Միջազգային նեղուցներ, ծովի հատակի միջազգային շրջանը՝ բաց ծով, փակ ծով, ծովափ չունեցող պետություններ: Միջազգային զինված ընդհարումներ և միջազգային բնույթ չկրող ընդհարումներ: Շրջակա միջավայրի միջազգային իրավական պաշտպանություն: Պետությունների տարածքային ամբողջականության, ներքին գործերին չմիջամտելու, պետությունների համագործակցության, ազգերի և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքները, զարգացումը և բովանդակությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ միջազգային հանրային իրավունքի հասկացությունն ու էությունը, աղբյուրները, միջազգային իրավունքի համակարգի կառուցվածքը, միջազգային պայմանագրային իրավունքի հիմունքները, միջազգային-իրավական պատասխանատվության առանձնահատկությունները, միջազգային անվտանգության իրավունքի խնդիրները, միջազգային տնտեսական իրավունքի հիմնական գործառույթները

Կկարողանա՝ բացահայտել միջազգային իրավունքի համակարգի առանձնահատկությունները, վերլուծել միջազգային իրավունքի սկզբունքները, բնութագրել միջազգային իրավունքի սուբյեկտներին, բացահայտել հանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցության հիմքերն ու ուղղությունները, բացահայտել «տարածքի» միջազգային-իրավական հասկացությունը, բնութագրել միջազգային ծովային իրավունքը՝ որպես միջազգային իրավունքի ճյուղ, վերլուծել միջազգային օդային իրավունքը:

Կտիրապետի՝ միջազգային հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգերին, միջազգային իրավանորմերը ազգային իրավական համակարգ փոխակերպելու ձևերին, միջազգային իրավանորմերի ու սկզբունքների կիրառման հիմունքներին,միջազգային տիեզերական իրավունքի հիմունքներին, շրջակա միջավայրի միջազգային-իրավական պահպանության կառուցակարգերին, միջազգային վեճերի լուծման միջազգային-իրավական միջոցներին ու կառուցակարգերին, միջազգային իրավունքի ճյուղերի զարգացման հիմնական ուղղություններին:

Բովանդակությունը

Թեմա 1. Միջազգային իրավունքի հասկացությունը: **Թեմա** 2. Միջազգային իրավունքի աղբյուրները: **Թեմա** 3. Միջազգային իրավունքի պատմությունը: **Թեմա** 4. Միջազգային իրավունքի սուբյեկտները: **Թեմա 5.** Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները: **Թեմա** 6. Միջազգային պայմանագրերի իրավունք: **Թեմա** 7. Միջազգային իրավական պատասխանատվություն: **Թեմա 8.** Դիվանագիտական և հյուպատոսական իրավունք: **Թեմա 9.** Միջազգային կազմակերպությունների իրավունք: **Թեմա 10.** Անհատը և միջազգային իրավունքը: **Թեմա 11.** Միջազգային վեճերի խաղաղ կարգավորումը միջազգային իրավունքում: **Թեմա 12.** Միջազգային անվտանգության իրավունք: **Թեմա 13.** Միջազգային մարդասիրական իրավունք: **Թեմա 14.** Միջազգային քրեական իրավունք: **Թեմա 15.** Տարածքը միջազգային իրավունքում: **Թեմա 16.** Միջազգային ծովային իրավունք: **Թեմա 17.** Միջազգային օդային իրավունք: **Թեմա 18.** Միջազգային տիեզերական իրավունք: **Թեմա 19.** Միջազգային էկոլոգիական իրավունք: **Թեմա 20.** Միջազգային տնտեսական

21/Բ7 - Եվրոպական իրավունք (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է կայուն գիտելիքներ ձևավորել Եվրոպական Միության իրավունքի հասկացության, խնդիրների, սկզբունքների, Եվրոպական Միության կազմի, տարածքի, եվրաինտեգրման, եվրոպական համայնքների և Եվրոպական Միության կազմավորման, իրավասության, նպատակների, գործունեության սկզբունքների, հանցավորության դեմ պայքարի, Եվրոպական Միության խորհրդի և դատական մարմինների մասին: Միաժամանակ, ուսումնասիրվում է Եվրոպական Միության կառուցվածքը, Եվրոպական Միությունը՝ որպես եվրատարածքում քաղաքական իշխանության նոր ձև, եվրաինտեգրման հայեցակարգերը:

Եվրոպական Միության իրավասությունը, նպատակները և գործունեության սկզբունքները: Եվրոպական Միության ինստիտուտները և մարմինները՝ Եվրախորհուրդ, Եվրադատարան, Եվրոպական համայնք, հսկիչ մարմիններ, ֆինանսական հաստատություններ և խորհրդակցական մարմիններ: Մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի հիմունքները Եվրոպական Միությունում, Եվրոպական Միության քաղաքացիությունը: Եվրոպական Միու¬թյան մաքսային, բանկային, էներգետիկ և մտավոր իրավունք: Շենգենյան իրա¬վունք, վիզային ռեժիմ, Շենգենյան վիզա: Հայաստանի Հանրապետությունը և Եվրոպական Միությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ Եվրամիության իրավական համակարգի կառուցվածքը, աղբյուրները, առանձնահատկությունները:

Կկարողանա՝ վերլուծել Եվրոպական Միության իրավունքի նորմատիվ հիմքերը, բացահայտել Եվրամիության իրավունքի զարգացման օրինաչափությունները, ըմբռնել Եվրոպական իրավունքի և միջազգային իրավունքի, ինչպես նաև Եվրոպական իրավունքի և ներպետական իրավունքի հարաբերակցության հիմունքները:

Կտիրապետի՝ Եվրամիության իրավունքի նորմերի կիրառման կառուցակարգերին, Եվրոպական իրավունքի համակարգում մարդու իրավունքների դատական պաշտպանության առանձնահատկություններին, Եվրոպական Միությունում որոշումների ընդունման և կատարման ընթացակարգերին:

Բովանդակությունը

Թեմա 1. Եվրոպական Միություն: Կազմը, տարածքը և բնակչությունը: **Թեմա 2.** Եվրոպական ինտեգրման նախադրյալները և հայեցակարգերը: Եվրոպական համայնքների կազմավորմանը նախորդած ինտեգրման միավորումները և նախագծերը: **Թեմա 3.** Եվրոպական Միության իրավունքը, հասկացությունը, սկզբունքները և աղբյորները, համակարգը: **Թեմա 4.** Եվրոպական միության իրավասությունը և գործունեության սկզբունքները: **Թեմա 5.** Եվրոպական Միության ինստիտուտները և մարմինները: **Թեմա 6.** Օրենսդրական գործընթացը Եվրոպական Միությունում: **Թեմա 7.** Մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի հիմունքների ինստիտուտը: **Թեմա 8.** Եվրոպական Միության քաղաքացիությունը: **Թեմա 9.** Շենգենյան իրավունքի համակարգը: **Թեմա 10.** Եվրոպական Միության ընդհանուր քրեական

քաղաքականությունը: **Թեմա 11.** Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև համաձայնությունների համակարգը:

21/Բ9 - Ընդհանուր հոգեբանություն - (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Ընդհանուր հոգեբանությունե դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեբանության գիտության տեսական ընդհանուր հիմունքներին, հասկացություններին: Նրանց մոտ ձևավորել մարդու հոգեկանի ընդհանուր օրինաչափությունների, մեխանիզմների և առանձնահատկությունների մասին պատկերացումներ: Սովորողներին զինել հոգեկան-ճանաչողական գործընթացներին, վիճակներին, հոգեկանի ակտիվության մակարդակներին, հուզակամային, պահանջմունքադրդապատճառային ոլորտներին, անձնային հատկություններին, խառնվածքին, բնավորությանը և ընդունակություններին վերաբերող հստակ գիտելիքներով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ հոգեբանության զարգացման առարկան, խնդիրները, սկզբունքները, հետազոտման մեթոդները, հիմնական հասկացությունները, իմացական գործընթացների ձևավորման ֆիզիոլոգիական մեխանիզմները, առանձնահատկությունները, տեսակները:

Կկարողանա՝ բնութագրել մարդու հոգեկան տարբեր երևույթների առանձնահատկությունները և դրսևորումները վարքում և միջանձնային հարաբերություններում:

Կտիրապետի՝ հոգեբանություն գիտության ժամանակակից տեսական հայեցակարգերին, մոտեցումներին, հոգեբանական հետազոտման մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հոգեբանությունը որպես գիտություն: **Թեմա 2.** Հոգեկանի կենսաբանական հիմքերը և էվոլյուցիան: **Թեմա 3.** Ուղեղը և հոգեկանը: Հոգեկանի ակտիվության մակարդակները: **Թեմա 4.** Գործունեության հիմնախնդիրը հոգեբանության մեջ: **Թեմա 5.** Ուշադրությունը որպես հոգեկան-ճանաչողական գործընթաց: **Թեմա 6.** Զգայությունը որպես հոգեկան-ճանաչողական գործընթաց: **Թեմա 7.** Ընկալումը որպես հոգեկան-ճանաչողական գործընթաց: **Թեմա 8.** Հիշողությունը որպես հոգեկան-ճանաչողական գործընթաց: **Թեմա 9.** Երևակայությունը որպես հոգեկան-

ճանաչողական բարձրագույն գործընթաց: **Թեմա 10.** Մտածողություն որպես հոգեկան-ճանաչողական բարձրագույն գործընթաց: **Թեմա 11.** Անձնավորություն: Կառուցվածքը և դրսևորումները: **Թեմա 12.** Անձի հուզակամային ոլորտը: **Թեմա 13.** Խառնվածքը որպես անձնային հոգեկան հատկություն: **Թեմա 14.** Բնավորությունը որպես անձի հատկություն: **Թեմա 15.** Ընդունակությունները որպես անձի հատկություն: **Թեմա 16.** Հաղորդակցում: Սոցիալական խմբեր: Միջանձնային հարաբերություններ:

21/Բ46 - Իրավաբանական հոգեբանություն - (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Իրավագիտություն մասնագիտությամբ ուսանողներին ծանոթացնել իրավաբանական հոգեբանության ուսումնասիրման առարկային, խնդիրներին, նպատակներին, հարաբերականորեն ինքնուրույն ոլորտներին՝ դատական հոգեբանությանը, քրեական հոգեբանությանը, հանցագործ անձի հոգեբանությանը և այլն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ իրավաբանական հոգեբանության ուսումնասիրման առարկան, մեթոդները, սկզբունքները, աղբյուրները, խնդիրները և նպատակները, նախաքննության հոգեբանական առանձնահատկությունները, հոգեբանական նորմերը, դրանց տարբերակման հասկացությունները, հոգեբանական երևույթների տարբեր դրսևորումների դասակարգման սկզբունքները, իրաբանական հոգեբանության տարբեր բաժինների զարգացումների մասին:

Կկարողանա՝ լուծել տարբեր բարդության հոգեբանական խնդիրներ, կազմել հոգեբանական դիմանկար, լուծել թեստային հանձնարարություններ, մեկնաբանել դրանց կիրառման և օգտագործման սկզբունքները, հետազոտել իրավախախտի, վկայի, տուժողի, քննիչի, դատավորի, դատախազի անձնային հատկությունները, արարքների հոգեբանական առանձնահատկությունները:

Կտիրապետի՝ իրավաբանական հոգեբանության տարբեր բաժիններին վերաբերվող հիմնական մեթոդներին, ուսումնասիրած տեսությունների վերաբերյալ հիմնավոր եզրակացություններ անելու հմտություններին, հոգեբանական տեսական և գործնական գիտելիքները արտացոլել իրական գործունեության մեջ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Իրավաբանական հոգեբանություն դասընթացի ընդհանուր բնութագիրը: **Թեմա 2.** Ընտանիքի և սոցիալական միջավայրի դերը իրավաբանական հոգեբանության ձևավորման գործընթացում: **Թեմա 3.** Հանցագործի անձի հոգեբանությունն և հանցավոր արարքի հոգեբանական գործոնները: **Թեմա 4.** Նախաքննության հոգեբանական հիմունքները: **Թեմա 5.** Դատահոգեբանական փորձաքննության ընդհանուր բնութագիրը: **Թեմա 6.** Փաստաբանական գործունեության հոգեբանություն: **Թեմա 7.** Դատավորի հոգեբանության առանձնահատկությունները: **Թեմա 8.** Քրեակատարողական հոգեբանություն:

21/Բ9 - Դատական հոգեբուժություն - (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Ծանոթացնել դատական հոգեբուժության բովանդակությանը, խնդիրներին, Հոգեկան հիվանդությունների ախտանիշներին և համախտանիշներին, առանձին հոգեկան հիվանդությունների առաջացման պատճառներին, կլինիկային,ախտորոշմանը, ինչպես նաև դրանց ժամանակ մեղսունակության և անմեղսունակության որոշմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ դատական հոգեբուժություն առարկան և խնդիրները, ընդհանուր հոգեախտաբանության, մեղսունակության և անմեղսունակության, նևրոհոգեկան հիվանդություններով պայմանավորված հոգեկան խանգարումների, սիմուլյացիայի, դիսիմուլյացիայի, էպիլեպսիայի, շիզոֆրենիայի, օլիգոֆրենիայի, ալկոհոլամոլության, թմրամոլության առանձնահատկությունների մասին:

Կկարողանա՝ բացահայտել այս կամ այն հոգեկան շեղումը, բնորոշել դատահոգեբուժական հիմնական հասկացությունները, առանձնացնել հոգեախտաբանական համախտանիշները, անել եզրահանգումներ մեղսունակության և անմեղսունակության վերաբերյալ, տարբերակել առանձին հոգեկան հիվանդությունները:

Կտիրապետի՝ տարբեր հոգեկան շեղումներ ունեցող անձանց հետ փորձաքննություն անցկացնելու մեթոդներին, դատահոգեբուժական տերմինաբանությանը, հոգեկան հիվանդությունների ախտորոշման մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Դատական հոգեբուժություն առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Ընդհանուր հոգեախտաբանություն: **Թեմա 3.** Դատական հոգեբուժական էքսպերտիզան քրեական և

քաղաքացիական պրոցեսում: **Թեմա 4.** Նևրոհոգեկան հիվանդություններ: **Թեմա 5.** Անոթային հիվանդություններով պայմանավորված հոգեկան խանգարումներ: **Թեմա 6.** Հոգեկան խանգարումների սիմուլյացիան և դիսիմուլյացիան: **Թեմա 7.** Էպիլեպսիա, շիզոֆրենիա, օլիգոֆրենիա: **Թեմա 8.** Ալկահոլամոլություն, թմրամոլություն:

21/Բ9 - Դատական բժշկություն - (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Ծանոթացնել դատական բժշկության բովանդակությանը, խնդիրներին, փորձագետի իրավունքներին ու պարտականություններին, ծանոթացնել դիակների և կենդանի անձանց դատաբժշկական փորձաքննության առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ դատական բշկություն առարկան ու բովանդակությունը, ընդհանուր մահաբանություն, դիակի դատաբժշկական փորձաքննություն, մեխանիկական վնասվածքների դեպքում դիակի դատաբժշկական փորձաքննությունը, մեխանիկական շնչահեղձում, վնասվածքները և մահը բարձր և ցածր ջերմության ներգործությունից, դատաբժշկական թունաբանություն, կենդանի անձանց դատաբժշկական փորձաքննություն, սեռական անձեռնմխելիության դատաբժշկական փորձաքննություն, բժշկական գործունեության մասնագիտական իրավախախտումներ:

Կկարողանա՝ դիակային երևույթների հիման վրա ճիշտ որոշել մահվան ժամկետը, կազմել դեպքի վայրի զննման արձանագրություն, կատարել կենդանի անձանց դատաբժշկական փորձաքննություն, դիակների և կենդանի անձանց փորձաքննության դեպքում կազմել եզրակացություն:

Կտիրապետի՝ դատաբժշկական փորձաքննություն անցկացնելու մեթոդներին, տիրապետի համապատասխան բժշկական տերմինաբանությանը:

Բովանդակությունը

Թեմա 1. Դատական բժշկության առարկան ու բովանդակությունը: **Թեմա 2.** Ընդհանուր մահաբանություն: **Թեմա 3.** Դիակի դատաբժշկական փորձաքննություն: **Թեմա 4.** Դատաբժշական փորձաքննությունը մեխանիկական վնասվածքների դեպքում: **Թեմա 5.** Մեխանիկական շնչահեղձում: **Թեմա 6.** Վնասվածքները և մահը բարձր և ցածր ջերմության ներգործությունից: **Թեմա 7.** Դատաբժշկական թունաբանություն: **Թեմա 8.** Կենդանի անձանց

դատաբժշկական փորձաքննություն: **Թեմա 9.** Սեռական անձեռնմխելիության դատաբժշկական փորձաքննություն: **Թեմա 10.** Բժշկական գործունեության մասնագիտական իրավախախտումներ:

21/Բ45 – Քրեակատարողական իրավունք - (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին պատժի կատարման կարգի և պայմանների հետ, դատապարտյալների հիմնական իրավունքներին ու պարտականություններին, ներկայացնել քրեակատարողական հիմնարկների տեսակները, պատիժը կատարող մարմինների: Դասընթացը ձևավորում է ուսանողների մոտ հստակ պատկերացում պատժի նպատակների, ուղղման միջոցների և պատժից ազատված անձանց նկատմամբ իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դասընթացի նպատակն է ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված բոլոր պատժատեսակների կատարման և կրման իրավական կարգավորման խնդիրների ուսումնասիրությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված պատիժների կատարման ընդհանուր դրույթները, դատապարտյալի հիմնական իրավունքներն ու պարտականությունները, ՀՀ քրեակատարողական հիմնարկների մասին, պատիժների կատարման կարգը և պայմանները, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասը ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու կարգի և պայմանների մասին, հանցանք կատարած անձանց ուղղման սոցիալ-իրավական համակարգը:

Կկարողանա՝ սահմանել ՀՀ քրեական օրենսդրության պահանջները, տարբերակել ՀՀ քրեակատարողական հիմնարկների առանձնահատկությունները, վերլուծել առանձին պատժատեսակների կատարման կարգի և պայմանների առանձնահատկությունները, տարբերակել պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների համակարգը, դրանց գործունեության նկատմամբ վերահսկողության ու հսկողության եղանակները, ներկայացնել ազատությունից զրկելու հետ կապված և չկապված պատիժների կատարման կարգն ու պայմանները:

Կտիրապետի՝ քրեական օրենսդրությանը, քրեակատարողական իրավունքի սկզբունքներին, դատապարտյալների իրավական դրությանը, կոնկրետ պատժատեսակների կատարման կարգին ու պայմաններին, պատժից ազատելուն, քրեական պատիժների կատարման միջազգային իրավական փորձին:

Բովանդակությունը

Թեմա 1. Քրեակատարողական իրավունքի հասկացությունը, առարկան և համակարգը: **Թեմա 2.** Քրեակատարողական օրենսդրությունը ՀՀ-ում: **Թեմա 3.** Քրեական պատիժների դատապարտված անձանց իրավական վիճակը: **Թեմա 4.** Պատիժներ կատարող մարմիններն ու հիմնարկները: Վերահսկողությունը և հսկողությունն այդ մարմինների գործունեության նկատմամբ : **Թեմա 5.** Անվտանգության միջոցների կատարման կարգն ու պայմանները և գույքի բռնագրավումը : **Թեմա 6**. Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը: **Թեմա 7.**Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարումը: **Թեմա 8.** Ազատազրկման դատապարտվածների դասակարգումը և նրանց բաշխումն ըստ քրեակատարողական հիմնարկների տեսակների: **Թեմա 9.Կ**անոնակարգի իրավական կարգավորումը քրեակատարողական հիմնարկներում: **Թեմա 10.**Դատապարտյալների աշխատանքի, կրթության, մասնագիտական կրթության և քրեակատարողական վերասոցիալականացման իրավական կարգավորումը: **Թեմա 11.Պ**ատժի կրումից ազատելու իրավական կարգավորումը:

21/Բ24 –ՀՀ մունիցիպալ իրավունք - (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել ՀՀ մունիցիպալ իրավունքի առանցքային ինստիտուտների բովանդակությանը, մունիցիպալ իրավունքի հիմնական հասկացություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման իրավական և ինստիտուցիոնալ համակարգը:

Կկարողանա՝ բացահայտել մունիցիպալ-իրավական ինստիտուտների իրավական կարգավորման առանձնահատկությունները, վերլուծել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի առանձնահատկությունները, առաջարկներ անել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտների ինստիտուցիոնալ և իրավական համակարգերի կատարելագործման վերաբերյալ:

Կտիրապետի՝ ՀՀ մունիցիպալ իրավունքի էությանն և բովանդակությանը, ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մունիցիպալ իրավունքի էությունը և հիմնական նշանակությունը: **Թեմա 2.** Մունիցիպալ իրավունքի աղբյուրները: **Թեմա 3.** Մունիցիպալ իրավունքի սկզբունքները: **Թեմա 4.** Մունիցիպալ իրավունքի կապը իրավունքի մյուս ճյուղերի հետ: **Թեմա 5.** Տարածքային կառավարման հասկացությունը և էությունը: **Թեմա 6.** Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները: **Թեմա 7.** Համայնքի ավագանու լիազորությունները: **Թեմա 8.** Համայնքի ղեկավարի լիազորությունները: **Թեմա 9.** Համայնքի բյուջե: **Թեմա 10.** Տեղական ինքնակառավարումը հին և միջնադարյան Հայաստանում: **Թեմա 11.** Տեղական ինքնակառավարումը արտասահմանյան երկրներում: **Թեմա 12.** Տեղական ինքնակառավարման երաշխիքները:

21/Բ5 –Բնապահպանական իրավունք - (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ստանում գիտելիքներ ստանալու բնապահպանական իրավունքի այնպիսի կարևորագույն ինստիտուտների՝ բնօգտագործման իրավունքի, շրջակա միջավայրի պետական կառավարման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և էկոլոգիական փորձաքննության իրավական հիմքերի, բնության հատուկ պահպանվող տարածքների իրավական կարգավիճակի մթնոլորտային օդի, ընդերքի, հողի, կենդանական աշխարհի և այլ կարևորագույն հասկացությունների և բնության իրավական պահպանության հիմունքների մասին: Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները ձեռք են բերելու հմտություններ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունների գնահատման և էկոլոգիական փորձաքննության անցկացման գործնական ձևաթղթերին, բոլոր այն բնագավառներին որտեղ իրականացվում է փորձաքննություն և գնահատելու են իրավական հիմքերը, հատուկ պահպանվող տարածքների օգտագործման, ընդերքի օգտագործման և իրավական պահպանության հետ կապված պայմանագրեր կնքելու վերաբերյալ, ինչպես նաև կենդանական աշխահի օգտագործման թույլատվության կարգին: Բնական օրենքները չճանաչելը կամ գիտակցորեն դրանց խախտումները կարող են բերել անդառնալի ծանր հետևանքներ: Նպատակն է ապահովել մարդկանց ապրելու և կենսագործունեության համար պիտանի բնական

միջավայր, պահպանել բնական գենոֆոնդը, նպաստել կենդանական և բուսական աշխարհի հարստությունների վերարտադրմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ բնապահպանական իրավունքի հասկացությունը, բնապահպանական իրավունքի գիտամեթոդաբանական հիմքերը, հասարակության և բնության փոխարաբերությունների ձևերը, բնապահպանական իրավունքի աղբյուրները, բնօգտագործման իրավունքի, շրջակա միջավայրի պետական կառավարման, պետական իրավական փորձաքննության, մթնոլորտային օդի իրավական պահպանության, ընդերքի իրավական պահպանության, հողերի իրավական պահպանության, կենդանական աշխարհի իրավական պահպանության հիմնախնդիրները,

Կկարողանա՝ ներկայացնել ՀՀ բնապահպանական օրենսդրության հիմքում ընկած հայեցակարգային մոտեցումները և դրա զարգացման օրինաչափությունները, պարզաբանել բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքը, բնօգտագործման իրավունքը, դրանց իրականացման կարգն ու պայմանները, ներկայացնել բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության պետական կառավարման իրավական հիմքերը, բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության կազմակերպաիրավական գործիքները:

Կտիրապետի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և էկոլոգիական փորձաքննության կարգի առանձնահատկություններին, բնապահպանական իրավունքի կարգավորման առարկան կազմող առանձին հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Բնապահպանական իրավունքը որպես իրավունքի ճյուղ: **Թեմա 2.** Բնապահպանական իրավունքի աղբյուրները: **Թեմա 3.** Բնապահպանական իրավահարաբերություններ: **Թեմա 4.** Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և Էկոլոգիական փորձաքննության իրավական հիմքեր: **Թեմա 5.** Մթնոլորտային օդի պահպանության իրավական կարգավորումը: **Թեմա 6.** Բնության հատուկ պահպանվող տարածքների իրավական կարգավիճակը: **Թեմա 7.** Ընդերքի օգտագործման և պահպանության իրավական կարգավորումը: **Թեմա 8.** Կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության իրավական կարգավորումը: **Թեմա 9.** Անտառների օգտագործման և պահպանության իրավական կարգավորումը : **Թեմա 10.** Ջրերի օգտագործման և պահպանության իրավական կարգավորումը: **Թեմա 13.** Հողերի օգտագործման և պահպանության իրավական կարգավորումը:Տեսակները

21/Բ13 – Կրիմինալոգիա (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ հանցավորության, հատկանիշների, պատճառների ու պայմանների, ինչպես նաև կանխման միջոցների մասին, ապահովել հանցավորության՝ որպես հանրորեն վտանգավոր, զանգվածային սոցիալ-իրավական երևույթի և առանձին հանցատեսակների ուսումնասիրությունը՝ իր պատճառա-նախազգուշական ասպեկտներով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ կրիմինալոգիայի՝ որպես հատուկ իրավաբանական գիտության ընդհանուր բնութագիրը, ուսումնասիրման առարկան և մեթոդները, կրիմինալոգիայի ձևավորման և զարգացման փուլերը, հանցավորության հատկանիշները և ցուցանիշները, հանցավորության պատճառները և պայմանները, հանցագործի անձի առանձնահատկությունները, հանցավորության կանխման ընդհանուր և հատուկ միջոցները, անչափահասների և երիտասարդների հանցավորության առանձնահատկությունները, տնտեսական հանցավորության պատճառներն ու պայմանները, կանխման միջոցները, կոռուպցիայի հասկացությունը և դրսևորման ձևերը, կազմակերպված հանցավորության քրեաբանական բնութագիրը, ռեցիդիվային հանցավորության առանձնահատկությունները, բռնի հանցավորության վիճակի, կառուցվածքի, շարժընթացի ցուցանիշները, այլ հանցատեսակների քրեաբանական հատկանիշները:

Կկարողանա՝ վերլուծել հանցավորության քանակական ցուցանիշները, բնութագրել հանցավորության որակական ցուցանիշները, բացահայտել հանցագործի անձի սոցիալ-ժողովրդագրական, սոցիալ-հոգեբանական և սոցիալ-դերային հատկանիշները, ներկայացնել կրիմինոլոգիական հետազոտությունների մեթոդները, պարզաբանել կենսական իրավիճակների և անձի ձևավորման անբարենպաստ պայմանների դերը հանցավոր վարքագծի մեխանիզմում, դասակարգել հանցավորության նախազգուշացման ընդհանուր և հատուկ միջոցները, վերլուծել անչափահաս և երիտասարդ հանցագործների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, բնութագրել ստվերային տնտեսության հիմնական դրսևորումները, դասակարգել տնտեսական հանցավորության կանխման ընդհանուր և հատուկ միջոցները, նկարագրել ահաբեկչության

քրեաբանական հատկանիշները, ներկայացնել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի իրավական, քաղաքական, տնտեսական, կազմակերպական և այլ միջոցները, վերլուծել ռեցիդիվիստի անձի սոցիալ-դերային, սոցիալ-ժողովրդագրական և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, ուսումնասիրել այլ հանցատեսակների քրեաբանական առանձնահատկությունները, բնութագրել հանցավորության դեմ պայքարի ընդհանուր և հատուկ միջոցները:

Կտիրապետի՝ կրիմինալոգիայի ուսումնասիրման մեթոդաբանությունը, հանցավորության վիճակը, մակարդակը և շարժընթացը հաշվարկելու մեթոդներին, հանցավորության կառուցվածքը և շարժընթացը բացահայտելու ձևերին ու միջոցներին, հանցագործի անձի քրեաբանական նկարագիրը կազմելու հմտություններին, կրիմինոլոգիական կանխատեսման և պլանավորման ձևերին, հանցագործությունների առանձին տեսակների քրեաբանական բնութագրման և դասակարգման մեթոդներին, առանձին հանցատեսակների կրիմինոլոգիական բնութագիրը կազմելու միջոցներին, հանցագործների առանձին խմբերի սոցիալ-հոգեբանական նկարագիրը կազմելու հնարքներին, հանցատեսակների դեմ պայքարի համարժեք միջոցների համակարգ մշակելու մեթոդներին, համեմատական կրիմինոլոգիայի զարգացման հիմնական միտումներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կրիմինալոգիայի հասկացությունը, ուսումնասիրման առարկան և տեղը մյուս գիտությունների համակարգում: **Թեմա 2.** Կրիմինոլոգիական հետազոտությունների մեթոդիկան: **Թեմա 3.** Հանցավորության հասկացությունը, հատկանիշները, քանակական և որակական ցուցանիշները: **Թեմա 4.** Հանցագործի անձը: **Թեմա 5.** Կոնկրետ հանցագործության պատճառներն ու պայմանները: **Թեմա 6.** Հանցավորության պատճառները և պայմանները: **Թեմա 7.** Հանցավորության նախազգուշացումը /կանխում/: **Թեմա 8.** Կրիմինոլոգիական կանխատեսում: **Թեմա 9.** Անչափահասների և երիտասարդների հանցավորություն: **Թեմա 10.** Տնտեսական և պաշտոնական հանցագործություններ: **Թեմա 11.** Ռեցիդիվային հանցավորության կրիմինոլոգիական բնութագիրը: **Թեմա 12.** Բռնի հանցավորության կրիմինոլոգիական բնութագիրը: **Թեմա 13.** Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ: **Թեմա 14.** Անզգույշ հանցագործությունների կրիմինոլոգիական բնութագիրը: **Թեմա 15.** Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների կրիմինոլոգիական բնութագիրը: **Թեմա 16.** Ահաբեկչության քրեաիրավական և քրեաբանակն բնութագիրը: **Թեմա 17.** Կոռուպցիայի առաջացման պատճառները և դրա դեմ պայքարի հիմնական միջոցներն ու ուղղությունները:

Թեմա 18. Կազմակերպված հանցավորության կրիմինոլոգիական բնութագիրը: **Թեմա 19.** Կիբերհանցավորությունը՝ որպես հանցավորության հատուկ տեսակ: **Թեմա 20.** Ցեղասպանության՝ որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործության հասկացությունը և կանխարգելումը : **Թեմա 21.** Համեմատական կրիմինալոգիա:

21/Բ23 – Միջազգային մասնավոր իրավունք - (5 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար)

8-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել օտարերկրյա տարրով ծանրաբեռնված քաղաքացիաիրավական բնույթի հարաբերությունների կոլիզիոն և մատերիալ իրավական կանոնակարգման խնդիրներին, հնարավորություն տալ ամբողջական պատկերացում կազմել ժամանակակից միջազգային մասնավոր շրջանառության իրավական կարգավորման շուրջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ օտարերկրյա տարրով ծանրաբեռնված քաղաքացիական, ընտանեկան և աշխատանքային իրավահարաբերությունների կոլիզիոն և մատերիալ իրավական կարգավորման խնդիրները, ինչպես նաև դրանց հետ սերտորեն առնչվող՝ միջազգային քաղաքացիական դատավարության և միջազգային արբիտրաժային կարգով վեճերի
լուծման հարցերը, միջազգային մասնավոր հարաբերությունների հիմնական տեսակները, միջազգային մասնավոր հարաբերությունների կարգավորման մեթոդները, ժամանակակից միջազգային մասնավոր շրջանառության իրավական կարգավորման սկզբունքները:

Կկարողանա՝ բացահայտել կոլիզիոն-իրավական կարգավորման առանձնահատկությունները, վերլուծել միջազգային մասնավոր փոխադրումների, հաշվարկային հարաբերությունների, արտապայմանագրային պարտավորությունների կատարման հիմունքները, պարզաբանել մտավոր սեփականության միջազգային-իրավական պաշտպանության ձևերը, պատկերացնել միջազգային մասնավոր հարաբերությունների սուբյեկտների իրավական կարգավիճակի ընդհանրություններն ու տարբերությունները, ճանաչել օտարերկրյա տարրով ծանրաբեռնված մասնավոր հարաբերությունների միջազգային կոլիզիոն-իրավական կարգավորման աղբյուները և ծանոթանալ դրանց բովանդակությանը, ներկայացնել օտարերկրյա տարրով ծանրաբեռնված մասնավոր

հարաբերությունների միջազգային նյութա-իրավական կարգավորման աղբյուները և ծանոթանալ դրանց բովանդակությանը:

Կտիրապետի՝ միջազգային մասնավոր իրավունքում ժառանգման, ընտանեկան իրավունքի հարցերին, միջազգային աշխատանքային հարաբերությունների հիմունքներին, միջազգային քաղաքացիական դատավարության առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Միջազգային մասնավոր իրավունքի հասկացությունը /միջազգային մասնավոր իրավունքի շրջանառության իրավական կարգավորման խնդիրները/: **Թեմա 2.** Միջազգային մասնավոր իրավունքի կարգավորման առարկան և մեթոդները, միջազգային մասնավոր իրավունքի համակարգը: **Թեմա 3.** Միջազգային մասնավոր իրավունքի հիմնական կարգերը, հատուկ կոլիզիաներ, միջազգային մասնավոր իրավունքի պատմական զարգացումը: **Թեմա 4.** Միջազգային պայմանագրերը՝ որպես միջազգային մասնավոր իրավունքի աղբյուր: **Թեմա 5.** Միջազգային մասնավոր իրավունքի աղբյուրների ընդհանուր բնութագիրը և դասակարգումը: **Թեմա 6.** Ներպետական օրենսդրական ակտերը՝ որպես միջազգային մասնավոր իրավունքի աղբյուր: **Թեմա 7.** Գործարար շրջանառության սովորույթները՝ որպես միջազգային մասնավոր իրավունքի աղբյուր: **Թեմա 8**. Կոլիզիոն նորմերի հասկացությունը, կարևորությունը: **Թեմա 9.** Կոլիզիոն նորմերի կառուցվածքը և կարգավորիչ գործառույթը: **Թեմա 10.** Կոլիզիոն նորմերի տեսակները: **Թեմա 11.** Կոլիզիոն նորմերի կիրառման առանձնահատկությունները, կոլիզիոն նորմերի մեկնաբանումը: **Թեմա 12.** Հետադարձ հղում և հղում երրորդ պետության օրենսդրությանը, օտարերկրյա պետության օրենքի բովանդակության մեկնաբանումը /պարզաբանումը/: **Թեմա 13.** Միջազգային մասնավոր իրավունքի սուբյեկտները /ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավասուբյեկտային կոլիզիոն կարգավորումը, միջազգային մասնավոր իրավահարաբեություններին պետության մասնակցության առանձնահատկությունները/: **Թեմա 14.** Գույքային իրավունքի նկատմամբ կիրառվող իրավունքը և ժառանգման նկատմամբ կիրառվող իրավունքը: **Թեմա 15.** Աշխատանքային հարաբերությունները միջազգային մասնավոր իրավունքում: **Թեմա 16.** Միջազգային ներդրումներ շրջանառությունում: **Թեմա 17.** Պայմանագրային հարաբերությունները: Միջազգային մասնավոր մտավոր սեփականության միջազգային-իրավական պաշտպանությունը: **Թեմա 18.** Ընտանեկան հարաբերությունները միջազգային մասնավոր իրավունքում: **Թեմա 19.** Վնաս պատճառելու և անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքը: **Թեմա 20.** Միջազգային քաղաքացիական դատավարություն և առևտրային արբիտրաժ:

21/Բ47 – Փաստաբանությունը ՀՀ –ում - (4 կրեդիտ)

9-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացը պարտադիր մասնագիտական առարկաների թվին է դասվում և կարևորվում է նրանով, որ ուսանողները ուսումնասիրում և ստանում են գիտելիքներ մարդու իրավունքների պաշտպանության այնպիսի ինստիտուտի մասին, ինչպիսին է փաստաբանական ծառայությունը: Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ ՀՀ փաստաբանների պալատի մասին՝ նրա գործունեության և լիազորությունների, ինչպես նաև փաստաբանի իրավունքների և պարտականությունների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ փաստաբանական գործունեության իրավական և կազմակերպական հիմունքները, փաստաբանության և փաստաբանական գործունեության էությունը, խնդիրները, նպատակը, փաստաբանական էթիկայի խնդիրները, հռետորական արվեստի տրամաբանական հիմունքները, փաստաբանի գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, փաստաբանի մասնակցությունը քրեական և քաղաքացիական դատավարությունում:

Կկարողանա՝ բնորոշել փաստաբանի մասնակցությունը մինչդատական վարույթում, վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում քրեական և քաղաքացիական դատավարությունում, փաստաբանի դերը վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթում, փաստաբանի մասնակցության առանձնահատկությունները տնտեսական բնույթի գործերով, հասկանալ փաստաբանի դերը սահմանադրական դատարանում, ներկայացնել փաստաբանի մասնագիտական գործունեության հիմնական սկզբունքները, ներկայացնել փաստաբանի կողմից հանձնարարության ընդունման և կատարման առանձնահատկությունները, լուսաբանել փաստաբանի վարվելակերպի կանոնները դատարաններում և միմյանց միջև հարաբերություններում:

Կտիրապետի՝ փաստաբանության հիմունքներին, ուսումնասիրման հիմնական մեթոդներին, փաստաբանի կարգավիճակի ձեռքբերման և դադարեցման հիմքերին, խոսակցական միջոցների օգտագործման հոգեբանական տեխնիկային, փաստաբանական ճարտասանությանը, վստահորդի վրա փաստաբանի հոգեբանական ներգործության մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Փաստաբանությունը որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ: **Թեմա 2.** Փաստաբանի իրավական կարգավիճակը: Փաստաբանի գործառույթները, իրավունքները և պարտականությունները: Փաստաբանի կարգավիճակի ձեռքբերման և դադարեցման հիմքերը: **Թեմա 3.** Էթիկայի նորմերը փաստաբանական գործունեությունում: Պաշտպանական ելույթը: **Թեմա 4.** Փաստաբանը քրեական դատավարությունում: Նախաքննության փուլում փաստաբանի մասնակցության ընդհանուր դրույթները: Փաստաբանի մասնակցությունը վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում: **Թեմա 5.** Փաստաբանը քաղաքացիական դատավարությունում: Փաստաբանական գործունեությունը քաղաքացիական դատավարության մինչդատական փուլում: **Թեմա 6.** Փաստաբանի դերը վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթում: **Թեմա 7.** Փաստաբանական գործունեությունը սահմանադրական դատարանում: **Թեմա 8.** Փաստաբանը տնտեսական դատարանում: **Թեմա 9.** Փաստաբանի գործունեությունը մարդու իրավունքների Եվրոպական դատարանում: **Թեմա 10.** Փաստաբանի մտածողության և վարքի հոգեբանական տեխնիկան:

21/Բ22 – Միջազգային մարդասիրական իրավունք - (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել զինված ընդհարումների դեպքում առաջացող հարաբերությունների իրավական կարգավորման վերաբերյալ իմացություն, հաղորդել գիտելիքներ Ժնևյան իրավունքի և Հաագայի իրավունքի հիմնադրույթների, միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքների, պատերազմի ընթացքում գործող կանոնների վերաբերյալ, ապահովել միջազգային մարդասիրական իրավական նորմերի ընկալման, վերլուծության, համեմատության, համադրման, եզրահանգումների կատարման, իրավիճակների ճիշտ գնահատման կարողություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ միջազգային մարդասիրական իրավունքի ձևավորման և զարգացման փուլերը, միջազգային մարդասիրական իրավունքի նպատակները, միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները, Ժնևյան իրավունքի հիմնադրույթները, Հաագայի իրավունքի հիմնադրույթները, զինված ընդհարումների մասնակիցների իրավական կարգավիճակի տարրերը, բռնազավթված տարածքների իրավական ռեժիմի առանձնահատկությունները, պատերազմի ժամանակ չեզոքության կարգավիճակի առանձնահատկությունները, պատերազմական

գործողությունների և պատերազմական վիճակի ավարտի միջազգային-իրավական կարգավորման հիմունքները:

Կկարողանա՝ ներկայացնել միջազգային մարդասիրական իրավունքի աղբյուրները, բացահայտել միջազգային մարդասիրական իրավունքի նպատակները և խնդիրները, դասակարգել միջազգային և ոչ միջազգային զինված ընդհարումները, բնութագրել կոմբատանտների և ոչ կոմբատանտների իրավական կարգավիճակը, վերլուծել ցամաքային, ծովային և օդային պատերազմների առանձնահատկությունները, տարբերակել պատերազմ վարելու թույլատրված և արգելված միջոցներն ու մեթոդները, բնութագրել Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ձևավորման և զարգացման փուլերը, գործունեության սկզբունքները և հիմնական ուղղությունները:

Կտիրապետի՝ վիրավորների, հիվանդների, նավաբեկյալների միջազգային-իրավական պաշտպանության սկզբունքներին, ռազմագերիների միջազգային-իրավական կարգավիճակի առանձնահատկություններին, պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին Ժնևյան կոնվենցիաների հիմնադրույթներին, ցամաքային, ծովային և օդային պատերազմների վարման թույլատրված ու արգելված միջոցներին և մեթոդներին, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի պահպանման, վերահսկողության և պատասխանատվության կիրառման կառուցակարգերին, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի իրացման գործում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հիմնական գործառույթներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Միջազգային մարդասիրական իրավունքի ընդհանուր բնութագիրը: **Թեմա 2.** Միջազգային մարդասիրական իրավունքի համակարգի ծագումն ու զարգացումը: **Թեմա 3.** Միջազգային մարդասիրական իրավունքի բովանդակությունը և աղբյուրները: **Թեմա 4.** Միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները: **Թեմա 5.** Զինված ընդհարումների հասկացությունը և տեսակները: **Թեմա 6.** Զինված ընդհարումների մասնակիցների իրավական կարգավիճակը: **Թեմա 7.** Պատերազմ վարելու միջոցներն ու մեթոդները: **Թեմա 8.** Ծովային և օդային պատերազմների վարման միջոցներն ու մեթոդները: **Թեմա 9.** Ռազմական բռնազավթում (օկուպացիա): **Թեմա 10.** Չեզոքությունը պատերազմի ժամանակ: **Թեմա 11.** Վիրավորների, հիվանդների, նավաբեկյալների և ռազմագերիների միջազգային-իրավական պաշտպանությունը: **Թեմա 12.** Քաղաքացիական բնակչության պաշտպանությունը զինված ընդհարումների ժամանակ: **Թեմա 13.** Պատերազմական գործողությունների և պատերազմական վիճակի ավարտի միջազգային-իրավական կարգավորումը: **Թեմա 14.** Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի պահպանման, վերահսկողության և պատժամիջոցների հարցերը: **Թեմա 15.** Կարմիր

Խաչի միջազգային կոմիտեի դերը միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի իրացման գործում:

3.2.Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ

21/Բ28 – Սահմանադրական վերահսկողություն - (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է բացահայտել սահմանադրական վերահսկողության դերը պետության մեջ սահմանադրական իրավակարգի և օրինականության ապահովման գործընթացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ սահմանադրական վերահսկողության հասկացությունն ու իրականացման ձևերը, սահմանադրական վերահսկողության նպատակներն ու խնդիրները, սահմանադրական վերահսկողության սկզբունքները:

Կկարողանա՝ վերլուծել սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինների կարգավիճակը, դասակարգել սահմանադրական վերահսկողության օբյեկտները, բնութագրել սահմանադրական վերահսկողության եվրոպական և ամերիկյան հայեցակարգերը:

Կտիրապետի՝ սահմանադրական վերահսկողություն իրականացնող սուբյեկտների կազմավորման և գործունեության հիմունքներին, ՀՀ Սահմանադրական դատարանի լիազորությունների իրականացման կառուցակարգին, Սահմանադրական դատարանի կողմից ակտերի ընդունման ընթացակարգին:

Բովանդակությունը.

Թեմա 1. «Սահմանադրական վերահսկողություն» դասընթացի ուսումնասիրման առարկան: **Թեմա 2.** Սահմանադրական վերահսկողության ուսումնասիրման մեթոդաբանական հիմքերը: **Թեմա 3.** «Սահմանադրական վերահսկողություն» դասընթացի կապը մյուս իրավաբանական գիտակարգերի հետ: **Թեմա 4.** Սահմանադրական վերահսկողության հասկացությունը և էությունը: **Թեմա 5.** Սահմանադրական արդարադատությունը որպես սահմանադրական վերահսկողության հատուկ ձև: **Թեմա 6.** Սահմանադրական վերահսկողության ձևերը: **Թեմա 7.** Սահմանադրական վերահսկողության սուբյեկտները և օբյեկտները: **Թեմա 8.** ՀՀ Սահմանադրական դատարանի գործունեության հիմքերը: **Թեմա 9**. ՀՀ Սահմանադրական դատարանի լիազորությունները: **Թեմա 10.** ՀՀ Սահմանադրական դատարանի լիազորություններն իրավական ակտերի սահմանադրականության ապահովման բնագավառում: **Թեմա 11.** ՀՀ Սահմանադրական դատարանի ընդունած ակտերը: **Թեմա 12.** ՀՀ Սահմանադրական դատարանի

լիազորությունները մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: **Թեմա 13.** Սահմանադրական արդարադատությունը՝ ժողովրդավարության ապահովման երաշխիք:

21/Բ27 – Սահմանադրական մշակույթ - (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է բացահայտել սահմանադրական մշակույթի հասկացությունն ու նշանակությունը պետության մեջ սահմանադրական իրավակարգի հաստատման գործընթացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ «մշակույթի», «իրավական մշակույթի» և «սահմանադրական մշակույթի» հասկացություններն ու դրանց փոխառնչությունները, սահմանադրական մշակույթի ձևավորման պատմական նախադրյալները քրիստոնեական շրջանի հայ իրականության մեջ, սահմանադրական մշակույթի դերը իրավական պետության կայացման գործում,

Կկարողանա՝ բացահայտել սահմանադրական մշակույթի զարգացման փուլերը Հայաստանում, վերլուծել սահմանադրական մշակույթի տարրերը, բնութագրել սահմանադրական մշակույթի դերը երկրում սահմանադրականության հաստատման գործում,

Կտիրապետի՝ սահմանադրական մշակույթի իմացաբանական և պատմական հիմունքներին, սահմանադրական մշակույթի և իրավագիտակցության բարձրացման կառուցակարգերին, ՀՀ – ում սահմանադրական շինարարության և սահմանադրական մշակույթի փոխհարաբերությունների հիմունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. «Սահմանադրական մշակույթ» դասընթացի ուսումնասիրման առարկան: **Թեմա 2.** Սահմանադրական մշակույթի ուսումնասիրման մեթոդաբանական հիմքերը: **Թեմա 3.** «Սահմանադրական մշակույթ» դասընթացի կապը մյուս իրավաբանական գիտակարգերի հետ: **Թեմա 4.** Սահմանադրական մշակույթի հասկացությունը և էությունը: **Թեմա 5.** Սահմանադրական մշակույթի ձևավորման նախադրյալները: **Թեմա 6.** Սահմանադրական մշակույթի պատմական ակունքները Հայաստանում: **Թեմա 7.** Հայոց ազգային եկեղեցական ժողովների սահմանադիր դերը: **Թեմա 8.** Իրավական մշակույթ և սահմանադրական մշակույթ: **Թեմա 9.** Սահմանադրական մշակույթ և իրավական գիտակցություն: **Թեմա 10.** Սահմանադրական մշակույթ և իրավական

դաստիարակություն: **Թեմա 11.** Սահմանադրական մշակույթը Հայաստանի երրորդ Հանրապետությունում: **Թեմա 12.** Սահմանադրական մշակույթը որպես ժողովրդավարության ապահովման երաշխիք:

21/Բ20 –Մարդու իրավունքի հիմունքներ - (4 կրեդիտ)

Շաբաթական 10 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

8-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ մարդու իրավունքների հասկացությունն ու էությունը, մարդու իրավունքների դասակարգման հիմքերը, մարդու հիմնական իրավունքները, ազատություններն ու պարտականությունները:

Կկարողանա՝ վերլուծել մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների դասակարգման հիմքմերը, բնութագրել մարդու և քաղաքացու իրավունքները, բնորոշել մարդու իրավուքների երաշխիքների արդի միտումները:

Կտիրապետի՝ մարդու իրավունքների հասկացությանն ու դասակարգման հիմքներին, մարդու իրավունքներին վերաբերող հիմնական իրավական ակտերի առանձնահատկություններին, մարդու իրավունքների իրավաքաղաքական զարգացման հիմնախնդիրներին:

21/Բ8 –Ընտանեկան իրավունք - (4 կրեդիտ)

Շաբաթական 10 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

8-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդելու հիմնարար գիտելիքներ մարդու իրավունքների, ազատությունների և պարտականությունների մասին, մադու իրավունքների հանրաչանաճ նորմերի՝ միջազգային իրավական հիմքմերի մասին, ինչպես նաև ուսումնասիրել մարդու իրավունքների հիմնական խնդիրները հին և միջնադարյան հայ իրավաքաղաքական հուշարձաններում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կիմանա՝ ընտանեկան իրավահարաբերությունների էությունը և բովանդակությունը, ամուսնության կնքման կարգը ու պայմանները, ամուսնության դադարման և անվավերության էությունը, ընտանեկան իրավահարաբերությունները, ամուսնալուծության պայմանները և կարգը, ամուսնությունն անվավեր ճանաչելու պայմանները և կարգը, ծնողների զավակների հարաբերությունների իրավական կարգավորումը, ամուսինների գույքային և ալիմենտային հարաբերությունների իրավական կարգավորումը:

Կկարողանա՝ տարբերակել ամուսինների անձնական և գույքային փոխհարաբերությունները, ներկայացնել ամուսնական պայմանագրի բովանդակությունը և պայմանները, ձևակերպել գույքային և ալիմենտային պահանջների մասին հայցադիմումներ, կազմել ծնողական իրավունքից զրկելու մասին հայցադիմում, կիրառել ստացված գիտելիքները ամուսնալուծության դեպքում, լուսաբանել որդեգրման էությունը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերման կարգը և տեղավորման ձևերը:

Կտիրապետի՝ ամուսնական, ալիմենտային, որդեգրման հարաբերությունները միջնորդավորող փաստաթղթերի կազմման ձևերին, ամուսնության և ամուսնալուծության ժամանակ առաջացած խնդիրները լուծելու եղանակներին, ալիմենտային պարտավորությունների էությանը, որդեգրման ժամանակ առաջացած խնդիրները լուծելու պայմաններին և կարգին, երեխաների իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրների լուծմանը:

Բովանդակությունը

Թեմա 1. Ընդհանուր դրույթներ: **Թեմա 2.** Ամուսնության կնքումը և դադարումը: **Թեմա 3.** Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները: **Թեմա 4.** Ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները: **Թեմա 5.** Ընտանիքի անդամների ալիմենտային պարտավորությունները: **Թեմա 6.** Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դաստիարակության ձևերը: **Թեմա 7.** Ընտանեկան օրենսդրության կիրառումը օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասնակցությամբ ընտանեկան հարաբերություններին:

4.Կրթական այլ մոդուլներ

Նախաավարտական պրակտիկա - (8 կրեդիտ)

8-րդ կիսամյակ, քննություն

Պրակտիկայի նպատակը.

Պրակտիկայի նպատակն է ուսանողներին ծանոթացնել դատարանների կառուցվածքին, գրասենյակի աշխատանքին, գործերի քննության նախապատրաստմանը և դատավարություններին, դատավարական փաստաթղթերի նախագծեր կազմելուն:

Կրթական արդյունքները.

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ տարբեր կազմակերպաիրավական ձև ունեցող հաստատությունների իրավաբանական ծառայությունների կառուցվածքն ու գործառույթները, գործունեության նորմատիվ իրավական հիմքերն ու ուղղությունները, դատախազության աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի գործունեության սկզբունքները, վերաքննիչ և վճռաբեկ ատյանի դատարանների գործունեության առանձնահատկությունները, իրավապահ մարմիններում գործավարության կարգը,

Կկարողանա՝ կազմել իրավական փաստաթղթեր, ընդունել հայտարարություններ, դիմումներ, կատարել քաղաքացիների ընդունելություն, մասնակցել քննչական անհետաձգելի գործողությունների կատարմանը, հանդես գալ որպես ընթերակա, իրականացնել փաստաթղթերի գրանցում մուտքի և ելքի մատյաններում,

Կտիրապետի՝ իրավապահ մարմիններում աշխատանքի առանձնահատկություններին, պետական մարմիններում իրավական ակտերի նախագծերի մշակման հմտություններին, դատավարական փաստաթղթերի կազմման սկզբունքներին, ոչ պետական մարմինների ու կազմակերպությունների գործունեության իրավական կարգավորման կառուցակարգերին, փաստաթղթաշրջանառության ու գործավարության հիմունքներին, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների աշխատանքի առանձնահատկություններին, նոտարական գրասենյակի գործունեության կարգին, արդարադատության համակարգի գործունեության կազմակերպման ձևերին ու մեթոդներին, տարբեր կազմակերպաիրավական ձև ունեցող հաստատությունների գործունեության իրավական հիմունքներին:

«Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների քարտեզագրումը՝ ըստ դասընթացների վերջնարդյունքների

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի կրեդիտը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները															
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6
Հայոց լեզու և խոսքի մշակույթ	3+3											+	+		+		
Ռուսաց լեզու	3+3											+	+		+		
Օտար լեզու	3+3											+	+		+		
Հայոց պատմության հիմնահարցեր	3+3												+		+		
Փիլիսոփայության հիմունքներ	3												+		+		
Տնտեսագիտության հիմունքներ	2												+		+		
Տրամաբանության հիմունքներ	3									+			+		+		
Հետազոտության մեթոդաբանություն	3										+						
Կրոնագիտության հիմունքներ	3														+		
Ֆիզիկական դաստիարակություն	0															+	
Մշակութաբանության հիմունքներ	2														+		
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	3													+			
Սոցիոլոգիա	3														+		
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3															+	
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	3															+	

Պետության և իրավունքի տեսություն	5+5	+	+														+
Հայաստանի պետության և իրավունքի պատմություն	3	+	+														
Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն	4	+	+														
Հռոմեական մասնավոր իրավունքի հիմունքներ	2	+	+														
Արդարադատության և իրավապահ մարմինները ՀՀ-ում	5	+			+	+		+	+	+							
ՀՀ սահմանադրական իրավունք	5+5	+		+	+	+			+	+	+		+				
Կուրսային աշխատանք /ՀՀ սահմանադրական իրավունք/	1	+	+								+	+					
Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք	+	+		+	+				+	+							
Իրավական ուսմունքների պատմություն	4	+															
Քաղաքացիական իրավունք	5+5+5+6	+	+	+	+	+	+	+	+								+
Քաղաքացիական դատավարություն	5+5	+	+		+	+	+	+	+	+							
Քրեական իրավունք	5+5+5+6	+	+	+	+	+	+	+	+								+
Կուրսային աշխատանք /Քրեական իրավունք կամ Քաղաքացիական իրավունք/	1	+	+								+	+		+			
Քրեական դատավարություն	5+5	+	+		+	+	+	+	+	+							
Վարչական իրավունք	2+4	+			+				+				+				
Վարչական դատավարություն	3																

Կրիմինալիստիկա	6	+	+		+				+	+							
Աշխատանքային իրավունք	5	+	+		+	+			+	+							
Ֆինանսական իրավունք	3	+	+						+								
Միջազգային իրավունք	5	+	+		+		+		+	+							
Եվրոպական իրավունք	3	+	+						+	+							
Ընդհանուր հոգեբանություն	2												+		+		
Իրավաբանական հոգեբանություն	2	+							+								
Դատական հոգեբուժություն	2	+							+								
Դատական բժշկություն	2	+							+								
Ընտանեկան իրավունք	2				+		+		+								
Քրեակատարողական իրավունք	4				+				+								
ՀՀ մունիցիպալ իրավունք	2	+							+								
Բնապահպանական իրավունք	5	+			+	+			+								
Կրիմինալոգիա	5	+				+			+	+							
Փաստաբանությունը ՀՀ-ում	2	+			+	+	+		+	+			+				
Միջազգային մասնավոր իրավունք	5	+			+	+	+		+								
Միջազգային մարդասիրական իրավունք	4	+			+	+	+		+								
Սահմանադրական վերահսկողություն	2	+			+				+								
Սահմանադրական մշակույթ	2	+															

Մարդու իրավունքի հիմունքներ	4																
Ընտանեկան իրավունք	4				+		+		+								
Նախաավարտական պրակտիկա	8	+	+	+	+	+	+	+	+	+		+	+	+			+
Ամփոփիչ ատեստավորում՝ ավարտական աշխատանքի պաշտպանություն	8	+	+	+	+	+	+	+	+	+		+	+	+			+